



ՄԻՈՒ

ՄԻՈՒ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱԴԵՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ

ՀԹ. ՏԱՐԻ - ՆՈՐ ՇՐՋԱՆ

2005
2005

ԱՊՐԻԼ - ՄԱՅԻՍ - ՅՈՒՆԻՍ
APRIL - MAY - JUNE

ԹԻՒ 4-5-6
No. 4-5-6

S I O N

VOL. 79

A MONTHLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY
OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

Proprietor: His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem



St. James Press, Jerusalem



138-2005

21642-02

2005

ՇԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱՏԵՐ



SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՊԱՏԳԱՍԸ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2005 թ. մարտի 27)

«Ես իսկ եմ Յարութիւն և կեանք» (Յովհ. ժԱ 25)

«Ես եկի, զի զկեանս ունիցին, և առաւել ևս ունիցին» (Յովհ. ժ 10):

Սիրելի հաւատացեալ ժողովուրդ.

Այսօր մեր եկեղեցիների Սուրբ Խորաններից աստուածային մեծ շնորհի աւետիսն է հնչում՝ «Քրիստոս յարեալ ի մեռելոց, մահուամբ գմահ կոխեաց և Յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգևեաց»:

Միաշաբաթ էր, խաչելութիւնից երեք օր անց, երբ հրաշքը եղաւ՝ յարութիւն առաւ Քրիստոս: Այգալոյսի հետ յարութեան ու կեանքի խորհուրդը բացուեց աշխարհին: Հաւատը շողաց տագնապած ու սրտաբեկ հոգիներին Յիսուսի աշակերտների և հետևորդների, ովքեր իրենց խաչուած Վարդապետին գերեզման դնելուց յետոյ ամեն բան աւարտուած էին համարում: Նրանք լսել էին կենարար խօսքը Յիսուսի, ականատես էին եղել, թէ ինչպէս հիւանդները բժշկուում են, մեռեալները՝ կեանք առնում և իրենց սրտի ու հոգու ամենաջինջ զգացումով Վարդապետի անձի մէջ ճանաչել էին Փրկչին. ու այդժամ, երբ դատարկ էր Նրա գերեզմանը, երբ հնչել էր յարութեան հրեշտակածայն աւետիսը, յուսալքուած նրանց հոգիներին փայլատակեց իմաստը Տիրոջ խօսքերի՝ «Ես իսկ եմ Յարութիւն և կեանք», «Ես եկի, զի զկեանս ունիցին, և առաւել ևս ունիցին»:

Յարուցեալ է Քրիստոս: Խաչի վրայ մեղքը քաւուած է, մահուան կապանքների հետ փշրուել են անդարձ յուսահատութիւնն ու երկիւղը, գերեզմանից կեանքն է ճառագում, և փայլում է փրկութեան ու անմահութեան յաղթանակած յոյսը: Աստուած է սքանչելատես փառաւորեալ, և մարդն է փառաւորուում, քանզի Քրիստոս խաչը յանձն առաւ և յարութիւն առաւ, որ մարդկային մեղքով վնասուած կեանքը նորոգուի և հաստատուի իր նպատակի, դէպի Աստուած իր ճշմարիտ ընթացքի մէջ: Խաղաղ և արդար աշխարհի սիրով եկաւ Քրիստոս, Աստուծոյ հետ հաշտ աշխարհի, որպէսզի այն, ինչ գործում է մարդը, ինչ ստեղծում է մարդը, ի սէր կեանքի լինի, բարին ու բարիքը լինի: Երկնային Հօր Կամքի առջև որդիական հնազանդութեան կատարեալ օրինակը բերեց Քրիստոս, մարդու բարձրագոյն ծգտումը հռչակեց Աստուծոյ նախախնամող, փրկարար Կամքի ընտրութիւնը:

Արդարև, սիրելիներ, Աստուծոյ Կամքի ընտրութեամբ մարդկութիւնը պիտի կարողանայ մերժել ու բացառել Տէր-Զօր և Զոլոքոստ, մերժել ու բացառել Սեպտեմբեր 11 և Բեսլան, տեսնել պատերազմներից ու բռնութիւններից գերծանապարհները և գտնել ազգերի միջև եղբայրութեան արդար ու լուսազարդ ուղիները: Յոյսն է ապրում այդ ճանապարհներին, կեանքի, առաջընթացի, ապագայի յոյսը: Այսօր և միշտ մարդու հնարաւորութիւնները, ընտրութիւնն ու որոշումը ուղղուած պիտի լինեն հոգալու աշխարհի ու մարդկանց մասին, ինչպէս Արարչի Զայրական խնամքն է արարչագործութեան հանդէպ: Խաչեալ և Յարուցեալ Փրկչի հետ գործակիցներ ենք փրկագործութեան, որով և ունենք կեանք և առաւել ևս կեանք:

Փառք Բարձրեալին, որ շատ ազգերի կողքին մեր ժողովրդին նոյնպէս պարգուեց աստուածային փրկարար շնորհի լոյսը: Անդարձ հաւատաց մեր ժողովուրդը Քրիստոսի Յարութեան գօրութեանը: Զայ կեանքը հաց ու զինով է թաթախուն, հայոց հողը՝ վանք ու խաչքարով ծաղկուն: Աղօթքն է հայի խօսքը, որ երկինք է բարձրացել Խոր Վիրապի մահուան գուբից, Մաշտոցեան Գրով մատեան դարձել, դարձել Նարեկայ սրբի երկնամերձ աղերս ու նահատակների սուրբ վկայութիւն: Յարութեան շողակաթ լոյսով հաստատուած Սուրբ Էջմիածինն է հայութեան հոգին՝ պատմութեան մէջ դարից դար, աւերներից ու մահերից վերածնունդ հոգին: Մեր ժողովուրդը չի տեսել Քրիստոսի դատարկ գերեզմանը, բայց Քրիստոսի հետ բազմիցս տեսել է իր համար փորուած գերեզմանների դատարկութիւնը և Քրիստոսի հետ յաղթութեան փառքի պսակներ հիւսել: Զայ մարդը չի կարող չհաւատալ Քրիստոսի Յարութեանը: Յարութեան մասին են խօսում մեր պատմութիւնն ու ներկան: Քրիստոսի հետ Մեծ Եղեռնի գողգոթան անցանք և մեր պատմութեան ամենաողբերգական ժամանակը դարձրեցինք յաղթանակի ժամանակ: Եղեռնահար, արնածոր մեր ժողովուրդը հերոսական մաքառումով ծնունդ տուեց իր նոր պետականութեանը: Սոխիքներից յառնեց Զայաստանի Առաջին Զանրապետութիւնը՝ ի վկայութիւն մեր ժողովրդի անմեռ ձգտումի հայոց պետականութեան յարատւ գոյութեան:

Յարուցեալ է Քրիստոս, յարուցեալ է ազգս հայոց: Եւ Լուսաւորչի Կանթեղի լոյսն է մեր ճանապարհը, հաւատով անմար, հաւատով պայծառ, հաւատով տեսանելի լոյսը, որ պիտի առաջնորդի ազատ, միացեալ նոր կեանքը մեր Մայր Զայրենիքի ու հայ Սփիւռքի: Մեր հայրերի հաւատաւոր օրինակով այսօր էլ պիտի յաղթահարենք դժուարութիւնները, Զայաստանի և Արցախի, ազգային-եկեղեցական մեր կեանքի առջև ծառացած բոլոր խնդիրները:

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ, Յարուցեալ Քրիստոս երբ յայտնուեց իր աշակերտներին, երանի տուեց նրանց, ովքեր առանց տեսնելու կը հաւատան Իր Յարութեանը: Երանին մեզ է ուղղուած: Զատիկ է այսօր, նոր կեանքի արշալոյս, աստուածամերձ կեանքի հրաւեր՝ անցաւոր ժամանակի մէջ, նիւթականից դուրս տեսնել Աստուծոյ նախախնամող սէրը, հաւատալ Յիսուսի յարուցեալ գօրութեանը և փրկչական առաքելութեանը: Զաւատն է զատկական տօնի պատգամը: Զաւատով է սկիզբ առնում Փրկչի հետ մեր յարուցեալ կեանքը, հաւատով զօրանում ու արգասաւորուում: Զաւատով անձնուիրումը դառնում է բնական, մերձաւորի հանդէպ սէրը՝ երջանկութեան և ուրախութեան ակունք: Յարութեան խորախորհուրդ հրաշքն է այս, միշտ դէպի վեր, դէպի երկնայինը, ճշմարիտը, արդարն ու բարին:

Փրկչի Յարութեան հրաշածին շողերից թող ջերմանան այսօր մեր հոգիները, լոյս առնեն առաւել ու յոյս և հաւատով զօրանան: Մեր հաւատը թող գծի մարդկային մեր կատարելութեան ճանապարհը և լուսաւորի մեր Հայրենիքի, մեր ժողովրդի ու եկեղեցու վերածնուած նոր կեանքի ուղին: Ժողովուրդ հայոց, հաւատիդ լոյսով կեանքդ դարձրու աստուածփառաբանութիւն, որ գործերիդ մէջ սրտիդ զարկը տրոփի, սերդ շողայ, արդարը, ճշմարիտը, բարին ընտրելու կամքդ յաղթանակի: Այնտեղ, ուր Տէրն է, կենդանի ջրերի գետեր պիտի բխեն՝ համաձայն Աստուծոյ և մեր Տիրոջ ու Փրկչի կենսապարզ Կամքի: Թող մեր միջոցով հրաշագործ Փրկիչ Տէրը բժշկի, ամոքի ու սփռի, շէնացնի ու կեանք պարգևի, առաւել կեանք՝ մեր հողին, խաղաղութեան, ազատութեան, արդարութեան մեր երազներին ու իղծերին:

Յարութեան սուրբ աւետիսով ողջունում ենք ձեզ, սիրելի հաւատացեալներ ի հայրենիս և ի սփիւռս, օրհնում ենք ձեր կեանքն ու բարի գործերը: Թող Յարութեան շնորհները առատօրէն իջնեն ձեր հոգիներին, զօրացնեն ձեր հաւատը, աւելի լոյս տան ձեր մտքին, աւելի ուժ՝ ձեր բազուկներին, աւելի սէր՝ ձեր սրտերին: Սիրեցէք միմեանց, մեր Սուրբ եկեղեցին ու Սուրբ Հայրենիքը՝ Հայաստանն ու Արցախը:

Յարութեան խնդութեամբ ողջոյն ենք յղում Առաքելական մեր Սուրբ եկեղեցու Նուիրապետական Աթոռների Գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆեանին և մեր եկեղեցու ուխտապահ ողջ հոգևոր դասին:

Ի Քրիստոս սիրով ողջունում ենք Քոյր եկեղեցիների հոգևոր Պետերին՝ հայցելով Փրկչի առատ շնորհները Տիրախնամ նրանց հօտին:

Մեր ողջոյնն ենք բերում Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Տիար Ռոբերտ Քոչարեանին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Նախագահ Տիար Արկաղի Ղուկասեանին, հայոց պետական ողջ աւագանուն, Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ղեկավարներին ու ներկայացուցիչներին:

Չատկական այս սուրբ առաւօտ Յարուցեալ մեր Փրկչի Իջման Սուրբ Մեղանի առջև աղօթք ենք բարձրացնում, որ Աստուած հայոց հողը միշտ ազատ ու խաղաղ պահպանի, բարիքով ու ծաղկունքով լեցուն: Հայցում ենք, որ Տէրը մեր Մայր Հայրենիքում և աշխարհի բոլոր կողմերում մեր ժողովրդին պահպանի մէկ ու անբաժան, սիրով միաբան, մեր սուրբ հաւատքով, մեր արժէքներով ու ժառանգութեամբ, մեր արդար իղծերի տեսիլքներով:

Թող Յարուցեալ Քրիստոս Իր ողորմութեան ու շնորհի ներքոյ պահպանի աշխարհը համայն անվրդով ու խաղաղ, ազգերը՝ եղբայրութեան մէջ, մարդկանց՝ սիրով, յոյսով ու հաւատով: Ամեն:

*Քրիստոս յարեալ ի մեռելոց
Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի*

ԿՐՈՆԱԿԱՆ

ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԻ ԿՐԿՆԱԿ ՅԱՏԿԱՒՈՐՈՒՄՆԵՐԸ

(Ե. Կիրակի Յիսնակոյց)

(երբ. Գ. 16- ե 10)

Որպէս զի կրօնի պաշտօնեան կարող ըլլայ նշմարտապէս գործադրել ինչ որ պահանջն է իր կոչումին, պէտք է որ իր գիտակցութիւնը տեսականապէս լուսաւորուած մնայ ինչպէս Աստուծոյ՝ նոյնպէս եւ մարդոց հետ իրական յարաբերութեան մը կենդանի զգացումովը:

Քրիստոս է գերագոյն եւ անփոխարինելի միակ յարացոյցը, որմէ՝ պէտք է հոգեւորականը ընդունի իր պաշտօնի եւ ասպարէզին ըմբռնումը իր մէջ խորունկցնող եւ տարածող ներշնչումը: Անոր անձին, կեանքին եւ գործունէութեան խորհուրդն է որ հետզհետէ պիտի բացատրէ իրեն իր պաշտօնին իսկական բնոյթը եւ արժէքը, եւ ընէ իրեն հարկաւոր թելադրութիւններ, իր ասպարէզին ստոյգ եւ բարոյ՝ արդիւնաւորման համար:

Արդ, հաւատքի ներդժ մտասեւեռումով Քրիստոսի փրկագործական նկարագրին յառած նայուածքը Անոր վրայ ամենէն առաջ պիտի տեսնէ սա երկու սրտառուչ գիծերը, Որդիութիւն եւ Քահանայութիւն, որոնք երկեակ հիմքերն են իր երկրաւոր կեանքին:

Իշխանութիւնը, այսինքն հեղինակաւոր այն ազդուութիւնը, որով Անիկա կը խօսէր իր ժամանակակիցներուն, անոնց վրայէն Իր պատգամը ուղղելով նոյն ատեն դէպի դարբերուն մշտնջենաւորեալ յաջորդութիւնը, բարձրութիւններէ ցողուած լոյսեր նշուող Իր բոլոր նայուածքը, որով գիտէր խորագնեկ խիղճըրը եւ հետագօտել իրողութեանց պատեհական հանգոյցները, Իր աստեւոր կեանքին հակընդդէմ փորձառութիւններուն միջոցին զգացած մեծ ինքնավստահութիւնը վերջապէս, ո՛հ, այս ամէնը արդիւնքն էին Իր որդիութեանը:

Որդի էր Աստուծոյ, չէր կրնար չունենալ, ինչպէս խօսքը՝ խորհուրդին, նոյնպէս եւ Ինք՝ Հօրը Իր մէջ ներկայութեան հզօր ներգործութիւնը:

Պարծեալ, խորապէս կարեկից այն գուրքը, որով աստուածայնօրէն կը վշտակրէր մարդուն, մեղքին աւերէն անոր մէջ պատնառուած տառապանքին համար, գերերկրային անհուն սիրոյ մը միայն ծնունդ այն ճիգը՝ զոր այնքան հրաշալի կերպով արդիւնագործեց, որպէս զի մահկանացու սիրտերուն խորը չը մարի բնաւ փրկութեան յոյսին նրազը, եւ միևնչեւ ի մահ դիւցազնացուց նուիրումի այն ոգին, որ, խանձարուրէն միևնչեւ կախողանի փայտը, յինկյութեան պատնառ մնաց իր մարդկայութեան, այն ամէնը բահանալական կոչումին արգասիքն էին Իր մէջ:

Որովհետեւ բահանալ էր, Իր բաւարար պաշտօնին պսակը պիտի ըլլար գոհողութիւնը:

Որդիութիւն, այսինքն Աստուծոյ հետ մշտական եւ կենդանի յարաբերութեան կապի մը գիտակցութիւնը, եւ Քահանայութիւն, այսինքն մեղքէն մոլորած հոգին ուղղելու համար ստանձնուած նուիրական պարտականութեան մը զգացումը: Այս երկուքն էին Յիսուսի կոչումին երկու կողմերը, յաւաւ անբաժան իրարմէ: Քրիստոսի հոգիին մէջ որդիութիւնը անանջատօրէն օղակուած էր ծառայութեան հետ, ինչպէս, Իր անձին մէջ, աստուածային բնութիւնը՝ մարդկայինին հետ, յարակայ այլ անշփոթ միաւորութեամբ:

Իբրեւ Աստուծոյ անարատ որդին է որ զգեցած էր գոհին բահանալական պատմունանը, եւ իբրեւ մեծ բահանալապետ էր որ կը ցուցնէր Աստուծոյ սէրը

մարդկային մեղաց հետ իր անխառն կցորդութեանը մէջ:

Ամէն հոգեւորական, իր կեանքին եւ գործունէութեան ամէն մէկ վայրկեանին մէջ, իր աչքին առջեւ եւ հոգւոյն մէջ պէտք է զգայ միշտ այս խօսուն եւ վսեմ պատկերը, որպէս զի Քրիստոսի մտածումը կարենայ իր մէջ ծնիլ եւ կազմել Աստուծոյ հետ որդիութեան իղձի եւ մարդոց հանդէպ փափանջութեան ուխտի հոգեկան ներքին այն կեանքը, որ ոյժն է ու խարխիւր կրօնական ասպարէզին:

Առանց այն հաւատքին՝ թէ իր մէջ բարոյական զօրութեան մը սերընդագործող սկիզբը կայ, եւ առանց նոյն ատեն սիրոյ այն խորապէս բարի զգացումին, որ զինքը մշտապէս հաղորդ պիտի պահէ մարդկային տառապանքին հետ, անկարելի է որ փափանջ երկրի վրայ իրագործէ իր կոչումը, որ չէ այլ ինչ՝ բայց եթէ իր բոլոր կարիքներովը մարդը ներկայացնել Աստուծոյ առջեւ, եւ զԱստուծոյ, իր բովանդակ կատարելութեամբը, մարդոց առջեւ:

Այդ հաւատքին գիտակցութիւնը եւ այդ սիրոյն հրաշքն է միայն որ պիտի պատրաստեն եւ զօրացնեն զինքը իր պարտականութեան լրիւ կատարումին, որդիաբար մուտք գործելու համար յաւիտեան կանխին անմիջական ներկայութեանը մէջ, ի սրբութիւն սրբութեանց, եւ փափանջօրէն ծառայելու համար մարդկային կարեաց տանարին մէջ:

«Դիտեցէ՛ք, կ'ըսէ սուրբն Բարսեղ, թէ փափանջութեան պատիւը ոչ թէ անմեղ հրեշտակաց վստահութեամբ այլ մեղանշական մարդոց, որպէս զի, ինչպէս իրենք կը յուսան թողութեան շնորհաց, կարենան ուրիշներուն եւս ներշնչել նոյն յոյսը»: Հոգեւորականին ամենէն կարեւոր յատկանիշներէն մին պէտք է լինի արդարեւ մարդկային թշուառութեանց -- հոգեկանին մանաւանդ -- համար զգայուն սիրտ. պէտք է կարենայ բաւականապէս

կարեկից (= «չափով չարչարակից») ըլլալ տգիտութեան խաւարին մէջ եւ մոլորանքի նամբաներուն վրայ խարխաբող հոգիներուն. ա՛յնպէս ցանկալու եւ ջանալու համար անոնց ազատումին ինչպէս պիտի խսկապէս ցանկար ու ջանար իր կանգնումին համար:

Վիշտն է բուն ուսուցիչը. չկայ աւելի լուրջ փորձառութիւն քան այն գործը ստանանք ցաւերու մէջ եւ նեղութեանց միջոցաւ: Կրօնի պաշտօնեան մարդկային տառապանքին մէջն է որ պիտի գտնէ բարոյականի մեծագոյն դասը:

Յոյց տալու համար մեզի թէ որքան աստուածային է այդ դասը, Առաքելը ինքզինքին թոյլ կու տայ ճշմարտագանգութեան (paradoxe) սփանջելի պատկերով մը հասկցնել մեզի թէ ինք՝ Փրկիչն իսկ իր մարմինին մէջ կրուած մարդկային տառապանքներէն է որ ստրկեցաւ իր փրկագործական պարտականութեան հնազանդելու հարկը, եւ այդ կերպով միայն է որ արդիւնաւորեց իր սիրոյն առջեւ խոնարհող հոգիներուն յաւիտեանական փրկութիւնը, որ լրումն եղաւ իր փափանջապետութեան աստուածային նկարագրին:

Տառապանքի այդ զգացումին մէջ է որ Քրիստոսի պաշտօնեան պիտի ընդունի իր կոչումին դասը եւ կատարէ իր ասպարէզին հրափանգութիւնները:

Որդիութիւն եւ Քափանայութիւն. ինքնավստահութիւն՝ առ Աստուած հաւատով զօրացած, եւ ծառայութիւն՝ առ մարդն սիրով փաղցրացած: Ասո՛նք պէտք է ըլլան հոգեւորականին կեանքն ու պաշտօնը առանձնաւորող յատկանիշները:

Պէտք է շարունակ յիշէ ինք թէ ծակուած եւ արիւնակաթ ձեռքին խորհուրդն էր որ օր մը իրեն շնորհեց Հոգիին օծութիւնը, ու պէտք էր որ օր մը իրեն շնորհեց Հոգիին օծութիւնը, ու պէտք է դուրս գայ նուիրական Յարկէն՝ Աստուծոյ պատգամը իր շրթունքին վրայ, եւ ամբողջ անձը սրբաբանին անուշահոտութեամբը թաթաւուած:

«ՈՐՈՒՄ ՇԱՏ ԹՈՂՈՒՑՈՒ՝ ՇԱՏ ՍԻՐԷ»

Վասն որոյ ասեմք քեզ. «Թողեալ լիցին սմա մեղք իւր քաղումք,
զի յոյժ սիրեաց. զի որում շատ թողուցու՝ շատ սիրէ, եւ որում
սակաւ՝ սակաւ»։ (Ղուկ. է 47)

Մեծ Պահոց քաղաքներէն շրջանին, եկեղեցին տարբեր լրջութիւն մը կու տայ իր հանդերձանքին։ Ան իր արարողութիւններուն, երգեցողութեանց եւ քարոզներուն ընդմէջէն Զոյնումը, ապաշխարութիւնն ու ներողամտութիւնը հաւատացեալին համար կը վերածէ յանախանքի մը, որպէս զի ան կարենայ լրջօրէն մօտենալ սրբացնելու եւ հաշտեցնելու յատկութիւն ունեցող այս ժամանակաշրջանին, եւ անկեղծ, յարատեւ աղօթքով եւ պահեցողութեամբ մաքրելու հոգին ու մարմինը եւ այսպէս սրբուած արժանանալու Քրիստոսի Յարութեան լոյսին։

Մեր Փրկչին երկրաւոր կեանքէն առնուած դրուագի մը մէջ, Ղուկաս Աւետարանիչ կը նկարագրէ թէ ինչպէս օր մը, Մարիամ Մագդաղենացի անունով անբարոյ կին մը կը մտնէ Սիմոն Փարիսեցիին տունը, ուր Յիսուս նաշի հրաւիրուած էր։ Այդ կինը իր հետ բերած էր ալապասքեայ սրուակով թանկագին անուշահոտ իւղ մը, եւ կանգնելով Աստուածորդիին նիշդ ետին, կը սկսի դառնօրէն լալ։ Ապա ծունկի գալով անոր առջեւ թոյլ կու տայ որ առատօրէն հոսող իր արցունքները թրջէին Նազովրեցի Վարդապետին ոտքերը, որմէ ետք կը սկսի ուսերէն ջուրի նման վար վազող երկա՛ր ու մետաքսանման մագերով քննօրէն չորցնել անոր ոտքերը, յետոյ՝ համբուրել ետք օծել զանոնք իր բերած թանկարժէք անուշահոտ իւղով։

Փարիսեցի տանտէրը գայթակղած այդ տեսարանէն, ինքնիրեն խորհելով կ'ըսէ. «Եթէ այս մարդը իրա՛ւ, մարգարէ

էր, ինչպէս ուրիշներ կ'ըսեն, պէտք է անպայման գիտնար թէ այս կինը վատահամբաւ ու մեղաւոր անձ մըն էր»։ Քրիստոս, գիտնալով թէ ի՞նչ կ'անցնէր իր խստապարանոց հիւրընկալին միտքէն, անոր պատմեց առակ մը, ուր մեծահարուստ մը երկու հոգիի փոխ դրամ կու տայ, մէկուն հինգ հարիւր դահեկան, իսկ միւսին՝ յիսուն։ Երբ պարտատէրը կը տեսնէ որ այդ երկու պարտապանները ի վիճակի չէին որոշեալ գումարները վերադարձնելու, կը ներէ անոնց պարտքերը։ Ապա Յիսուս կը հարցնէ Փարիսեցի Սիմոնին՝ թէ պարտատէրը ո՞ր մէկը աւելի պիտի սիրէր։ Եւ Փարիսեցի կը պատասխանէ. - Բնական է, ան՝ որուն աւելի ներուեցաւ։ Յիսուս կը պատասխանէ.

- Ճիշդ խօսեցար։ Ապա ցոյց տալով մեղաւոր կինը Փարիսեցիին, կ'ըսէ.

- Տունդ եկայ եւ դուն ջուր անգամ չբերիր ոտքերս լուալու, մինչ այս կինը զանոնք լուաց իր արցունքներով եւ չորցուց մագերովը, որոնք իր գեղեցկութեան մաս կը կազմէին։ Ինչպէս սովորութիւն էր, դուն զիս չ'ողջունեցիր համբոյրով մը, մինչդեռ այս խեղճ կինը տունդ մտնելէս ի վեր չդադրեցաւ ոտքերս համբուրելէ. նաեւ դուն գլուխս իւղով չ'օծեցիր, իսկ այս կինը ազնիւ իւղով օծեց ոտքերս, հետեւաբար կ'ըսեմք քեզի, թէ այս կնոջ մեղքերը, որոնք քաղմաթիւ են՝ ներուած են, քանի որ ան գիտցաւ սիրել։

Մենք բոլորս ալ կ'ըսենք թէ «կը սիրենք զինք»։ Տասնաբանեայի առաջին եւ գլխաւոր պատուիրանը մեզի կը

թելադրե՛ սիրել զԱստուած մեր ամբողջ սիրտով, հոգիով, միտքով եւ զօրութեամբ: Ո՞վ կրնայ ըսել թէ ինք կը սիրե՛ զԱստուած իր ամբողջ էութեամբ: Մենք զԱստուած չենք սիրեր մեր ամբողջ էութեամբ՝ որովհետեւ չենք ունեցած եւ հասկցած «Դուն ներուած ես» խօսքին այդ քաղցր ու հոգի եւ միտք ջերմացնող փորձառութիւնը:

Քարլ Պարթ նշանաւոր աստուածաբանի համաձայն, մենք կրնանք ապրիլ միայն ներողամտութեամբ, այդ ոգին է որ գրգիռ կու տայ մեր էութեան, այդպէս ընդարձակելով հորիզոնը մեր կարողութիւններուն, եւ այս՝ ձեռքով մը արձագանքն էր Պօղոս Առաքեալի պատգամին, անոր՝ որ իր ամբողջ հոգիով փորձեց ենթարկուիլ Հրէական Օրէնքի տառին - որ կը կարծէր թէ փրկութեան միակ միջոցն էր - սակայն այդ փոխանակ փրկելու, զինք բերաւ այն եզրակացութեան թէ այդ նոյն Օրէնքն էր որ զինք հոգեւին անդամալուծելէ ետք՝ կը դատապարտէր: Ի վերջոյ, ո՞վ կրնար գոհացնել ամենակարող եւ արդար Աստուծոյ մը պահանջները: Պատասխանը՝ ոչ ոք է: Սակայն գոհութիւն եւ փա՛ռք անոր՝ որուն մահուամբ եւ յարութեամբ մենք ընդունելի դարձանք Աստուծոյ: Քրիստոսի մահն էր որ մեզ հաշտեցուց եւ մօտեցուց Աստուծոյ, ինչպէս Պօղոս Առաքեալ կ'ըսէ Գաղատացիներուն ուղղած իր նամակին մէջ. «Եւ ես ոչ անարգեմ զշնորհսն Աստուծոյ. զի եթէ յօրինաց անտի էր արդարութիւն, ապա Քրիստոս զուր մեռաւ»: (Գաղ. Բ: 21)

Ներուած ես: Արդեօք մենք լիովին կ'ըմբռնե՞նք ամբողջական իմաստը այս բառին: Մարդիկ, նման լուսնին, ունին իրենց մութ կողմը, զոր ուրիշին ցոյց չեն տար: Սակայն բարեբախտաբար Հայր Աստուած կը տեսնէ մեր մութ կողմը, այն ինչ որ ուրիշներ չեն

տեսներ: Ան մեզ պիտի ընդունի այնպէս՝ ինչպէս որ ենք եւ մեր բոլոր յանցանքներն ու մեղքերը պիտի մաքրէ իր շնորհներու աւագանին մէջ:

Դար մը առաջ, Ամերիկայի Քէնթըքի նահանգէն, նշանաւոր քաղաքացի տ՝ Հէնրի Քլէյ - որ համբաւուած էր իբր խստաբարոյ եւ զօրաւոր նկարագրի տէր մարդ, մէկը՝ որ բնաւ տեղի չէր տար ո՛չ իր թշնամիներուն եւ ո՛չ ալ հակառակորդ կուսակցութեան անդամներու նշնամիներուն - կ'ըսուի թէ օր մը կ'իյնայ 40.000 տոլար պարտքի տակ, որ այդ օրերուն համար հսկայական գումար էր: Երբ ան կը պատրաստուէր ծախել ամէն ստացուածքները, վճարել կարենալու իր ծանր պարտքը, յանկարծ անծանօթ մը յայտնուելով այն դրամատունը, որուն Պարոն Քլէյ պարտական էր, կը վճարէ անոր պարտքը: Դրամատան տնօրէնը կ'ըսէ անծանօթին.

- Եթէ Պարոն Քլէյ հարցնէ թէ ո՞վ էր վճարողը, ի՞նչ անուն տամ:

- Միայն ըսէ թէ բարեկամ մըն էր»։ Կը պատասխանէ անծանօթը, ու դուրս կ'ելլէ դրամատունէն:

Հէնրի Քլէյի պատմագիրը կը գրէ թէ երբ ան կը լսէ պատահածը, անոր կարծր սիրտը կը հալի եւ ամբողջ մարմինը կը սկսի դողալ եւ կու լայ մանուկի մը նման:

Իսկապէս ի՞նչ կը նշանակէ երբ մէկու մը կ'ըսենք «ներուած ես»: Արդեօք ի՞նչ կը զգայ այն անձը որ ներման կ'արժանանայ:

Նախ եւ առաջ, «անկեղծօրէն զղջալ» ըսելով պէտք է հասկնանք թէ մենք գէշ կը զգանք պարզապէս մեր գործած յանցանքներուն կամ սխալին համար, այլ այդ աւելի պէտք է նշանակէ թէ մեզի առիթ կը տրուի մեր կեանքին մէջ նոր էջ մը բացալու: Միւս կողմէն, անկեղծ զղջումը հրաւէր մըն է փրկելու

ծախողութեան դատապարտուած կացութիւն մը:

Հին Կտակարանին մէջ «Զղջալ» բառը գործածուած է 46 անգամներ, որոնցմէ 37-ը կը շեշտեն թէ Աստուած է զղջացողը: Անկասկած, Հայր Աստուած կարիքը չունի զղջալու, քանի որ Ան վեր է եւ հեռու ամէն տեսակի մեղքի հասկացողութենէն: Մեր զղջումը կը դառնայ վաւերական եւ անկեղծ երբ կ'անդրադառնանք թէ մեր սխալ կեցածքն ու չար մտածումները փոխել, եւ կամ գիտնանք թէ մեր մեղքերու եւ յանցագործութիւններու տոմարը միանգամընդմիշտ սրբուած է, եւ այլեւս ամբողջովին ի վիճակի ենք ձեռնարկելու նոր սկիզբի մը:

Յետոյ, երբ կ'անդրադառնանք թէ լսուած է մեր զղջումը եւ ներուած են մեր մեղքերը, այդ այլեւս կու գայ ձերբազատելու մեզ մեղքից կաշկանդումէն, եւ առիթ կու տայ որ մենք եւս մեր կարգին ի վիճակի ըլլանք ներելու ուրիշները: Որովհետեւ, մենք մեղաւորներս, երբ Քրիստոսի միջոցաւ կ'արժանանաք ներումի, ինչպէ՞ս կրնանք չներել անոնց՝ որոնք մեզի դէմ մեղանշած են: Սակայն եւ այնպէս, մեզմէ շատեր չեն ուզեր ներել, այլ կը նախընտրեն իրենց մէջ տակաւին սնուցանել հին հաշիւներ, ոխեր ու ֆէներ: Սակայն օր մը յանձինս ուրիշի, Քրիստոս պիտի գայ մեզի ըսելու. «թողեալ են մեղք քո քաղումք», եւ այն ժամանակ միայն պիտի անդրադառնանք թէ մենք եւս կրնանք ներել: Նման մեր ներող Հօր՝ Աստուծոյ, բարձր հոգիի տէր մարդիկ միայն գիտեն ներել եւ ի վիճակի են ներելու:

Զղջալ եւ արժանանալ ներման ու ներել ուրիշներուն, թէ մնալ այնպէս՝ ինչպէս որ ենք. ընտրութիւնը մերն է: Բայց մէկ բան պէտք է լաւ գիտնալ թէ

ներելու պարագային մենք անգիտակից կերպով թոյլ կու տանք որ այն սէրը զոր Աստուած դրած է մեր մէջ մեզ վերադարձնէ իրեն:

Ժամանակին, դառնացած մարդ մը, որ ֆիզիքապէս, հոգիով եւ միտքով հիւանդ էր, կը տանին հիւանդանոց: Օր մը, երբ այս անձը կը գտնուէր ծայր աստիճան ինկած տրամադրութեան մէջ, բոյժփոյրին կ'ըսէ.

- Ինծի բան մը տո՛ւր եւ վերջացուր այս կացութիւնը:

Բոյժփոյրը «սիրով» կ'ըսէ, ու կ'երթայ քիչ ետք դառնալու ձեռքին Աւետարան մը: Ան բանալով կը կարդայ. «Որովհետեւ Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ նոյնիսկ իր Միածին զաւակը զոհեց, որպէս զի անոր հաւատացողը յաւիտեանական կեանք ունենար»: Ապա կ'ըսէ հիւանդին. «Եթէ կը հաւատաս, ասկիւ կրնայ վերջակէտ դնել քու տուայտանքներդ»:

Անշուշտ մեզմէ շատեր գոհացուցիչ չեն գտներ այսպիսի պատասխան մը, սակայն կ'ըսուի թէ մարդը յետ երկար ինքնաքննութեան կը տեսնէ թէ ճիշդ էին բոյժփոյրը ըսածները, եւ իր նոր հաւատքը զինք դուրս կը բերէ հիւանդանոցէն իրր նոր մարդ:

«Ներուած են քու անթիւ մեղքերդ, որովհետեւ շատ սիրեցիր», Քրիստոսի խօսքը, ուղղուած Մագդաղենացի Մարիամին, կու գար վերցնելու ծանրութիւն մը կամ արգելք մը մարդոց հոգիներուն, միտքերուն եւ նայուածքներուն վրայէն եւ մեզի առիթ կ'ընծայէր որ մեր կարգին մենք եւս ֆէնէիմք մեր սիրտերուն խորը, տեսնելու թէ տրամադիր ենք նոր կեանք մը սկսելու, սիրելու նման Մագդաղենացիին անչափ, անկեղծօրէն դարձի գալու նման Անահային, եւ անոնց նման արժանանալու մեր հոգիներուն առաջ նոր հորիզոններ

եւ կարելիութիւններ բացող Աստուածային ներման: Եւ միշտ յիշելու ենք սիրելի եղբայրներ եւ քոյրեր, թէ ա՛յն ինչ որ Աստուածորդին ըրաւ մեզի համար Խաչին վրայ, ատոր շնորհի՛ւ միայն մենք արժանացանք Հայր Աստուծոյ ներողամտութեան:

Մեծ Պահոց քառասնօրեայ մեր այս ուղեւորութեան շրջանին, թող մեզմէ իւրաքանչիւրին աղօթքը ըլլայ. «Տէ՛ր, ինչպէս որ Միածին որդիդ գիտցաւ ներել

Մագդաղենացի Մարիամին, եւ զինք խաչողներուն համար ըսաւ. «Հա՛յր, թող դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն», օգնէ՛ մեզի հաւատացեալներուդ, մօտենալու հայրութեանդ եւ արժանանալու քու խոստացած երկնաւոր պարգեւներուդ եւ օրհնութեանդ, եւ թող մեր հաւատքի ականջներով լսենք Միածնիդ քաղցրալուր ձայնը որ կ'ըսէ. «Որդեակք, եկա՛յք առ իս, թողեալ են մեղք ձեր», Ամէն:

ՆՈՒՐՀԱՆ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ՝ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՒԱՏՔԻՆ ԿԸ ՊԱՐՏԻ ԻՐ ԳՈՅՈՒԹԵԱՆ ՅԱԻԵՐԺՈՒԹԻՒՆԸ

Եթէ Զատիկը՝ հրեաներու կարմիր Մովէն անցքին եւ Եգիպտոսի գերիշխանութեան լուծէն ազատագրման տօնն է, Յարութեան փառահեղ իրականութիւնը տօնն է հայ ժողովուրդին Քրիստոսի հանդէպ ցուցաբերած ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ եւ Իր աստուածութեան:

Առանց Փրկչին սիրոյ եւ հաւատքի յեղափոխութեան, չէինք ունենար, ո՛չ ազգային զարթօնք, ո՛չ փառապանծ Ոսկեղարը, ո՛չ հայ ուղղափառ եկեղեցին, ո՛չ հայ գիրը, ո՛չ հոգեւոր մշակոյթ եւ ո՛չ ալ ազատ ու անկախ Հայաստանը:

Մեր ազգային ու հոգեւոր բոլոր սրբութիւնները անփոխարինելի պարգեւներն են Յարուցեալ Փրկչին հոչակած Նոր Հաւատքին եւ Իր աւետարանական առաքինութիւններուն:

Հիասթափութիւնը, որ կը հետեւի շիջած գեղատեսիլ երազներու եւ հերքուած յոյսերու, մին է մարդկային կեանքին ցուցաբերած ամենադաժան արտայայտութիւններէն:

Ի՞նչ իմաստ ու նշանակութիւն

ունի վաղանցուկ կեանք մը, երբ իր խորագոյն եւ մեծագոյն ակնկալութիւնները կը հերքուին ու կը կորսուին պարապութեան մէջ:

Այս տարտամ ու ապերախտ ռոպէներուն է, որ մարդուն յուսակտուր հոգին կ'ամպոտի մթին հորիզոններուն մէջ եւ կեանքէն ոչինչ կը մնայ իրեն, բայց եթէ կորսուած երջանկութեան մը ողբուկով:

Նման յուսահատ կացութեան առջեւ գտնուեցան աշակերտները, երբ խաչին վրայ բեւեռեալ տեսան իրենց Տէրը:

Ալ չէին կրնար գօտեպնդուիլ ոչ մէկ յոյսով, ամէն ինչ խաւարած ու ամայացած էր իրենց շուրջը եւ իրենց մէջ:

Երկիրը պատող թանձր մթութենէն վեր ու աւելի, խաւարակուռ գիշեր մը կը տիրէր իրենց հոգիներուն մէջ:

Ալ անոնց մտքին ու շրթունքին վրայ կը յամենար հիասթափութիւնը օրուան ու գիշերուան բոլոր ժամերուն:

Զէին կրնար իրենց յիշողութենէն եւ զգայարաններէն վանել չարչարալից

ու նուաստացուցիչ տեսարանները:

Ան, որ վստահեցուցած էր, թէ աշխարհի լոյսն էր եւ կեանքը, հիմա՝ կը գտնուէր շիրմին մէջ անշնչացած:

Ան, որ յայտարարած էր, թէ ճանապարհն էր եւ յարութիւնը, հիմա խաչին վրայ կը ցուցադրէր իր ողորմելի պարտութիւնը:

Եւ գերեզմանափարը, որ փակեր էր դամբանին դուռը, փակեր էր նոյնպէս խոստացուած արքայութեան դարպասները:

Հիմա՝ ինչ ժառանգ, որ մնաց իրենց Փրկչին մարտիրոսութենէն, անամոքելի վախն էր, որ համագիշերային եւ համացերեկային անձկութիւններով կը չարչարէր իրենց կեանքը:

Այս հիւժիւ մտածումները տարագրած էին իրենց հոգիէն յոյսը ու հաւատքը, եւ կեդրոնական տեղ գրաւած էին թերահաւատութիւնը եւ յուսահատութիւնը:

Այլ՝ ոչ մէկ համոզում չէր խրախուսեր զիրենք վերսկսելու նոր կեանք մը: Ներքին իրենց բոլոր կարողութիւնները դատապարտուել էին անգործութեան:

Նոր հաւատին ջահակիրները Գողգոթայի անմեղ Դատապարտեալին մէջ տեսան հզօրագոյն սէրը, որ իրմէ առաջ յայտնուած չէր ոչ մէկ մարգարէի ու կրօնապետի կեանքին մէջ:

Խաչուած սէրը, ազատագրեց մեղաւորը մեղքին բռնակալին կապանքներէն եւ շիտակ ու լուսաւոր առաջնորդութիւն տուաւ իր ուղեւորութեան, այս անցաւոր աշխարհին մէջ:

Աստուածային սիրոյ զօրութեան առջեւ ջնջուեցաւ մարդուն մտածողութենէն մահուան սարսափը:

Փրկչին մահուան դէմ տարած յաղթութիւնը, ամենամեծ ու անհերքելի

իրողութիւնն է, որ սթափեցուց մեղաւոր մարդկութիւնը իր դարաւոր բմբիրէն եւ բացաւ անոր կեանքին ու հոգիին առջեւ իր յաւիտեանական հայրենիքին դարպասները:

Քրիստոս՝ եղաւ առաջին յարուցեալը մեռելներէն: Տուաւ մեծ ազդանշանը բոլոր ժամանակներու իր հաւատարիմ հետեւորդներուն, որ անմոլար հետեւին իր լուսանաճանց հետներուն, որպէս զի երանաւէտ օր մը իրենց սրբափայլ ճակատներուն ընդունին յարութեան դափնեպսակը:

Յարուցեալին հետ մեր հոգեկան ընդելուզումով, ոչ փորձութեան հրապոյրը պիտի գայթեցնէ մեզ Աւետարանով ջահաւորուած ճանապարհէն եւ ոչ ալ աշխարհային վախերը պիտի անձկոտեն մեր կեանքը: Պիտի ապրինք երկրի վրայ յարութեան կեանքը, յարութենէն առաջ:

Հոգիներու անզուգական Առաջնորդը՝ թափուր գերեզման մը թողելով իր ետեւ, մեր ամենօրեայ կեանքը վերածեց տօնախմբութեան: Եւ տուաւ մեր հողաբոյր կեանքին յաւերժութեան տեւողութիւն, բարձրացնելով մեզ երկրի փառափառութենէն՝ երկնափառափառութիւն:

Ոչ մէկ ժամանակ մահը Քրիստոսի համար վախճան մը չեղաւ: Այլ՝ մահուան մէջ անգամ շարունակուեցաւ իր կեանքը:

Ան՝ այլեւս փառաց թագաւորն է, ողջ ու վախճանած արդարներուն եւ ամէն ժամանակի իր հաւատարիմ հետեւորդներուն:

Իր պսակն է եկեղեցին, իր մարմինն անդամներն են քրիստոնեայ աշխարհին միլիոնաւոր հաւատացեալները:

Խաչը բերաւ յարութիւնը, խաչէն ծնաւ անմահութիւնը եւ խաչը դարձաւ մեղքին դէմ մղուած ու շահուած յաղթութիւններուն խորհրդանշանը:

Շատեր կ'ուզեն Յարութիւնը, բայց

կ'ուզեն. առանց խաչի զոհողութեան: Փրկութիւնը կ'ուզեն, բայց Փրկիչը չեն ուզեր:

Խաչին վրայ ամենաբարձր սէրը հանդիպեցաւ սեւ ուժերու գազանային կիրքերուն եւ յաղթեց:

Ամէն հայ հաւատացեալ, որ Յարուցեալին հաւատով կ'ապրի, չի մոլորիր ճշմարտութենէ ու չի ստուերածեր իր յոյսերուն հեռանկարը:

Աշակերտները, ոչ միայն չվախցան խաչեալ եւ թաղեալ Քրիստոսը քարոզելէ, այլ Յարուցեալին Աւետարանի սիրոյն ողջակիզեցին իրենց կեանքն անգամ:

Քրիստոս իր յարուցած սիրոյ յեղափոխութեամբ, յաղթական է, ոչ թէ այս վաղանցուկ կեանքին պզտիկ պատմութեան մէջ հերոսացած մահկանացուներու նման, այլ՝ յաղթական է յաւիտեաններու մէջ իր յաւերժալոյս փառքով:

ՊԵՏՐՈՍ ԵՒ ՅՈՒՆԱ

Կ'ուզեմ Տէրը ուրացող այս երկու մեղապարտներուն տարբերութիւնը բացայայտել: Տարբեր շարժառիթներ կը մղէին մէկը եւ բոլորովին հակասական պատճառներ միւսը:

Տարբեր հոգեկան աշխարհ մը կը բարացուցէր մէկը, եւ տարբեր խաւարակուռ աշխարհ մը՝ միւսը:

Պետրոս՝ անկումէն ետք կը գտնէ զղջումի ու փրկութեան ճանապարհը եւ Յուդան կը գահավիժի մեղքին անդնդախոր վիհին մէջ:

Երկուքն ալ կ'ընդունին ու կը խոստովանին իրենց մեղապարտութիւնը: Մէկը կը զղջայ ու կը փրկուի, եւ միւսը ինքզինք կը կախէ ու կը կորսուի:

Առիթները, որ մատուցուեցան երկուքին, նոյնն էին:

Յիսուսի վստահութիւնը Յուդային հանդէպ բացառիկ էր: Կրնամ ըսել միւս

աշակերտներէն աւելի, որովհետեւ անոր յանձնած ու վստահած էր գանձապահութեան պաշտօնը:

Տէրը չբացառեց Յուդային ներկայութիւնը վերջին ընթրիքին, գիտնալով հանդերձ, որ գաղտնօրէն կը սաղմանաւորուէր իր դէմ դաւանանքիւնը:

Յիսուս լուաց անոր ոտները, որ սակաւ ետք, պիտի վազէր ու մատներ Վարդապետը հրեայ իշխանութիւններուն:

Յիսուս կը սիրէր Պետրոսը, համանոյն չափով կը սիրէր նաեւ Յուդան: Որքան կ'ուզէր առաջինին փրկութիւնը, նոյնպէս կ'ուզէր երկրորդին փրկութիւնը:

Պետրոս մեղանչեց երիցս ուրացումով Ուսուցիչը: Բայց Քրիստոս չթողուց զայն անկեալ վիճակի մէջ:

Վերջին ընթրիքին՝ Յիսուս ջանաց կանխել Յուդայի դաւանանքիւնը, իր ներողամտութեան ակնարկը տարածելով երկուքին վրայ:

Պետրոս զգաստացաւ, զղջաց ու լացաւ, բայց Յուդան մնաց անխղճահար ու կարծրասիրտ:

Ապերախտութիւնը յաջողապէս կատարեց իր անիծեալ դերը եւ Յուդայի բունալից համբոյրով Յիսուս յանձնուեցաւ իր ոխերիմ թշնամիներուն ձեռքը:

Այսօր տարուան մեծագոյն օրն է եւ մեծագոյն տօնը՝ Քրիստոսի Աստուածութեան:

Պարտաւոր ենք ազգովին մեր խորագգած երախտագիտութիւնը վերընծայել ԱՆՈՐ, որ փրկեց հայուն հոգին եւ մարմինը ճակատագրական փորձութիւններէ, մշտնջենաւորելով Հայ Ազգին ու Հայրենիքին գոյատեւումը երկրի վրայ ու երկնքի մէջ:

ՎԱՐԴԱՆ Ա. ՔՀՆՅ. ՏԻԼԿԷՐԵԱՆ

Ա Պ Ր Ի Լ 24-Ը

ԻՆՉ ԿԸ ՆՁԱՆԱԿԷ ՀԱՅՈՒՆ

ԱԶԳԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԹԷ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ի՞նչ կը նշանակէ մարդը ըլլալ ներկայ աշխարհին վրայ: Ամերիկացի կամ Անգլիացի՞ ըլլալ կը նշանակէ: Հարուստ, անկախ և ուրիշներու վրայ տիրապետող ըլլալ կը նշանակէ: Հայ ըլլալը իմաստալից ողբերգութիւն դարձած է թէ՛ անցալին մէջ, և թէ՛ ներկայի տարբեր գունաւորումներով:

Ինչո՞ւ:

Նախաֆրիստոնէական շրջանին Հայերը, Բաղափականապէս եղած են հզօր և իրենց երկրին սահմանները տարածած և տիրապետած են ուրիշ ազգերու և հողերու վրայ՝ Մեծն Տիգրանի օրով: Այդ ժամանակաշրջանին, Հայերը չեն հալածուած կրօնապէս, ոչ ալ հողային կորուստներ ունեցած են:

Ա՛յն եկեղեցիով և ա՛յն հաւատով, որ Հայ ազգը կը հպարտանայ այսօր, սկսաւ մեր ազգային ողբերգութիւնն ու եղեռնը: Վերոյիշեալ գրութիւնը ա՛յն Հայերուն համար է, որոնք Հայութիւնն ու Հայ-Քրիստոնէութիւնը կը շփոթեն ու նաեւ կ'ուզեն անգէ՛տ մնալ, ու նախապաշարեալ շարունակել իրենց մնացեալ կեանքը:

Յիսուս Քրիստոս և Իր աստուածայայտնիչ Աւետարանը երբ մուտք գործեց Հայոց աշխարհ, Հայը պարտաւորուեցաւ իր հոգեկան և իմացական հաւատքը ընտրել: Ժամանակաւորէն դէպի յաւերժակա՞նը, թէ շարունակել պաշտել կոյր և համր աստուածները: Քրիստոսի Հոգին երբ մուտք գործէ խմբաւորումէ մը ներս, անպայման սոյն խումբին մէջ կ'սկսին բաժանումներ: Վերոյիշեալ դէպք իրողութեան համար մեր Տէրը Յիսուս ըսաւ.

«Մի՛ կարծե՛ք թէ եկայ խաղաղութիւն հաստատելու երկրի (Սատանայի իշխանութեան շրջանին) վրայ. չեկայ հաստատելու խաղաղութիւն, այլ՝ սուր. քանի որ եկայ բաժնելու մարդը իր հօրմէն, և աղջիկը՝ իր մօրմէն, և հարսը՝ իր կեսուրէն: Եւ մարդուն թշնամիները իր տնեցիները պիտի ըլլան: Ով որ իր հայրը կամ մայրը ինձմէ աւելի կը սիրէ՝ արժանի չէ ինձի. ով որ իր որդին կամ դուստրը ինձմէ աւելի կը սիրէ՝ արժանի չէ ինձի: Եւ ով որ իր խաչը չ'առնէր ու իմ ետեւէս չի գար՝ արժանի չէ ինձի: Ով որ կը գտնէ իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն. և ով որ կը կորսնցնէ իր կեանքը ինձի համար՝ պիտի գտնէ զայն»--Մատթ.Ժ.34-39:

Յիսուս Զրիստոսի վերի խօսքերը որքան դժուարահաճ կերելին ներկայ Զրիստոնեաներուն, որոնք Սուրբ աւետարանները չեն կարդացած և անոնք որ անգէտ են իրենց եկեղեցւոյ պատմութեան և սուրբ առաքեալներու վկայութեան ու նահատակութեան: Եկե՛ք թարմացնենք մեր յիշողութիւնը ու ծանցնանք մեր արմատները:

Հայ եկեղեցւոյ խաչապսակ նախավկայութիւնն եղաւ Սանդուխտ որ դուստրն էր Սանատրուկ թագաւորին: Թադէոս առաքեալին Բարոզութեամբ Բրիստոնեայ կը դառնայ և կը թողու իր աւանդական ցուրտ և անկարեկիր աստուածները: Ուրիշ բազմաթիւ Բրիստոնեաներու հետ Սանդուխտ եւս շղթայակապ կը բանտարկուի: Մէկ օրուան մէջ Սանատրուկ թագաւորին հրամանով երկու հարիւր հոգի կը սպաննուին կին և այր մարդ:

Ինչպէս որ Յիսուս նախաձայնած էր ըսելով. «եկայ բաժնելու մարդը իր հօրմէն, և աղջիկը՝ իր մօրմէն», արքայազուն Սանդուխտ կը վկայէ հօրը. ըսելով. «Ձոր դու մոլորեցուցի՛չ կը կոչես, նա միայն ազատեց զիս մոլորութեան անդունդներէն: Ան է ծշմարիտ Աստուած, Տէր ու Արարիչ՝ երկնի և երկրի»: Սանատրուկ թագաւորը երբ կը լսէ իր հարազատ աղջկան վկայութիւնը, կը հրամայէ որ կապեն Սանդուխտին ձեռքերը և ծեծեն զինք: Գլխատման ատեն դահիճը փոխանակ Սանդուխտը գլխատելու կը սպաննէ դահճապետը: Չինուորներէն մէկը կը վազէ ու սուրը կը մխէ Սանդուխտին սիրտը, Դեկ, 15, 41 թուականին: Թադէոս առաքեալ լսելով ոճիրը կու գայ ու մեծաշուք պաշտամունքով կը թաղէ Ս. Սանդուխտին մարմինը:

Ի՞նչ ըրաւ կը կարծէք հաւատքի, սիրոյ և փրկութեան առաքեալ՝ Ս. Թադէոս: Միթէ, հաւատացեալ յեղափոխականներէ բանակ կազմելով Սանատրուկ թագաւորին դէմ վրէժ լուծեց: Հայ ժողովուրդին համար պարծանք է նախադաւան Բարթողիմէոսը ունենալ որպէս առաջին Լուսաւորիչը և Հայ Առաքելական եկեղեցւոյ հիմնադիրը: Բարթողիմէոս առաջինը եղաւ աշակերտներէն՝ Յիսուսի Աստուծոյ Որդի ըլլալը յայտարարող: Բարթողիմէոս և Թադէոս առաքեալներ հաւատքի աստղեր ցանցեցին Արարատեան ժողովուրդին սրտերէն և հոգիներէն ներս: Այս երկու փառ և հաւատարիմ վկաները Յիսուս Զրիստոսի, ո՛չ թէ վրէժ Բարոզեցին իրենց թշնամիներուն հանդէպ, այլ սուրբ Բարթողիմէոս նահատակուեցաւ մորթազերծ ըլլալով...:

Յիսուս Զրիստոսի բոլոր առաքեալները, բացի Յովհաննէսէ, բազմաթիւ չարչարանքներ կրելով նահատակուեցան: Նայինք թէ Պօղոս առաքեալ այս մասին ի՞նչ կը գրէ:

«Հրեաներէն հինգ անգամ փառասունէն մէկ պակաս ծեծ կերայ. երեք անգամ ձաղկուեցայ. մէկ անգամ փրկոծուեցայ. երեք անգամ նաւաբեկութեան բռնուեցայ. մէկ ցերեկ և մէկ գիշեր ծովու անդունդներուն վրայ տառապեցայ: Ծամբոր-

դուրսիսներ՝ շատ անգամ. վտանգներ՝ գետերէն. վտանգներ՝ աւազակներէն. վտանգներ՝ ազգակիցներէն. վտանգներ՝ հեթանոսներէն. վտանգներ՝ ֆաղափ մէջ. վտանգներ՝ անապատի մէջ. վտանգներ՝ ծովու վրայ. վտանգներ՝ սուտ եղբայրներէ: Աշխատանքներու, յոգնութիւններու և տփնութիւններու մէջ, շա՛տ անգամներ. անօթութեան մէջ և ծարաւի, ծովապահութեան մէջ, շա՛տ անգամներ. ինչպէս նաեւ ցուրտի մէջ ու մերկութեան»--Բ Կորն. ԺԱ.24-27:

Կարդանք նաեւ Ճանչնալու համար թէ մեր Տէրն ու Փրկիչը Յիսուս որքա՞ն չարչարուեցաւ, որպէսզի փնտռէ մեզի նման կորսուած մեղաւորները և վերադարձնէ զանոնք յաւիտեանական կեանքի:

«Այնուհետեւ Յիսուս սկսաւ յստակօրէն յայտնել աշակերտներուն, թէ պէտք է որ ինք երուսաղէմ երթայ, շատ չարչարանքներ կրէ ֆահանայապետներէն, դպիրներէն, ժողովուրդի ծերերէն և սպաննուի ու երրորդ օրը յարութիւն առնէ: Եւ Պետրոս մէկ կողմ տանելով զԱյն՝ սկսաւ վիճիլ Անոր հետ ու ըսել. «Քա՛ւ լիցի քեզ, Տէ՛ր, այդ բանը քեզի չի պատահիր»: Եւ Ան դառնալով Պետրոսին՝ ըսաւ. «Ետի՛ս գնա, Սատանա՛յ, դուն գայթակղութիւն ես ինծի համար, որովհետեւ քու մտածումներդ Աստուծոյ մտածումները չեն, այլ՝ մարդոց»--Մատթ. Ժ2.21-23:

Հայ նահատակ Սայաթ Նովա-- (1712-1795): Աշուղական բանաստեղծութեան իշխանը: Ան ամենէն աւելի հոգեկան կուրութենէ կը վախնար: Աշուղը ներքին տուայտանքի մէջ էր, Իսլամները կը պահանջեն անկէ որ ուրանա՛յ Քրիստոնէական հաւատքը, իսկ աշուղը հերոսաբար կ'ըսէ անոնց.

«Ժամէն դուրս չեմ գար, Յիսուսէն չեմ դառնար»:

1795, Թիֆլիսի եկեղեցիին դրան առջեւ Մահմէտ Խանի զինուորները զինք կ'սպաննեն:

Արութին Սէյադեան, 1712-1801, գրական կեղծ անունով՝ Սայաթ Նովա, որ իբրեւ անզուգական նուագող, իբրեւ ֆերթող երգիչ և որպէս Անդրկովկասի երեք ժողովուրդներու լեզուներով ստեղծագործող երաժիշտ՝ ժողովրդական-գոյսանական արուեստը հասցուցած էր համաշխարհային բանաստեղծութեան բարձրագոյն աստիճանին:

1. Փառաբանած է արդարութիւնը և ազնուութիւնը:

2. դատապարտած է կեղծիքն ու փժնանքը:

3. դաւեր նիւթած են իր դէմ 1759-ին և հեռացած է պալատէն:

Սայաթ Նովան ամենէն աւելի հոգեկան կուրութենէ կը վախնայ: Այսօր կրնանք ունենալ աշուղներ, մտաւորականներ

և ֆերթողներ, սակայն ֆանի՞ հատ հերո՞ւ Քրիստոնեաներ կան Հայ եկեղեցիներէն ներս: Այսպիսի՝ հաւատացեալներն էին որ պահեցին Հայը՝ Քրիստոնեայ ու նաեւ Հայ:

Արարատեան աշխարհի Հայ Քրիստոնեաները, հպարտ են որ ունին Բարթողիմէոս և Թադէոս առաքեալները որպէս լուսաւորիչները Հայաստան աշխարհի: Այսպիսի հիմնադիրներ ունենալ չբաւեր այսօր: Ներկայ առաջնորդներէն ֆանի՞ հատը, նման Յիսուսի աշակերտներէն ընտրա՞ծ են նեղութիւնը ու չարչարանքը որպէս զէնք վկայութեան և փարոզութեան պայ- փարի ոյժ:

Արքայական հանդերձաններով բեմ բարձրանալ կամ խորան ելլել, ներկայ եկեղեցականին իշխանութիւն և իրաւունք չիտար ըլլալ առաքելական յաջորդ մը: Ի՞նչ փարոզեցին, ի՞նչ յայտարարեցին և ի՞նչ պահանջեցին առաքելական յաջորդու- թեամբ և ձեռնադրութեամբ եկեղեցականները այսօր Ապրիլ 24-ի պատմական օրը: Պահա՞նջք, առնելի՞ք և բողոք՞ ներկա- յացուցին Թուրքիին, թէ ներում ու եղբայրական ձեռնադրում:

Այսօրուան ֆահանսներուն, վարդապետներուն և պատ- ուելիներուն փարոզութեան ի՞նչ պիտի ըսէ արդեօք Յիսուս Քրիստոս.

«Քու մտածումներդ Աստուծոյ մտածումները չեն»,
թէ

«Արածէ՛ Իմ ոչխարներս»:

Հայ ազգը գաղթական չեղաւ որովհետեւ Հայ էր: Թուր- քերը Հայ ազգը Տէր էլ Զօրի անապատները չֆշեցին, որպէսզի անոնք անօթի և ծարաւ մեռնին: Անոնք ափսորեցին Հայերը ու ջանացին աշխարհէ բնաջնջել զանոնք, որովհետեւ Հայերը Քրիստոնեա՞յ էին: Որպէս ապացոյց, բոլոր այն հայերը որոնք ուրացան Յիսուս Քրիստոսը և իսլամացան, մնացին տէր իրենց կալուածներուն, ընտանիքներուն և կեանքին:

Աստուծոյ Որդին եկաւ աշխարհ ո՛չ որպէս զքօսաշրջիկ մը, այլ որպէս գաղտնի պատգամաւոր, հաստատելու համար "հինգերորդ զօրասիւն" մը, որ ան (եկեղեցին) շարունակէ Աստուծոյ գործունէութիւնը Սատանայէն առեւանգուած աշխար- հին մէջ: Սոյն պատճառաւ Ան ըսաւ իր աշակերտներուն.

«Ահաւասիկ ես ձեզ կը դրկեմ իբրեւ ոչխարներ՝ գայլերու մէջ»--Մատթ.Ժ.16:

«Այս աշխարհի մէջ նեղութիւն պիտի ունենաք, սակայն ֆաջալերուեցէ՛ք, որովհետեւ ես յաղթեցի՝ աշխարհին»:--Յով. Ժ.2.33:

Բոլոր այն կղերականները, որոնք լման չեն կրցած

հասկնալ Յիսուսի Աւետարանը և չեն ծանչցած Աստուած Ճշմարիտը, անո՛նք եղած են Հայ բանաստեղծներու և բազմազան մտաւորականներու գայթակղութեան պատճառ, որոնք հեռացած են Աստուծմէ:

Յիսուս իր Եկեղեցին չէ՛ ընտրած և կանչած դիրքին գործի մը համար: Ան սկիզբէն ըսաւ. *«Ձեզ կը դրկեմ որպէս ոչ-խարներ գայլերու մէջ»*: Ձեզմէ ոմանք պիտի յօշոտուին, խածնուին, անարգուին, ծաղրուին, սակայն ձեր պարտականութիւնն է համոզել առեւանգուած եղբայր և քույր ոչխարները» ու վերադարձնել զանոնք Ինծի, որովհետեւ ես եմ Բարի Հովիւր ոչխարներուն: Եկեղեցիին խիղճի պարտքը և պարտականութիւնը մարդորսորդութիւնն է: Յետո՛յ կու գան վարչականը, ընկերայինը և քաղաքականը:

Ի՞նչ է տարբերութիւնը Ազգասիրութեան և Հայրենասիրութեան: Հայրենասիրութիւնը իր պատմական բնաշխարհին մէջ, իր պապենական հողին վրայ ազատ ու ինքնիշխան կեանքով ապրելու երազն է, որ մեր ժողովուրդին հետ քալած է հազարամեակներու իր պատմութեան ամբողջ տեւողութեան շրջանին: «Հայի սրտում չի հանգում հայրենասիրութեան կայծը, բաւական է փչել նրա վրայ և ահա նա կը բորբոքուի, կը բոցավառի»: Նոյնն է նաեւ հայուն հաւատքը: *Հոգեկան շունչ և հոգեկան իմաստ կը պակսի--Րաֆֆի*: Մենք ոչ միայն մեր ծնողներու զաւակներն ենք, այլ՝ նաեւ հայրենիքին: Սկիզբը հայրենիքը կրնայ բնագոյ մը եղած ըլլալ. բայց մարդկային հոգիի զարգացման հետ, ան դարձած է զօրեղ գիտակցութիւն: Ազգութեան գաղափարը այն առանցքն է որուն շուրջ կը դառնայ պատմութեան անիւր:

Հին ազգերու մէջ առաքինութիւն էր ոչ միայն սիրել բարեկամը, այլ՝ եւ թշնամին ոչնչացնել: Թշնամիի արին խմել շատ ազգերու մէջ պատմական իրողութիւն է: Նոյնիսկ Սաղմոսներու մէջ թշնամական անէծքներ կան դէպի հակառակորդները (Սաղմ ԾԹ.6-20: Քրիստոնէութիւնը գթութեան, կարեկցութեան և սիրո՛յ կրօնքն է: Քրիստոնէութիւնը խորտակած է հին աշխարհի կուռք "եսական" ամբողջները: Քրիստոնէութիւնը հայրենասիրութեան գաղափարը չի ոչնչացուց, այլ՝ *սրբագործեց*:

Հայրենասիրութիւնը պէտք է շփոթել *Ազգասիրութեան* հետ: Ազգասիրութիւնը կ'ենթադրէ սէր և զոհաբերում՝ ազգի՛ն հանդէպ, ժողովուրդի՛ն հանդէպ, իր ազգակցի՛ն հանդէպ. մինչդեռ *հայրենասիրութեան* մէջ այդ սէրն ու զոհաբերումը կ'ուղղուի Հայրենիքին, որ ապաստանարանն է, ապահով տունը: Թրքահայերու մօտ շեշտուած է ազգա-սիրութիւնը, մինչդեռ Ռուսահայերու մօտ՝ հայրենասիրութիւնը: Թրքահայը, սեփական հայրենիք՝ չունեցաւ վեց հարիւր տարի: Եւ հայրենիքի

գաղափարն իսկ մնաց իրեն համար ոչ իրական: Պապենական աւանդութիւններուն պահպանութեամբ անաղարտ պահեց ազգային դիմագիծը: Այսպէս, ալլադաւան Թուրքէն հեռու ապրելու իր ծիգին մէջ, ամփոփուեցաւ և համախմբուեցաւ Մայր եկեղեցւոյ ծոցին մէջ և սերտացաւ ու զօրացաւ ազգային կեանքը:


Օտար երկիր ծնող մէկու մը համար, հայրենասիրութիւնը հոգիին աչքերով տեսանելի է: Քրիստոնէութիւնը մաքրեց հայրենասիրութիւնը "եսական" և բարբարոսական տարրերէ: Լոկ ծաշերով ու խնժոյֆներով միայն գիտենք ցուցաբերել մեր հայրենասիրութիւնը...: Ստորնացման վիճակէն Հայը բարձրացնելու համար անհրաժեշտ էր հզօր կամք մը և խանդավառ ազգասիրութիւն մը: Մի միայն նիւթապաշտ անհատները, որ ամէն կրօնի կորսնցուցած են, չեն զգար ազգային հողին հրապոյրը և զուրկ կը մնան ազգասիրութենէ: Հայրենիքը կը փանդուի ու կ'անհետանայ, երբ անոր մէջ անաստուածութիւնը ըլլայ տիրականը:

Հայրենիքը ոչ միայն հողն է ու յուշարձանները, ոչ միայն լեզուն է, մշակոյթը ու անցեալ պատմութեան դրուագները, Հայուն հայրենիքը կրօնն է ու Քրիստոսի հաւատա՛լը:

Միտքս պարզելու համար կ'ուզեմ Վասակ մարզպանը օրինակ բերել: Վասակ, Հայաստանի մարզպանն էր Սիւնիքի Բաշ իշխան. հանճարեղ և աստուածային իմաստութեան շնորհով օժտուած անձ մը, որ դժբախտաբար, 451 թուականին ազատագրական պատերազմին, տխուր դեր կատարելով, դաւաճան և ուրացող հռչակուեցաւ: Ինչո՞ւ, որովհետեւ Վասակ հայրենասէր էր: Իրեն համար տարբերութիւն չէր ընել թէ ի՛նչ հաւատքի Հայեր կը բնակին Հայաստան հողի վրայ, որքան ժամանակ որ այդ ժողովուրդը Հայ է:

«Վասակ Սիւնի ուրացաւ այն աւազանը որ յղացած էր զինք: Անարգեց այն պատուական Մարմինը, որով սրբուած էր և ոտնահարեց այն կենդանի Արիւնը որով մեղքերու թողութիւն ստացած էր: Ջնջեց իր որդեգրութեան գիրը և իր ձեռքով խորտակեց մատանիին հաստատած կնիքը, դուրս ելաւ երանելիներու թիւէն և շատերը ապստամբեցուց իրեն հետ»:

«Վասակ իր ձեռքն առաւ Սատանան իբրեւ վահան, հագաւ զայն որպէս զրահ, դարձաւ անոր կամփին կատարեալ զինուորը»--**Եղիշէ:** «Արդ՝ դուրս եկաւ դահճապետը և շտապով մօտեցաւ, բոլոր մեծամեծներուն առջեւ, հանեց Վասակի արփունիքէն ստացած շֆանշանները և անոր հագցուց մահապարտի զգեստը: Կապեցին անոր ձեռքերն ու ոտքերը ու ձիու վրայ նստեցնելով տարին և յանձնեցին այն զնդանը, ուր կը գտնուէին բոլոր մահապարտները»--**Եղիշէ:**



Հրեայ ազգն ալ երբ իր կրօնակա՛ն ազգասիրութիւնը դաւաճանեց, այսինքն կռապաշտ հայրենասիրութեան՝

1. Հողային տարածութեան:
2. Դրամապաշտութեան:
3. Փառամոլութեան:
4. Դիւրակեցութեան:
5. Տաճարի՝ նիւթի՝ երկրպագութեան:
6. Դարձաւ Սատանայի երկրպագուն:

Ուստի,

Հրեան կորսնցուց իր հայրենիքը, տաճարը և ափսորուեցաւ իր երկրէն ու դարձաւ անհայրենիքի ու գերին իր ատած հեթանոսներուն: Հրեան գոյատեւեց երկու հազար տարի ո՛չ թէ իր հայրենիքով, այլ ազգասիրութեամբ և կրօնով:

Անցեալի անհամար Հայերը, որոնք ի սէր իրենց հայրենասիրութեան ուրացան իրենց Զրիստոնէական հաւատքը, փրկելու համար իրենց ընտանիքն ու հայրենիքը, ո՛չ թէ միայն չկրցին շարունակել որպէս Հայ Իսլամներ, այլ կորսուեցան ու անյայտացան հայութենէ: Իսկ այն Հայերը, որոնք հաւածուեցան ի սէր իրենց Փրկչին Յիսուս Զրիստոսի ու նահատակուեցան Զրիստոնէական ազգասիրութեան համար, թէ՛ իրենք կը գոյատեւեն ցարդ ու նաեւ գոյատեւութիւն տուին էջմիածին եկեղեցւոյ ու անոր լուսապայծառ Խաչեցեալին:

Զկա՛յ Հայութիւն առանց Զրիստոնէական հաւատքի ու Հայը չկրնար գոյատեւել առանց խաչի տառապանքին: Հայը պիտի փալէ՛ հետեւելով Խաչեցեալի ոտնահետքերուն ուրանալով Սատանային խալթ հրապուրները: Վարդանանք *իրենց կեանքը* իբրեւ պատարագ զոհաբերեցին, որպէսզի Հայ Հաւատքն ու Հայ ազգը ապրին: Անոնք աներկիւղ փալեցին Գողգոթայի ծամբայէն ու մեռելոց յարութեան Արշալոյսը ողջունեցին: Բարբարոս ազգեր, հեթանոս կամ կռապաշտ, դարերու ընթացքին թաւալած են մեր վրայէն մորիկներու նման, և անցած՝ մորիկներո՛ւ նման, բայց մենք ոտքի ենք տակաւին:

15 Դարեր տեւող մեր ընդարձակ մարտիրոսութիւնը ոչ թէ նուաստացման, սուգի կամ լացի պարտի մղե՛լ մեզ, այլ հպարտանքի, փառքի՝ և խնդութեա՛ն, որովհետեւ.

*«Եթէ եղաւ ազգ մը՝ որ խաչեց Յիսուս Փրկիչը,
եղաւ նաեւ ա՛զգ մը, որ խաչուեցաւ ի սէր այդ Փրկչին»:*

*Երանի՛ թէ համա՛յն Հայ ազգը գիտնար իր
կոչումը և թէ ո՞վ է զինք Կանչողը:*

ԱԼՊԷՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

«ՔՈՒ ՏՈՒՆԻԴ ՀԻՄՐ ԻՆՁ Է»

Գործնական եւ հետաքրքրական հարցում մըն է այս, որուն պատասխանը որոշապէս պիտի յայտնէ թէ ինչ տեսակի նկարագիր ունեցող անհատ մըն ես դուն: Յիսուս ակնարկեց այս կացութեան իր անձին կապելով բոլոր զանոնք որ իրենց տունները ժայռի վրայ կը կառուցանեն, բայց իրմէ հեռու եղողներու մասին ըսաւ. «Ով որ կը լսէ իմ խօսքերս, բայց չի գործադրեր զանոնք, կը նմանի այն յիմար մարդուն որ իր տունի հիմքը կը դնէ աւազի վրայ: Երբ անձրեւէ, եւ երբ գետի ջուրերը բարձրանան եւ զօրաւոր հովեր փչեն անոնք կը զարնուին աւազի վրայ շինուած այդ տունին, կը փլեւն գայն եւ առ յաւէտ կը կործանեն, եւ տէրը մեծ վնաս կը կրէ»: Դուն ինչի՞ վրայ հիմնած ես բու տունը:

Ժամանակին մարդկութիւնը իր քնակութիւնը կը հաստատէր դաշտերու եւ կամ հարթ հաւասար վայրերու վրայ. եւ հետեւաբար չէր ենթարկուեր Յիսուսի յիշած վտանգներուն: Սակայն, մեր օրերուն, երբ նարտարապետական գիտութիւնը աճեցան յառաջացած է, մեծ ու փոքր տուններու կամ գործատեղիներու հիմքերը տոկուն եւ զօրաւոր իրերէ կը բաղկանան, ինչպէս պողպատ, սիմէնթ, երկաթ եւայլն: Տակաւին վերջերս շինութեանց ժամանակ մասնաւոր ուշադրութեան առարկայ կը դառնայ երկրաշարժի պարագան: Ներկայիս նոր շէնքերը կը կառուցուին աճեցան որ անոնք կարենան դիմանալ որեւէ չափի երկրաշարժի:

Մարդկային կեանքն ալ փորձանքներէ ազատ կեանք չէ: Եթէ ամուր հաւատքի վրայ հիմնուած ըլլայ այդ, անհատը պիտի կարենայ տոկալ եւ դիմադրել վերահաս դժուարութեանց: Յիսուս ըսաւ. «Ով որ իմ խօսքը կը լսէ,

բայց չի գործադրեր զայն, այդ անհատը պիտի չի կարենայ դիմադրել փորձութեանց»: Ուրեմն, որպէս զի դուն եւ ես կարողանանք օրհնեալ կեանք մը ապրիլ աշխարհի վրայ, չի բաւեր ըսել որ «Ես Քրիստոսի կը հաւատամ»: Թէ բարի գործեր կ'ընեմ, աղատին եւ անկարին օգնութեան ձեռք կ'երկարեմ, եկեղեցի կ'երթամ: Այս բոլորը միայն մէկ բաժինն են մարդ արարածէն սպասուածին: Քրիստոսի հաւատացողը այս բոլորը պէտք է ընէ, բայց անկէ աւելին ալ կայ: Հաւատալ կը նշանակէ կեանքը լիովին նուիրել Քրիստոսի խօսքը աշխարհի վրայ տարածելու: Այս կը նշանակէ այնպէս յարաբերիլ ուրիշներու հետ որ մարդիկ մեր անձին մէջ տեսնեն Քրիստոսի անձը եւ տարուին նմանիլ ուզելու այդ մեծ վարդապետին:

Յիսուս ըսաւ, «Ամէն անձ որ իմ սուրբ անունը կը կանչէ եւ սակայն ըսածներս չի գործադրեր, Աստուծոյ արքայութիւնը պիտի չմտնէ»: «Ես Քրիստոսի կը հաւատամ» ըսողները կը նմանին այն շէնքներուն որոնք դուրսէն գեղեցիկ են, սակայն աւազի վրայ կառուցուած են, եւ կարն կեանք կ'ունենան, եւ երբ փորձանքը պատահի, կը փլին եւ կ'ոչնչանան: Ահա թէ ինչու եկեղեցի յաճախողը, աղօթողը եւ երգողը, ծանր պարտականութեանց տակ կը դնեն իրենք զիրենք երբ քրիստոնեայ անունը վրանին կ'առնեն: Վասն զի, որոշապէս, կան մարդիկ՝ քահանայի զգեստի տակ, որոնք վաճառականութեան ասպարէզի վերածած են իրենց կոշումը, Աւետարանի խօսքը շուկայի մէջ կատարուող խօսակցութեան աստիճանին կ'իջեցնեն, առարկայ դառնալով ծաղրանքի եւ արգահատանքի, արդէն տկար հաւատ ունեցող մարդոց կողմէ: Վստահօրէն՝

Աստուծոյ գահին առջեւ երբ անոնք կանգնի, խիստ պիտի ըլլայ ստացուած վնիւրը:

Միւս կողմէ, սակայն, եթէ վերոյիշեալ պաշտօնեան խղճմտօրէն եւ խոր հաւատով հետեւի իր կոչումին, ինք եւ իրեն յանձնուած հօտը երանելի բարեկամները պիտի դառնան Քրիստոսի, վասն զի Անոր կամքը եւ խօսքը կատարողները պիտի նանչցուին: Ի՞նչ տեսակի հիմք ունի ինչ տունը: Ի՞նչ է ինչ հասկացողութիւնը, եւ ի՞նչ արժէք կը դնես նկարագրիդ վրայ:

Վստահ եմ, մեզմէ շատեր տեսած են եւ կամ կարդացած են տուներու մասին որոնք լեռներու կողքին կը կառուցուին, երկաթէ սիւներու վրայ հիմնուելով: Այո, տունի աւարտումէն ետք երբ շուրջդ նայիս սփռելի տեսարան մը աչքիդ առջեւ պիտի պարզուի: Սակայն, արդեօք շինարարը նկատի կ'ունենա՞ր որ երբ օր մը լեռը շարժի, եւ կամ տեղատարափ անձրեւ գայ, սիւներու տակ

գտնուող հողը տեղի պիտի տայ եւ ամբողջ տունը պիտի գլորի դէպի ձորը:

Ահա այս կը նմանի այն մարդուն որ ամէն բան վերէն կ'ուզէ տեսնել, ինքզինքը ամէն բանէ վեր կը դասէ, աշխարհի գեղեցկութեան վայելքը կ'ուզէ սեփականացնել առանց պատրաստելու ինքզինքն այն երանական վիճակին որ իրը պիտի ըլլայ եթէ միայն աշխարհիկ հանոյքներու ետեւէն չերթայ, այլ գործէ Աստուծոյ եւ Քրիստոսի հանելի գործերը: Այսպիսի կեանք վարելը այնքան ալ դժուար բան չէ, վասն զի իրմէ առաջ շատեր ապրած են զայն, սուրբ մարդիկ: Մեր օրերուն ալ կան այսպիսիներ որոնց կեանքի նպատակը ուրիշները շահագործել չէ, այլ սպասարկել եւ ծառայել խղճմտօրէն եւ բացարձակ նուիրումով: Աշխատելու ենք անոնց խումբին միանալ: Թող Աստուած օգնէ մեզի այս սրբազան գործին մէջ: Ամէն:

ՇԱՀԷ Ա. ՔՀՆՅ. ԱԼԹՈՒՆԵԱՆ

ԴԱԻԻԹ ԹԱԳԱԻՈՐԻ ՄԵՂՔԵՐԸ

1983ին Սաղմոսներու մասին վեց հատ տարբեր ֆարոգներ խօսեցայ: Իմ ֆարոգներուս նիւթ կազմեցին Սաղմոսներուն մէջ շատ մը անգամներ կրկնուող հետեւեալ կէտերը. - Համամարդկային զգացումներ, կրօնական հոգեվիճակներ, աղօթասացութիւն, հաւատոյ զօրութիւն, տկարութիւն մարմնոյ, ուրախութիւն երկնից, փառաբանութիւն ամենակալ Աստուծոյ եւ խոստովանութիւն մեղաց: Ստորեւ գրի առած եմ վերոյիշեալ նիւթերուն վերջինը:

Սաղմոսներու հեղինակը մէկէ աւելի է: Եւ Դաւիթ թագաւոր կը նկատուի շարադրիչը անոնց մեծամասնութեան: Դաւիթ թագաւոր Աստուծոյ ընտրեալն

էր եւ օծեալը: Անոր համբաւը կը հասնէր Մովսէսին: Եւ սակայն Դաւիթ ունէր շատ մը մարդկային տկարութիւններ եւ մխրճուած էր ամէնօրեայ մեղքերու մէջ:

Դաւիթ գիտակից էր իր անձնական մեղքերուն: Եւ կը խօստովանէր իր այս մեղքերը: Գիտէր որ Աստուած տեղեակ է իր մեղքերուն: Աստուած պատժած էր զինք իր մեղքերուն համար: Եւ ինք ընդունելով մէկտեղ իր պատիժը կ'աղօթէր որպէս զի Աստուած ողորմի եւ ներէ իրեն եւ փրկէ զինք յաւիտեանական կորուստէ:

Կարդացէք 31-37-40 եւ 68 սաղմոսները եւ տեսէք թէ Դաւիթ որքան

յստակ կերպով կը խոստովանի իր մեղքերը: Ահա թէ ինչ կը գրէ ան.-

«Ով Տէր մեղքերս ցոյց պիտի տամ քեզի: Իմ անօրէնութիւններս չի պիտի ծածկեմ քեզմէ: Ես ինքս է որ պիտի պատմեմ քեզի իմ մեղքերս: ... Անօրէնութիւններս այնքան շատցած են որ գլուխէս ալ վեր բարձրացած են: Ծանրածանր բեռան մը նման վրաս դիզուած են: Անզգամութեանս երեսէն վերքերս նեխեցան եւ փտեցան: ... Ով անձս ինչո՞ւ կը խռովես զիս: Ով Տէր փրկէ զիս եւ բժշկէ քեզի մեղանշեցի քեզի հանդէպ:»

Դաւիթ մարգարէի խոստովանական մեղքերուն ամենապարփակը կը նկատուի թիւ 50 սաղմոսը: Ստորեւ թարգմանաբար գրի կ'առնեմ անոր մի քանի համարները.-

«Ողորմէ ինծի ով Աստուած շնորհիւ քու մեծ ողորմութեանդ: Քաւէ իմ անօրէնութիւններս, շնորհիւ քու բազում գթութեանդ: ...

Լուա զիս իմ անօրէնութիւններէս եւ իմ մեղքերէս սրբէ զիս: ... Իմ անօրէնութիւններս ես շատ լաւ գիտեմ եւ իմ եւ իմ մեղքերս հանապազ աչքերուս առջեւն են: ... Միայն քեզի հանդէպ է որ մեղանշեցի ով Տէր եւ քու առաջդ չարագործութիւն ըրի: Մայրս զիս անօրէնութեամբ յղացաւ եւ մեղաց մէջ ծնաւ զիս: ... Դարձուր քու երեսդ իմ մեղքերէս եւ քաւէ զիս իմ բոլոր անօրէնութիւններէս:»

Մեղաց խոստովանութիւնը եկեղեցւոյ եօթը խորհուրդներէն մին է: Խոստովանութեան մասին քարոզ կարդացին բոլոր մարգարէները, Յովհաննէս Մկրտիչ, մեր Տէրը Յիսուս Քրիստոս եւ երկոտասան Առաքեալք: Ահա պահոց շրջանին մէջ մտանք: Պահոց շրջանը, շրջանն է խոստովանութեան եւ ապաշխարութեան: Անոնք որոնք կը փափաքին ճշմարիտ խոստովանութիւն ընել, թող Սուրբ Գիրքը քանան եւ սերտեն Սաղմոսները:

ԿԱՐԷՆ ՔԱՀԱՆԱՅ

ՇՆՈՐՀԱԻՈՐԱՆՔ

Ս. Զատկուան առիթով, շնորհաւորանքի գիրքեր եւ հեռագրեր առաւուցան Հոգեւոր ու Կառավարական պետերուն եւ Առաջնորդներուն, որոնց շնորհաւորագիրքը ստացած է Պատրիարք Սրբազան Հայրը.-

- Ամենայն Հայոց Հայրապետ, Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսէն.

- Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետ, Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. Կաթողիկոսէն.

- Հռոմէական Կաթոլիկ Եկեղեցւոյ Քահանայապետին՝ Նորին Սրբութիւն Յովհաննէս Պօղոս Բ. Պապի վախճանման առիթով Վատիկանի հետ թղթակցութիւն:

- Թուրքիոյ Հայոց Ամեն. Տ. Մեսրոպ Բ. Մութաֆեան Սրբազան Պատրիարքէն.

- Մոսկուայի եւ Ռուսիոյ Օրթոտոքս Եկեղեցւոյ Ամեն. Տ. Ալէքսէյ Բ. Սրբազան Պատրիարքէն.

- Լիզպոնի Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Նախագահ Տիար Միխայէլ Եսայեանի հետ թղթակցութիւն.

- Թեմակալ Առաջնորդներէն, Պետական եւ Ազգային Հաստատութեանց ղեկավարներէն.

ՃԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ

ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷՋՄԻԱՇԻՆ



SUPREME PATRIARCH

CATHOLICOS

OF ALL ARMENIANS

MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

ԱՄԵՆԱ ՊԱՏԻԻ

Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐԲ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԲ

ԵՐՈՒՍԱՂԷՄ

ԻՍՐԱՅԷԼ

Սուրբ Չատիկ, 2005 թ.

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ուրախ սրտով Հայրապետական Մեր ողջոյններն ու բարեմաղթամբն ենք յղում Ձեզ, Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան ողջ միաբանութեանը եւ շնորհաւորում մեր Տիրոջ՝ Յիսուս Բրիստոսի Հրաշափառ Յարութեան ցնծալի տօնի առիթով:

Տիրոջ Սուրբ Յարութեան փառաւոր իրողութիւնը դարերի ընթացքում լոյսի փարոս է եղել տառապանքների բովով անցած մեր ժողովրդի համար, քանզի ազգս հայոց այդ յոյսով է գիտակցել, որ մենք որպէս «Ժառանգակիցք Բրիստոսի, եթէ չարչարանացն կցորդ լինիմք, եւ փառացն հաղորդ լինելոց ենք» (Հռ. 8.17): Փառք եւ գոհութիւն եմք վերառաւում առ Աստուած, որ Յարուցեալ Փրկիչը կենարար շնորհներ է պարգեւում մեր ժողովրդի աստուածասէր զաւակաց՝ հայորդեաց սրտերում մշտափառ պահելով սէրը, հաւատն ու նուիրումը՝ առ Ամենակալը, մեր Սուրբ եկեղեցին եւ հայրենական մեր սրբազան արժէքները:

Այսօր՝ Սուրբ Յարութեան տօնի յուսառատ օրերին, վերստին աղօթք ենք մատուցում առ Բարձրեալն Աստուած, որ Տէրն առաւել զօրացնի հայ մնալու եւ հայութեամբ ապրելու մեր ժողովրդի աննկուն կամքը՝ անասան եւ ամուր պահելով հիմները մեր Սուրբ եկեղեցու փրկագործութեան եւ հայապահպանութեան նուիրական իր առաքելութեան մէջ:

Տիրոջ հրաշագարդ յարութեան լոյսով է օծուն Հայոց Գրերի գիւտի մեծամասնէ իրադարձութիւնը, որի 1600-ամեա յորելեանն ենք տօնում այս տարի, եւ ոգեկոչում եղեռնի 90ամեայ տարելիցը, որը նաեւ յարութեան վկայութիւնն է մեր ժողովրդի եւ մահուանը յաղթանակած նրա քաջարի ոգու:

Աղօթք ենք վերառաւում առ Բարձրեալն Աստուած՝ հայցելով, որ հաւատաւոր մեր ժողովրդի կեանքում յարութեան յաղթանակը ամրապնդի կամքն ու ոգեշնչումը հայորդեաց սրտերում՝ Հայրենիքի եւ մեր Սուրբ եկեղեցու բարգաւաճմանն ի խնդիր վնոկամութեամբ գործելու եւ առաջընթացի շաւղներով ընթանալու:

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք, հայցում ենք նաեւ յարուցեալ Աստուածորդու հանապազն օրհնութիւնն ու հովանին Ձեզ, Բարեխնամ Աթոռիդ հոգեւոր սպասաւորաց եւ հաւատաւոր մեր զաւակաց՝ մաղթելով, որ Աստուած անխռով պահպանի երկնառաք խաղաղութիւնը Տէրունական Սուրբ վայրերում:

Թող Ամենախնամ Տէրը Իր զօրակցութեամբ ու աշակցութեամբ սատար լինի Ձեզ Ձեր պատասխանատու առաքելութեան մէջ, եւ մշտանորոգ յաջողութիւններ պարգեւի եկեղեցանուէր ու ազգանպաստ Ձեր բոլոր ձեռնարկումներին, որպէս զի Ձեր նուիրեալ գործունէութեան արդիւնքներով լուսազարդուի ազգային-եկեղեցական մեր կեանքը յուրախութիւն աստուածասէր մեր ժողովրդի, ի պայծառութիւն Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան եւ Առաքելական մեր Սուրբ եկեղեցու:

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԻ Ի ՄԵՌԵԼՈՑ,
ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Եղբայրական Սիրոյ Ողջունիւ
աղօթարար

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻՏԱՆՆ ԿԻԼԻԿՈՅ

ԱՄԹԵԼՈՒՍ - ԼԻԲԱՆԱՆ

Ծի 52/05

Անթիլիա, Ս. Ջատիկ, 2005

Ամենապատիւ
Տ. Թորգոմ Արքեպսկ. Մանուկեան
Հայ Պատրիարք Երուսաղէմի
Երուսաղէմ.

Սիրեցեալ եղբայր ի Քրիստոս.

Մեր ժողովուրդի սիրելի զաւակները դարձեալ կը պատրաստուին հոգեւոր խանդավառութեամբ նշելու Քրիստոսի հրաշափառ յարութեան մեծ դէպքը: Արդարեւ, մահուան դէմ տարած Քրիստոսի յաղթանակը աղբիւրը դարձաւ հիսուսունէական հաւատքի վաւերականութեան ու եզօրութեան. ինչպէս կ'ըսէ Առաքեալը՝ «Եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն է քրոջութիւնն մեր, ընդունայն են եւ հաւատին ձեր» (Ա. ԿՈՐՆԹ. ԺԵ. 14-15): Այս խոր գիտակցութեամբ եկեղեցին իր առաքելութիւնը կատարեց դարեր շարունակ ու այս ամուր հաւատքը դարձաւ եկեղեցւոյ գոյութեան հիմքը:

Մեր եկեղեցին իր ժողովուրդին պարտադրուած կեանքի դժուար պայմաններուն մէջ ամբօրէն կառչած մնաց յարութեան հաւատքին: Տառապանքին ու մահուան դիմաց մեր եկեղեցին յարութեան կենդանի պատգամաբերը դարձաւ: Ան իր ժողովուրդին հետ քաղցր Գողգոթայի ճամբէն՝ յարութեան վառ տեսիլով: Մեր եկեղեցին դարձաւ մեր ժողովուրդը դէպի վերածնունդ ու յարութիւն առաջնորդող Աստուծոյ ներկայութիւնը հայ կեանքին ներս:

Քրիստոսի Յարութիւնը յուշարար մըն է մեր եկեղեցւոյ համար՝ վերահաստատելու իր հաւատարմութիւնը միշտ մնալու Քրիստոսի Յարութեան հաւատքին յանձնառու առաքեալը մեր ժողովուրդի կեանքէն ներս: Քրիստոսի Յարութիւնը նաեւ մարտահրաւէր մըն է մեր ժողովուրդի բոլոր զաւակներուն՝ չվախաւոր տառապանքէն ու մահէն, ինչպէս Քրիստոս ինք ըսաւ. «Աշխարհի վրայ նեղութիւն պիտի ունենամ. բայց քաջալերուեցէ՛ք, որովհետեւ ես յաղթեցի աշխարհին» (Յովհ. 16. 33): Արդարեւ, Հայկական Տեղապանութեան 90ամեակը առիթ մըն է մեր ժողովուրդի զաւակներուն վերանորոգելու Քրիստոսի Յարութեամբ կենդանի իրենց հաւատքը եւ վերանորոգ յոյսով ու տեսիլով քալելու դէպի կեանք ու յարութիւն:

Քրիստոսի հրաշափառ Յարութեան տօնին առիթով Ձերդ Ամենապատուութեան կը մաղթենք քաջաոգոջութիւն եւ հրկար ու քաղմարդիւն գահակալութիւն՝ ի սպաս մեր Ս. Եկեղեցւոյ ու անոր հօտին:

Եղբայրական ջերմ սիրով,

Աղօթակց

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵՇԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿՈՅ



ՊԱՏՐԻԱՐԷՈՒԹԻՒՆ
ՀԱՅՈՑ
ԱՏԱՆՊՈՒԼ

ERMENİ
PATRİKLİĞİ
İSTANBUL

ARMENIAN
PATRIARCHATE
ISTANBUL

[illegible]

Ստանալով, 26 Մարտ 2005

Ն.Ա.Տ. ԹՈՐԳՈՍ Բ.
Պատրիարք Երուսաղեմի
Սրբոց Յակովբեանց Վանք
Երուսաղեմ

Ամենապատիւ Տէր,

«Ե՛ս եմ յարութիւնը եւ կեանքը: Ան որ ինծի կը հաւատայ, թպտտեմ մեռնի՝ պիտի ապրի» (Յովհ.ԺԱ.25) ըսող Փրկչին անդառնալիօրէն հաւատացիք իբրեւ հնագոյն Զրիստոնէայ ժողովուրդ, որ իր պատմութեան ընթացքին երբեմն անվեհեր քալեց Գողգոթայի ճանապարհէն ու սրբազան չարքաշութեամբ մը ինքզինք մխիթարեց Առաքեալին խօսքով. «Այո՛, ժառանգորդներն ենք Աստուծոյ եւ ժառանգակից՝ Զրիստոսի. եւ իր չարչարանքներուն մասնակից կ'ըլլանք՝ որպէսզի իր փառքին եւս մասնակից դառնանք» (Յն.Ը.17):

Մեն եղեմիս դառնադաժան օրերուն իսկ, գոյատեւելու սրբազան յամառութեն եւ երկնային պարգեւի, վերազարթօնքի, յարութեան ու յաւերժութեան լուսաւոր յոյսն բացի ուրիշ ի՞նչ բան կրնար, ծանրաբախիծ մեծօր թելադրել՝ տօթակեզ արեւուն տակ, անապատի տաք աւազակներուն վրայ սրովեցնելու «Այբ, Բեն, Գիմ»ն ու հաջի հշանը իր ծնողազուրկ թոռնիկին:

Սուրբ Չատիկ այս հրաշագարդ օրերուն, կը մաղթենք եւ կ'աղօթենք, որ Բարձրեալն Աստուած Ձերդ Ամենապատուութեան պարգեւէ քաջառողջ եւ երկար կեանք, բազմամեայ եւ արեւշատ գահակալութիւն, ինչպէս նաեւ արգասաբեր, ազգաշէն առաքելութիւն եւ մշտանորոգ ծաղկում Սուրբ Աթոռոյդ Միաբանութեան:

Այսու գրիւ Ձերդ Ամենապատուութեան կը փոխանցենք նաեւ Պատրիարքական Աթոռոյս միաբաններուն, խորհրդականներուն, ազգային-եկեղեցական վարչութեանց եւ հաւատացեալ ժողովուրդի սիրոյն եւ ակնածանաց հաւաստիքը:

Մամբ խոնարի աղօթակցութեամբ եւ ողջունիւ եղբայրական սիրոյ,

Զրիստոս յարեալ ի մեռելոց.
Օրհնեալ է յարութիւնն Զրիստոսի:



✱ՄԵՍՐՈՊ ՊԱՏՐԻԱՐԸ
ԱՐԶԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆՆՈՒՊՈԼԻՍՈՅ



ԴԱՏՐԻԱՐԷԱՐԸՆ ՆԱՅՈՑ

ARMENIAN PATRIARCHATE

Թուակաճ
Date

April 7, 2005

His Excellency
Cardinal Joseph Ratzinger
Dean of the College of Cardinals
Vatican
Fax: 390 669883591 / 390 669883141

Dear Brother in Christ

The whole world was following the Holy Father, Pope John-Paul the Second during his last journey on the way of his Cross to eternity.

With millions of God-fearing souls of all nations the suffering flock in the Holy Land also raised its voice of thankfulness for the 26 years of Service, Leadership and Devotion of a spiritual father who cared for the humble, with the prophetic voice and vision of the messenger of God for peace, security and justice.

The faithful of the Armenian Apostolic Orthodox Church in Armenia and in the Diaspora, will cherish the memories of the Holy Father, Pope John-Paul the Second, and his historic visits to the Mother See of Holy Etchmiadzin, in Armenia, and to the Saints Jameses Armenian Cathedral of Jerusalem, during his pilgrimage to the Holy Land, in March of 2000.

As the devout messenger of the Lord Jesus Christ, Pope John-Paul II returns home, carrying his cross, embellished with his mission for service, for love and peace among all nations and religions accomplished.

May the Lord embrace His servant full of grace.

Prayerfully

Abp. Torkom Manoogian

Archbishop Torkom Manoogian
Armenian Patriarch of Jerusalem



PONTIFICIUM CONSILIUM
AD CHRISTIANORUM UNITATEM FOVENDAM

E Civitate Vaticana, die

April 14, 2005

PROT. N. 1480-S.V./2005

Your Beatitude,

The Pontifical Council for promoting Christian Unity has been asked to express to you profound gratitude for your closeness to the Catholic Church at this time of mourning for the death of His Holiness Pope John Paul II.

Your kind message, which has been a source of consolation to us all, has been deeply appreciated by the Cardinal Camerlengo, the Cardinal Dean and by Cardinals Sodano and Kasper who, with the other Cardinals, are now preparing to enter the conclave to elect the next Bishop of Rome.

We ask you to continue to pray for the Catholic Church and for the election of the Pope. The path to visible unity in what is necessary and sufficient, which we have travelled together and which was so close to the heart of John Paul II – «this most noble goal», as he called it – beckons us still. This task, which he so often described as irreversible, still requires patient and courageous efforts.

Grateful for your prayerful support, I renew the assurance of our heartfelt esteem and gratitude.

Sincerely yours,

+ Brian Farrell
Bishop tit. of Abitinæ
Secretary

His Beatitude Torkom Manoogian
Armenian Patriarch of Jerusalem
St. James Monastery
P.O.Box 14235
91190 Jerusalem, Israel



ՊԱՏՐԻԱՐԺԱՐԵԱՆ ՆԱՅՈՑ

ARMENIAN PATRIARCHATE

Թվական
Date

April 26, 2005

His Holiness
Pope Benedict XVI
Vatican

Fax: 390-669883591

Your Holiness

From Jerusalem we watched and we heard the bells of St. Peter's Cathedral in Vatican, heralding the good-news of the election and enthronement of the successor of His Holiness the late Pope Paul-John the Second of the blessed memory.

We rejoiced with the whole Church of Christ when Your Holiness in humility heeded to the call of the Holy Spirit, accepting the heavy yoke of the Good Shepherd and assuming the beatifying name of Benedict XVI.

We pray the Lord to protect and to accompany Your Holiness in Your mission as the faithful plenipotentiary Vicar of His saving message for peace and justice and security for all the nations

It would have been our great joy and privilege had we been able to personally present to Your Holiness the grateful sentiments of the Brotherhood of the Armenian Patriarchate of Jerusalem and the Armenian community and the faithful in the Holy Land, who are commemorating the Ninetieth anniversary of the one million-and-a-half Armenian martyrs, the victims of the Armenian Genocide of 1915. However, we have stepped into the 87th anniversary of our birth, and our physical condition deprives us of any pleasure of traveling. Nevertheless, the joy of our soul shall always be asking the Lord to grant Your Holiness many years of good-health in body and in soul.

Prayerfully

Abg. Torkom Manoogian

Archbishop Torkom Manoogian
Armenian Patriarch of Jerusalem



**Патриарх
Московский
и всея Руси**

119034 Москва, Чистый пер., 5

**ЕГО БЛАЖЕНСТВУ,
БЛАЖЕННЕЙШЕМУ ТОРКОМУ II,
АРМЯНСКОМУ ПАТРИАРХУ ИЕРУСАЛИМА**

Ваше Блаженство!

От всего сердца поздравляю Вас с Праздником Праздников – Пасхой Христовой:

Христос Воскресе!

«День Воскресения Господа нашего Иисуса Христа, – говорит святитель Иоанн Златоуст, – есть основание мира, начало примирения, прекращение вражды, разрушение смерти, поражение диавола».

От души желаю Вам пасхальной радости о Воскресшем Господе и Спасителе, доброго здоровья и помощи Божией в Вашем высоком служении.

С любовью о Христе Воскресшем

ПАТРИАРХ МОСКОВСКИЙ И ВСЕЯ РУСИ

Пасха Христова
2005 г.
Москва

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Միխայիլ Մատուսովսկի
(Ռուս Բանաստեղծ)

ԻՄ ԾՆՆԴԵԱՆ ԹԻԻԸ

Սկզբում գլխի չէի ընկել ես,
Երկար տարիներ՝ անգիտակ դաւին,
Գրում էի իմ թղթերում պէս-պէս,
Թէ ծնունդ եմ ես տասնհինգ թուին:

Ծնունդ եմ ես խուլ, հեռաւոր մի տեղ,
Ծնունդ եմ, երբ ձեզ՝ արեան մէջ սուզել,
Դժնի մի Թալեաթ կամ Ջելդեթ մի բեյ
Երկրի երեսից ջնջել է ուզել:

Երբ Գողգոթա են քայլել, թոյլ ու մերկ,
Ծերեր, մանուկներ՝ խաչերը ուսած,
Երբ Արաբական անապատով մէկ
Օդում կանգնել է աղեկէզ մի լաց:

Ես ուշ մերձեցայ ձեր խինդ ու ցաւին,
Հիմա ձեր բախտը՝ իմ բախտն է նաեւ.
Ներեցէ՛ք դուք ինձ, ներէ՛ք ինձ, հայեր,
Որ ծնունդ եմ ես տասնհինգ թուին:

Թարգմ. Սիլվա Կապուտիկեանի

ՍԵՐԳԵՅ ԳՈՐՈԴԵՑԿԻ

(Ռուս բանաստեղծ)

ՀԱՅԱՍՏԱՆ

Ինչպէս անյայտ կնոջ դէմ, խորհրդաւոր ու անբիծ,
Քո դէմ կանգնել եմ բախտի սարսուռով մի առանձին,
Եւ վախենում է պոկուել առաջին բառն իմ շուրթից,
Եւ աչքերս են շուարում թախանձանքով առաջին:
Քեզ նանաչել, հասկանալ ու գրկել եմ ուզում ես,
Ուզում եմ, որ իրար դէմ բացուեն դռները ոսկի,
Ո՛վ Հայաստան, արիւնով, կրքակով ես տանջում քեզ,
Ես ուզում եմ սիրել քեզ ու խորհուրդը քո խօսքի:
Իմ գլուխն եմ խոնարհում քո հինաւուրց փառքի դէմ,
Համբուրում եմ ես սրտանց գեղեցկութիւնը քո հին:
Տարօրինակ է, որ քեզ մինչեւ հիմա չգիտեմ,
Ալմաստերկիր, քարերկիր, երազերկիր դուն անգին,
Ես դէպի քեզ եմ թռչում, պարզած թւերն իմ ազատ,
Ահա վառում են իմ դէմ քո թագերը գեղեցիկ-
Աղամանդէ, ալմաստէ քո աստղերը սրբազան:
Ու ես թռչում եմ դէպի գագաթները նըրանց ձիգ:
Քեզ նանաչել, հասկանալ ու գրկել եմ ուզում ես,
Սրտով լսել եմ ուզում համբաւը քո յարութեան,
Ո՛վ Հայաստան, արիւնով, կրքակով ես տանջում քեզ,
Ճակատագրի հողմի դէմ անպարտելի յաւիտեան:

Թարգմ. Համօ Սահեանի

Այն Կապեպ
(Էստոնացի Բանաստեղծ)

ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ

Ես ֆայլում էի, ինչպես
մեռեալներն են ֆայլում...
ՖՐԱՆՅ ՎԵՐՖԵԼ

Քայլ քայլ եր,
ինչպես լինում են ֆայլերը ոգու,
Քայլ քայլ եր, երբ սկսեցի վերել բարձրանալ,
Ես չէի զգում, թե ինչպես էի ոտներս պոկում,
Սիրտ չէի անում
Թե՛ փուլել իմ ուղուց
Կամ հանգստանալ:

Ես գնում էի մեռեալի նման,
Քայլում էի վեր,
Մինչեւ որ մնաց այն հսկայական ֆաղափր ցածում,
Քայլ քայլ եր, կարծես թե մի գոյգ հրեղեն թելեր
Տանում էին ինձ... բայց ես ողջ էի
Ու ինքս էի երկինք թռածում:

Ելնում էի ես, հայեացքս դեպի բարձունքը յառած,
Եւ իմ դէմ փոռուց ֆարէ գորշագույն մի հրապարակ,
Ոտք դրի ֆարին,
Ու յառնեց յանկարծ աչքերիս առաջ
Քարէ մի ծաղիկ,
Հսկայ մի ծաղիկ ու մէջը՝ կրակ...

Ու ես այդ հսկայ ծաղկի մէջ մտայ...
Կանգնեցի ես լուռ:
Հայեացքիս միջով ինչ-որ թափանցիկ ալիքներ անցան:
Ես խոնարհուեցի յետոյ պղնձէ օջախին այն հուր:
Եւ իմ ալանջին հասաւ խուլ մի ձայն...

Չայնն այդ հնչում էր,
Ոգեկոչում էր փարերի տակից,
Եւ ամենեցուն յուշում էր ասես, ծայրէծայր զանգում,
Որ նրանց, ուլփեր ընկել են մի օր
Սուր ու գնդակից,
Անհնարին է մոռանալ կեանքում:

Եւ ես խոնարհուած խորհում էի լուռ՝
Նահատակներն այս պիտի որ ապրեն աւելի երկար,
Քանզի իմ մէջ են, քո մէջ են նրանք
Իբրեւ յուշ ու հուր:
Իսկ յուշն ու հուրը
Անհնարին է անել սրահար:

Լոյսը դողում էր փարերի վրայ... իսկ ես ողջ էի
Եւ ողջ առաւել քան մէկ ժամ առաջ,
Առաւել տոկուն:
Եւ ֆայֆս սակայն թեթեւ էր այնպէս
Եւ այնպէս լոին,
Ինչպէս լինում են ֆայլերը ոգու...

Թարգմ.՝ Վահագն Դաւթեանի

*Վերա Զվյագինցեվա
(Ռուս Բանաստեղծ)*

*Ինչպէս մարդուն են խոր սիրահարում,
Զայնին, շարժմունքին, փայլին աչքերի,
Այնպէս էլ իմ մեծ, փոթորկոտ դարում
Սիրահարուեցի ես հին մի երկրի:*

*Ինչքան նամբայ էր կտրել հարկաւոր
Ու գետեր անցնել, քաղաքներ, գիւղեր,
Որ հեփաթային Դերեդը այսօր
Իր պաղ շառաչով իմ գէմֆին փարուէր:*

*Որ Լոռու ձորը մտնէի յանկարծ,
Ուր անակնկալ կէսօրն է մթնում,
Ասես քարայր ես մտնում երկիւղած,
Ասես քարակոփ մի վանք ես մտնում:*

*Ինձ վիճակուել էր սիրել մէկընդմիջտ
Այս հողը՝ շոգից ու վշտից խանձուած,
Հողմերի ձեռքով ժայռին փորագրուած
Որմնաքանդակներն այս խոժոռ ու խիստ:*

*Էդուարդաս Մեծելայտիս
(Լիտվացի Բանաստեղծ)*

ՄԻ ԼԱՅ, ՀԱՅԱՍՏԱՆ

*Մի լայ, Հայաստան, ծանր է իմ սրտին
Քո կոմիտասեան հառաչը տխուր...
Դեռ բոցկլտում է արեգակը հուր,
Եւ բոցկլտում է ժողովուրդն այս հին:*

*Դիտեմ, թէ մի օր հազար ու հազար
Զոհերիդ անիւնն իրար գումարուի,
Դոյանայ պիտի սրբազան մի սար,
Որ Արարատին կը հաւասարուի:*

Եթէ քո թափած արցունքը վարար
Գետերի փոխուէր եւ Սեւան հոսէր,
Սեւանը կ'ելնէր ափերից իր քար
Եւ ովկիանոսի ձայնով կը խօսէր:

Թէ միանգամից որբերդդ բոլոր
Եւ հառաչանքի ձայները տխուր
Ելնէին դէպի երկնային ոլորտ,
Պատըռուէր պիտի աստծոյ սիրտը խուլ:

Ասա, ուրեմն, այդ ի՞նչ ուժ ունի,
Ինչպէ՞ս դիմանայ իմ սիրտը չնչին,
Բիրտ հարուածների այդ սուր դաշոյնի,
Եւ կոմիտասեան երգի հառաչին:

Թամարա Պոնոմարյովա
(Ռուս Բանաստեղծ)

ՀԱՅԱՍՏԱՆ

Անդ, ուր անտառում վագր է շրջում,
Եւ վի՛շտ կայ՝ դաջուած ամէն քարի.
Ուր գետը սարին սէ՛ր է խշշում,
Փարուելով կրծքին նրա վայրի.

Ուր վե՛ր է մղում մարդու հոգին,
Շփոթած ամպն ու լեռը քարէ,
Ուր Արարատը ամպի տակից
Ծագում է որպէս ձիւնէ արեւ.

Ուր վայրի ցեղերն անապատի
Խուժել են հո՛ղն այս հորդաներով,
Նախնիքնե՛ր սփռած իրենց նամփին
Եւ խիզախներին խաչ հանելով.

Ուր մարդը կարող էր փրկուել մահից
Լոկ արծիւների բներում սէգ,
Եւ ուր թեւերն իր արծուային
Ժողովուրդը չի՛ ծալել երբեք:

Նա՛, փիւնիկի պէս մոխրից յառնած,
Այգի՛ է տնկում անապատում,
Եւ անդ, ուր հուր ու սուր էր առաջ,
Ծաղի՛կ է ծաղկում,
Բալի՛կ՝ ժպտում...

... Եւ ես չգիտեմ, թարթիչներիս
Ցո՞ղ է վար իջնում, անի՞ւնը թանկ,
Փռչի՞ն դարաւոր նամփաների,
Թէ՞ արտասուքն իմ ուրախութեան...

Թարգմ. Գէորգ Էմինի

ԳՐԱԿԱՆ

ԶԱՀՐԱՆ

Սեպտեմբեր 11, 2001ին, Նիւ Եորքի երկնաժայռի երկու շէնքերու ահաբեկչական ադէտէն տաս օր ետք, ծրագրած էի Գանատա մեկնիլ: Արդարեւ՝ Սեպտեմբեր 21ին, Հայաստանի Հանրապետութեան անկախութեան տասնամեակի տօնակատարութեան առթիւ, Հայ Համաշխարհային Ընկերակցութեան կողմէ հրաւիրուած էի Թորոնթօ, որպէս օրուան գլխաւոր բանախօս:

Հակառակ ահաբեկչութեան դէմ քուռն պայքարի ծաւալման եւ օդակայաններու մէջ տիրող խիստ ապահովական կացութեան, մեկնեցայ Թորոնթօ:

Ուրախ էի: Երկու տարի ետք, կրկին կը հրաւիրուէի այն կազմակերպութեան կողմէ, բանախօսելու նոյն գաղութին, ուր անգամ մը եւս առիթը պիտի ունենայի տեսնելու ծանօթ դէմքեր, մասնաւորապէս սաղիմահայ հայ բարեկամներ, որոնց հետ կապուած էին սաղիմական քաղցր ու յիշատակելի օրերս, մանկութիւն ու պատանեկութիւն, դպրոցի մը յարկին տակ, դարաւոր վանքի մը կրօնարոյր ու խնկարոյր միջավայրի մը մէջ:

Ըստ սովորութեան, ձեռնարկէն ետք, կազմակերպիչ մարմինն ու ձեռնարկի մասնակցողները, ժողովուրդին հետ միատեղ, դուրս գալով սրահէն, ծաղկեպսակ մը կը զետեղեն սրահին կողքը գտնուող Եղեռնի Յուշարձանին առջեւ: Արարողութիւն մըն ալ այստեղ:

Մինչ կը պատրաստուէի «Թափօր»ին հետ դուրս գալ դէպի բակ, շրջապատուեցայ ծանօթ դէմքերով, ու հարցում ունեցող եւ կամ գնահատական երկու բառ փոխանցող ներկաներով:

Ասոնց մէջ էր նաեւ Եաֆացի Յովսէփը, զոր աւելի քան երեսուն տարիներէ ի վեր տեսած չէի: Ողջագոյրուեցանք հին օրերու կարօտով:

Ամուսնացած ու հայր էր հիմա երկու սիրասուն աղջիկներու:

- Ծանօթացիր, կինս է,- ըսաւ, բոլը կանգնած կիներ ներկայացնելով, որ կը հետեւէր մեր խօսակցութեան:

- Բարեւ ձեզ, անունս Զահրա է, ինչպէ՞ս էք,- ձեռքը երկարելով հարցուց կիներ, արեւելեան ծանր հնչիւնով մը, որ կը մատնէր օտար ըլլալը:

Երուսաղէմի Թարգմանչաց վարժարանէն շրջանաւարտ ու եկեղեցական արարողութեանց մասնակցող սա տղան, որուն մէջ քիչ թէ շատ հայու արիւն կը հոսէր, ինչպէ՞ս սա ցուրտ երկրին մէջ հայկական տոհմիկ բոյն մը կազմելու համար, ինչպէ՞ս օտարութեան դաշտը ու ծաղիկ մը քաղած,- կը մտածէի անզգալաբար:

Ձեռնուեցանք:

- Կնոջդ անունը հայկական բուրմունք չունի,- ըսի, հետաքրքիր շեշտով մը:

- Պարսկուհի է,- պատասխանեց Յովսէփը, երկու բառով փորձելով գոհացում տալ հետաքրքրութեանս:

Ուրեմն սա մեր ճանչցած վանքի տղան, մահմետականի հետ ամուսնացած է,- կը խորհրդածէի հիմա:

Յովսէփը զգալով հոգեվիճակս, թէ՛ կարդալով դէմքիս արտայայտութիւնը անմիջապէս աւելցուց.

- Զահրան սակայն քրիստոնեայ է:

- Քրիստոնեայ եւ պարսի՞կ... հետաքրքրական է,- ըսի զարմացած, նայելով կնոջ դէմքին, որ կարծես անհամբեր կը սպասէր պատմելու իր կեանքը:

Զահրան, որ քիչ թե շատ կը հասկնար հայերէն, սակայն կը դժուարանար հայերէնով արտայայտուելու։ Ու առանց սպասելու ամուսնոյն բացատրութեան, անմիջապէս փակեց կեանքի կծիկը, որ անելի վկայութիւն մըն էր, քան... պատմութիւն մը փրթած կեանքի օրերէն։

- Շատ ծանր պատանեկութիւն մը ունեցայ Իրանի մէջ։ Պատերազմի տարիներն էին։ Պատանի տղաք, հագիւ 15 կամ 16 գարուններ բոլորած՝ կը յանձնէին ցուրտ հողին։ Տղաք՝ որոնք մոլլայի մը քարոզին հետեւելով կ'ողողուէին Իրաքի սահմանները, ուր ականապատուած դաշտերը կը մաքրէին անոնց վրայէն անցողները։

Պատանի տղաք՝ որոնք կը հաւատային թէ այդ դաշտէն անցնելով երկնքի դռները բաց պիտի գտնէին իրենց առջեւ։

Հոգեհեղինակն ու ծանր օրեր ապրեցայ։ Ամէն օր լաց ու կոծ... համատարած ողբ։

Սուգը՝ թանձր մշուշի մը նման պատած էր մեր թաղերը։ Հիւանդ էի, ֆիզիքապէս եւ հոգեպէս։ Մնողքս տեսնելով իմ հոգեկան տառապանքս զիս փարիզ ուղարկեցին, հո՛ն բուժուելու եւ շարունակելու իմ ուսումս։ Լոյսերու այդ քաղաքը, իր հմայով ու սովորութիւնով տարբեր էր այն շրջապատէն ուր մանկութիւնս անցուցած եմ ու ճանչցած կեանքը, իսլամական մեր կենցաղով։ Կեանք մը՝ որ հիմա արեւմտեան այս օտար հողին վրայ կը փորձէի ճանչնալ, պատասխաններ որոնել հոգւոյս մէջ կուտակուող հարցումներուն։

Զիս ամենէն շատ հրապուրողը սակայն Փարիզի մեծ ու հիասքանչ տաճարներն էին, որոնց առջեւ կը յամենայի ժամերով։

Ու օր մըն ալ չեմ գիտեր ի՞նչ համարձակութեամբ ներս մտայ այդ

տաճարէն, ու պահ մը դիտելով չորս դիւ, նստեցայ նստարանի մը վրայ։

Խաղաղութիւն կը տիրէր տաճարէն ներս, խաղաղութիւն մը որ կը փնտռէի մանկութեան օրերէն։ Ու հիմա 12րդ դարուն կառուցուած սա հի՛ն, սակայն հիասքանչ տաճարին մէջ Քրիստոսի, Ս. Կոյսի ու այլ սուրբերու արձաններուն առջեւ նստած, կարծես գտած էի զանձ մը, որուն հոգիս կը տենչար տարիներով։ Ամէն օր կ'այցելէի այնտեղ, ու կը տեսնէի թէ մարդիկ ի՞նչ հաւատով ու երկիւղածութեամբ մոմ կը վառէին այդ արձաններուն առջեւ, ու աղօթով ու խոկումով Աստուած եւ մարդ յարաբերութեան մէջ կը մտնէին, կը խօսէին անոնց հետ լուռ ու մունչ ու կը մեկնէին իրենց գործին։ Ու օր մըն ալ հաւատացեալ Ֆրանսացիներուն նման մոմ վառեցի Քրիստոսի արձանին առջեւ, ու հոգիս մէջ կուտակուած հարցերը հարցուցի իրեն, թէ ի՞նչ է սա կեանքին իմաստը, պատերազմ ու արի՞ւն միթէ՞ ճանապարհը կեանքին։ Նշմարտութիւնը որ կ'որոնեմ միլլաներու քարոզածն է միթէ։ Շուարած էի, սակայն կը զգայի թէ ներքին խաղաղութիւն մը կ'ունենայի այդ տաճարէն ներս։

Ու օր մըն ալ, երբ տանս մէջ, թեթեւ մրափ մը կ'առնէի, մարդ մը երեւցաւ ինծի, ու հայրաքար ըսաւ։

- Աղջիկս, ինչո՞ւ շուարած ես, գիտցի՛ր որ ես եմ՝ ճանապարհը, նշմարտութիւնն ու կեանքը։

Երբ արթնցայ, զգացի որ այդ մարդը Քրիստոսն էր, զոր ես առաջին անգամ տեսած էի Նօթր Ծամի տաճարին մէջ, ու հոգիս պարպած Անոր առջեւ։ Մարդու եւ Աստուծոյ այս գեղեցիկ հոգեկան ոլորտին մէջ գտայ ճանապարհը կեանքի ու ընդունեցի քրիստոնէութիւնը, ու հիմա՝ վկայեցի ձեզի։

- Իսկ ընտանի՞ք... չհակադդեցի՞ն

ձեզի - հարցուցի խաւարէն լոյսին եկող կնոջ:

- Ընտանիքս անշուշտ գայրացաւ երբ իմացաւ դաւանափոխութիւնս, մանաւանդ ես անդրանիկ զաւակն էի ծնողքիս, եւ հինգ քույր ու եղբայր ունէի, որոնց պէտք էր օրինակ ըլլայի իմ կենցաղովս: Փորձեցին զիս կարգի բերել բայց չյաջողեցան, ու վերջապէս «արտաքուցայ» գերդաստանէս:

Ջահրան լռեց: Լուռ էինք եւ մենք:

Յովսէփը, որ ո՛վ գիտէ քանիք որդեացման էր որ կը լսէր կնոջ վկայութիւնը, աչքերուս մէջ նայելով կարծես կը փորձէր գնահատական խօսք մը կարդալ, կնոջ վկայութեան մասին ու գուցէ եւ իրեն համար, երբ հիմա հայ առաքելական եկեղեցւոյ ծոցին մէջ կը պահէր իր ընտանիքը:

- Վկայութեանդ համար շնորհակալութիւն կը յայտնեմ տիկին, - ըսի ուրախ շեշտով մը, ու խորհրդածեցի:

Կեանքի ի՞նչ հեգնանք, մե՛նք որ քրիստոնէութեան 1700 տարիներու դրօշակակիրն ենք եղած, այսօր՝ ի Հայաստան, ի յԱրցախ եւ իր Սփիւռս աշխարհի, հայ ժողովուրդի զաւակներ, կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ

անգիտութեամբ հեռանալով հայ առաքելական եկեղեցւոյ մայր ծոցէն, հասունցած պտուղի մը նման կ'իյնանք, աղանդաւորներու կողովին մէջ, ի բացակայութեան քաջ հովիւներու: Մինչ՝ Ջահրան յաւերժական լոյսը գտած խաղաղ կեանք մը կ'ապրի հիմա, միւս կողմէ քրիստոնեայ մկրտուած հայորդիք, եղիվարդին բառերով «կը փոխեն մեր միսն ու ոսկորը եղող Հայ եկեղեցին, ուրիշ բանի հետ», եւ ի՛նչ փոյթ թէ «Հայ եկեղեցւոյ ճարտարապետը եղած է Լուսաւորիչը, լուսարարը՝ Մեսրոպ, ժիր մատրուակը՝ Սահակ, աղօթող քուրմը՝ Նարեկացին եւ քաղցր երգիչը՝ Շնորհալիւն»:

Թող ո՛չ ոք համարձակի ըսելու թէ Հայաստանեայց Առաքելական Ուղղափառ եկեղեցւոյ ծոցէն հեռացողներու թիւը, ջնջին տոկոս մը կը կազմէ. մտահոգուելու կարիք չկայ:

Բարի Հովիւը ձգելով իր 99 ոչխարները, կորուսեալ մէկ ոչխարը փնտռեց, գտա՛ւ ու իր հօտը պատշպանեց:

Այսօր, քանի՞ Բարի Հովիւներ ունի Հայաստանեայց Առաքելական եկեղեցին, որ փնտռէ ոչխարները իր կորուսեալ:

Պատասխանը ընթերցողին թողելէ առաջ, ես մատներուս վրայ համրեցի...:

ԾԱՌ ՄԸՆ ԱԼ ԻՆԿԱԻ

Երբք ընկերներ էին, երբք տարբեր քննադատութիւններով, որոնք Միջին Արեւելքի քաղաքական անապահով վիճակէն փախուստ տուած, որպէս ուսանողներ՝ հազար զրկանքներով ապաստան գտած էին Խաղաղականի այս փերուս վրայ: Ու օր մըն ալ ուսման ճանապարհին՝ իրար գտած էին ու միասին յարկաբաժին մը վարձած, Հալիվուտի Էնմօնթ փողոցին վրայ, Լոս Անճելըսի քաղաքային քոլէճէն ո՛չ շատ հեռու:

Այն օրերուն, քոլէճի Հայ Ուսանողական Միութեան կեանքը կ'եռար համալսարանի աշակերտական կեդրոնէն ներս, շնորհիւ արեւելէն ժամանած հայ ուսանողներու տփնաջան աշխատանքներուն, բազմաժանոց օտար ուսանողներուն ծանօթացնելու համար հայ մշակոյթը, հայոց պատմութիւնը, հայոց ցեղասպանութիւնը:

Քոլէճէն դուրս, ամէն Ուրբաթ երեկոյեան Մակարեան քաղաքային կը

հանդիսանար հաւաքավայրը աշակերտներուն, ուր երիտասարդական խանդավառ երգ ու պարերէն յոգնած տղան ու աղջիկները, նոր ծրագիրներ կ'որոնային փոքրէն ներս հայերէն լեզուի ու գրականութեան դասընթացներ ալ սկսելու:

Անցան տարիներ, կեանքը մեզ բոլորիս տարաւ տարբեր ճանապարհներով:

Մակարը հաշուապահութեան մէջ մասնագիտանալով, մեկնեցաւ Սան Ֆրանսիսքո, ուր ամերիկեան ընկերութեան մը մէջ սկսաւ պաշտօնավարել:

Ու օր մըն ալ անակնկալ հրաւեր մը Մակարէն: Խումբ մը ընկերներ կը հրաւիրէր Լաս Վեկաս... ուր նարօտ պիտի կապէր Նուրիթ Յակոբեան անունով հայ աղջկայ մը հետ:

Հրաւերը որքան ուրախացուց մեզ, նոյնքան ալ տրտմեցուց թէ ինչո՞ւ հարսանիքը Լաս Վեկասի սթրիքին վրայ գտնուող մէկ աննշան մատուռի մը մէջ պիտի կատարուէր եւ ո՞չ թէ հայ եկեղեցւոյ մէջ: Զէ՞ որ Մակարը հայրենասէր, եկեղեցասէր ու ազգասէր տղայ մըն էր: Դէք այդպէս ճանչցած էինք զինք:

Նուրիթը՝ կապուտաչեայ, շէկ մագերով գեղեցիկ աղջիկ մըն էր, վայելուչ ու ներկայանալի, ու պաշտօնակիցը Մակարին: Անկրօն աղջիկ մը, որուն ծնողքը ապահարգանի դիմած էր: Հայրը հայ էր, իսկ մայրը գերմանիայէն գաղթած հրեայ մը:

Նուրիթը նոյնպէս առանձին կ'ապրէր, մինչեւ որ յաջողեցաւ գրաւել սիրտը երիտասարդ հային: Ան պատմած էր Մակարին իր հայկական ծագումին եւ իր բուն անունին մասին՝ Նուրիթ, որ իր մեծ մայրն էր եղած, եւ թէ ինչպէս մայրը վերջապէս համակերպած էր Նուրիթ անուն, որ հրէական անուն մըն էր:

Մակարը՝ որ կը փորձէր փրկել սա հայ աղջիկը ու վերադարձնել իր արմատներուն, վերջապէս կ'առաջարկէր անոր ամուսնանալ հետը: Նուրիթ ընդունելով առաջարկը, սակայն որպէս անկրօն, պնդած էր որ այդ ամուսնութիւնը ըլլար Լաս Վեկասի մէջ, որուն համար չէր առարկած հայ երիտասարդը, քանի ան նաեւ ժամանակի ընթացքին հեռացած ըլլալով Առաքելական եկեղեցիէն, իր հոգիի փրկութիւնը փնտռած էր «Սայենթոլոնի» կոչուած աղանդաւորներու մօտ:

Հինգ երջանիկ տարիներ ետք, նորապսակ ամուլը կը բախտաւորուի երկուորեակ տղայ զաւակներով որոնք կ'անուանեն Դաւիթ եւ Յակոբ:

Ահա եւ այդ տարիներուն խաղաղականի այս փերուն վրայ կը հասներ Հայաստանի անկախացման ուրախ լուրը որ հպարտութեան ալիքով կը պարուրէր հոգին Մակարին, ու ի՞նչ երազներ կը հիւսէր տեղափոխուելու հայրենիք:

Հայաստանի Անկախութեան հինգերորդ տարեդարձին, Մակարը ամէն ջանք թափած էր Սեպտեմբերի 21ին, հայրենի հողին վրայ մասնակից ըլլալու օրուայ տօնախմբութիւններուն:

Հայրենասիրական իր այս գործող գգացումներու առջեւ նոյնիսկ ընկրկած էր իր կինը՝ Նուրիթը, որ տարիներ ետք, վերջապէս տեղի տալով ընդունած էր տեղափոխուիլ Հայաստան:

Դժուար եղած էր նոր կեանքին ընտելանալը, մանաւանդ Նուրիթին համար, որ ամէն օր ամուսինին հետ կոխի մէջ էր: Մակարը ի սէր զաւակներուն, լռութեամբ կը տանէր իր պայքարը, որ անոնք հայ մեծնային, ճանչնային իրենց արմատները, պատմութիւնը, մշակոյթը, լեզուն: Բայց Մակարին պայքարը երկար

չտեսնեց: Երկրին տնտեսական եւ
 քաղաքական անկայունութիւնը, պատճառ
 հանդիսացան որ Նուրիթը իր
 զաւակներուն ապագան որոնէ իր հոգիին
 աւելի հարազատ՝ հրէական հողին վրայ:
 Ընտանեկան խռովալի պայքարէ մը
 վերջ, Մակար կը հետեւէր իր կնոջ,
 քնակութիւն հաստատելով Թէլ Ավիվէն
 ո՛չ շատ հեռու Բիշոն Լիզիոն քաղաքը:

Մօր կողմէ հրեայ ըլլալով,
 Հրէական Գաղթականական Մառա-
 յութեան կեդրոնները ամէն դիւրութիւն
 կ'ընծայէին Նուրիթին, մանաւանդ որ
 մայր էր երկու պատանիներու, որոնց
 զինուորական ծառայութեան տարիքը կը
 մօտենար:

Մակար՝ նոյնպէս շուտով սկսաւ
 պաշտօնավարել Թէլ Ավիվի մօտ
 ամերիկեան հաստատութեան մը մէջ:
 Կեանքը որքան ալ բնական կ'ընթանար,
 սակայն Մակարին հոգիին մէջ, փլած
 բան մը կար: Քանի մը շաբաթէն երկու
 զաւակները պիտի մեկնէին զինուորական
 ծառայութեան: Որքան ուզած էր տեսնել
 իր երկու առոյգ որդիները հայկական
 զինուորական տարագով՝ անդամագրուած
 հայկական բանակին, տեսնել զանոնք
 Երեւանի փողոցներուն մէջ կամ Արցախի
 լեռներուն վրայ, քան անհարազատ այս
 հողը պաշտպանողները:

Մակարի այս հոգեկան տագնապը
 օր ըստ օրէ կը զօրանար: Պարտուած էր:

Պայքարի դրօշը անգօր էր պարզելու
 այլեւս: Ընտանիքը վերջնականապէս
 հաստատուած էր այս օտար հողին վրայ
 ու վերադարձի կամուրջները այրած: Ու
 հիմա ամէն օր գործէն ետք, ծովեզերեայ
 գինետան մը մէջ իր ցաւերը կը խեղդէր
 մի քանի գաւաթ խմիչքով:

Ու գիշեր մը երբ Մակար ցաւը
 քամած կուրծքին տակ դուրս կու գար
 գինետունէն, երկու արաք ահաբեկիչներ,
 գինետան մուտքին պայթեցնելով իրենց
 մարմինն վրայ կապած պայթուցիկները,
 պատճառ կը հանդիսանային
 երկոտասնեակ անմեղ մարդոց մահուան,
 ահ ու սարսափ տարածելով
 վիրաւորեալներուն մէջ:

Առաւօտեան դէմ, երբ քաղաքի
 ապահովական ուժերը գինետան
 փլատակներուն տակէն դուրս կը բերէին
 այրած մարմինները, անոնց մէջ կը
 գտնեն նաեւ մարմինը յիսունամեայ
 Մակարին, ձեռքը սեղմած... կուրծքին
 վրայ:

ՆԱՀԱՊԵՏ ՄԵԼՔՈՆԵԱՆ

Ծանօթ.- Այսօր աւելի քան տասն հազար
 Մակարներ ընտանեօք գաղթած են
 Հայաստանէն ու քնակութիւն հաստատած
 եաֆայի, Թէլ Ավիվի ու Հայֆայի մէջ:

ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ

ՆԵՌԻ ԴՐՈՇՄԸ

(ըստ Եկեղեցու ուսուցման)

«Պատուիրանի գլխավորը սերն է՝ բխած սուրբ սրտից, բարի խղճմտանքից եւ անկեղծ հաւատից, որոնցից վրիպեցին ոմանք՝ խոտորուելով խօսքերի ու նայնութեան մէջ:

Ուզում են օրենքի վարդապետներ լինել. իրենք իսկ չեն իմանում՝ ինչ են խօսում, ոչ էլ հասկանում այն բաները, որոնց վրայ պնդում են» (Ա ՏԻՄ. Ա 5-7):

Այսօր սատանան ձեռք է բարձրացրել Հայ Առաքելական Եկեղեցու հեղինակութեան վրայ, Եկեղեցում սերմանում է պառակտում, հաւատացեալների մէջ՝ շփոթ եւ խուճապ: Մի քանի դատարկաբաններ թաքնուելով Եկեղեցու հանդէպ կեղծ նախանձախնդրութեան դիմակի տակ, ցանկանում են «փրկել» Եկեղեցին նեռից: Ձեռքի տակ ունենալով Յովհաննու Յայտնութեան ընդամենը մի քանի տողը, Հայ Եկեղեցու հաւատացեալներին մոլորեցնում են նեռի դրոշմի մասին սխալ պատկերացումներով՝ ծնելով հակաեկեղեցական տրամադրութիւններ, քննադատելով եւ չարախօսելով Եկեղեցու հոգեւորականութեանը: Եւ երբ յիշեցնում ես նրանց Սուրբ Հայրերի վարդապետութիւնը, հոգեւոր հարցը անմիջապէս տեղափոխում է քաղաքական ոլորտ: Մոռանալով նեռի դրոշմը՝ անմիջապէս սկսում են խօսել ազգային անվտանգութեան մասին, սակայն չեն մոռանում մեղադրել Եկեղեցու հոգեւորականութեանը «անգործութեան» մէջ: Այդ մարդկանց համար չկայ որեւէ սրբութիւն, նրանց համար բարեպաշտութիւնը շահավաճառութիւն է: Ոմանք ցանկանում են հեղինակութիւն ձեռք բերել եկեղեցական-քաղաքական ասպարէզում, ոմանք էլ ապրուստի միջոցներ են հայթայթում՝ զրպարտելով հոգեւորականներին: Եկեղեցին զրպարտելը նրանց համար դարձել է շահաւէտ արհեստ: Այս բանասարկութիւնները Եկեղեցու թշնամիներին եւս մէկ առիթ են ընծեռնում չարախնդալու Եկեղեցու վրայ, աղանդաւորներին՝ եւս մէկ անգամ մատնացոյց անելու Եկեղեցին, հեթանոսներին՝ առիթ, որ պնդեն. «Պէտք էր քրիստոնէութիւնն ընդունել»:

Իսկ ի՞նչ դիրքորոշում պետք է որդեգրելին եկեղեցու հաւատացեալները: Պատասխանը տալիս է Սուրբ Պօղոսը. «Լսեցէք ձեր առաջնորդներին եւ հնազանդուեցէք նրանց» (Եբր. ԺԳ 17): Այս ամենը պետք է որ համախմբէր Ձեզ եկեղեցու շուրջ եւ ոչ թէ ստիպէր հնազանդուել գառան մորթով գայլերին, ուրոնք, սքօղուելով Սուրբ Գրքի եւ եկեղեցու Դայրերի գրուածքների «անգիտութեամբ»՝ գրգռէին Ձեզ ընդդէմ եկեղեցու: «Ահա բոլոր չարիքների պատ-տութեամբ»՝ ասում է Սուրբ Յովհան Ոսկեբերանը,- անհետացել է պատշաճ հնա-զանդութիւնը ղեկավարների հանդէպ, չկայ ո՛չ ամօթ, ո՛չ երկիւղ: Դնազանդուեք եւ ենթարկուեք ձեր վարդապետներին,- ասում է առաքեալը,- բայց ներկայումս ամէն բան խեղաթիւրուած եւ խորտակուած է... ամէն ինչ գլխիվայր է շրջուել», եւ դրանով իսկ. «Ինքն իր մէջ բաժանուած ամէն թագաւորութիւն աւերուում է,

եւ ինքն իր մէջ բաժանուած ամէն քաղաք կամ տուն կանգուն չի մնայ» (Մատթ. ԺԲ 25):

Արդ, ինչո՞ւ էք կարծում, որ Եկեղեցու նուիրապետութեան դէմ հանդէս եկող մարդկանց փաստարկներն ընդունելի են, իսկ Եկեղեցունը՝ ոչ: Ո՞րն է պատճառը: Որտե՞ղ է Ձեր հաւատն ու հաւատարմութիւնը Մայր Եկեղեցու հանդէպ: Դուք կ'ասէք. «Ինչո՞ւ էր այն օրերին Եկեղեցին լռում»: Պատասխանենք. «Այդ ամէնը եղաւ ոչ առանց Աստուծոյ կամքի: Եւ նաեւ այն բանի համար, որ իւրաքանչիւրը հնարաւորութիւն ունենար ցոյց տալու իր հաւատարմութիւնն ու նուիրուածութիւնը Մայր Եկեղեցու հանդէպ»: Դուք կրկին կ'ասէք. «Բայց չէ՞ որ նրանք Սուրբ Գրքից են մէջբերումներ անում»: Պատասխանենք. «Չի կարելի Սուրբ Գրքից վերցնել ընդամենը մի տող եւ առանց լուսաբանելու ըստ Ս. Գրքի ընդհանուր ուսուցման՝ դարձնել դոգմայ (վարդապետութիւն): Ի՞նչ կը լինէր, եթէ 666-ի փոխարէն լինէր մէկ այլ թիւ: Ես նկատի ունեմ «շտրիխ կոդը»: Ցոյց տուէք՝ ով է Եկեղեցու հայրերից խօսել «չիպերի» մասին: Ցոյց տուէք, որտեղ է Նոր Կտակարանում խօսուում այդ թուի մասին, բացի Յովհաննու Յայտնութիւնից: Մատնանշենք, որ միայն Հին Կտակարանում է յիշատակուում այդ թիւը. «Մէկ տարուայ ընթացքում Սողոմոնի ստացած ոսկին կշռում էր վեց հարիւր վաթսուվեց տաղանդ» (Գ Թագ. Ժ 14, Բ Մնաց. Թ 13):

Տեղին է նշել, որ Յովհաննու Յայտնութիւնը առաջին անգամ հայերէնի է թարգմանուել միայն ԺԲ դարում՝ Ս. Ներսէս Լամբրոնացու կողմից: Արդ, ի՞նչ էին կորցնում մեր հայրերը մինչ ԺԲ-ԺԳ դարերը՝ այդ գիրքը չկարդալով: Իսկ եթէ այդ գիրքը ընդհանրապէս գոյութիւն չունենար, որտեղի՞ց եւ ինչպէ՞ս կ'իմանայինք նեռի դրոշմի եւ 666 թուի մասին: Ի՞նչ կը կորցնէինք այսօր, չունենալով այդ գիրքը: Արդեօ՞ք բաւարար չէ մեր փրկութեան համար Աւետարանի ճշմարտութեան եւ առաքելական թղթերի ճանաչողութիւնը: Էլ չեմ խօսում հայրաբանական ահռելի աւանդութեան մասին, որում ամփոփուած է Հայ Առաքելական Եկեղեցու ճշմարիտ խօսքն ու վարդապետութիւնը: Ահա այդ աւանդութիւնն է, որ ցաւօք սրտի «չէք ցանկանում» հասկանալ եւ դուք: Չարմանալի չէ, որ հենց դա են ժխտում աղանդաւորներն ու դրանով իսկ կորցնում փրկութեան յոյսը: Եւ քանի որ. «...ընդունեցին ճշմարտութեան սէրը, որպէսզի փրկուեն: Դրա համար էլ Աստուած նրանց պիտի ուղարկի գորաւոր մի մոլորութիւն, որ նրանք հաւատան ստին եւ դատապարտուեն բոլոր նրանք, որ չհաւատացին ճշմարտութեանը եւ հաճոյք գտան անօրէնութեան մէջ» (Բ Թես. Բ 10-11):

Սի պահ պատկերացնենք, որ խօսակցութիւնները նեռի դրոշմի մասին ճշմարիտ են, այսինքն՝ նեռը արդէն իսկ դնում է իր դրոշմները: Բայց այդ դէպքում դուք զրկուում էք փրկութիւնից: Ինչպէ՞ս: Շատ պարզ: Տէրը Ձեզ հնարաւորութիւն է տալիս նահատակուելու յանուն Իր Անուան, իսկ դուք մերժում էք: Եւ ինչպէս սատանան էր Պետրոսի կերպարանքով հակառակուում Քրիստոսին՝ ասելով. «Քաւ լիցի Քեզ, Տէր, այդ Քեզ չի պատահի», որ Նա չգնար խաչելութեան, այդպէս հիմա էլ չարը այդ դատարկաբանների կերպարն առած հակառակուում է Ձեզ, որ դուք էլ չգնաք մահուան: Դուք ասում էք. «Այդ քարտերը Հայաստանին պէտք չեն. մենք ենք առաջին քրիստոնեաները. դրանով ոտնահարում են մարդու իրաւունքները. չենք ընդունի այդ դրոշմը, որ մենք ու մեր երեխաները հանգիստ ապրեն»: Իսկ ինչ ասել Սուրբ Նահատակների մասին,

չէ՞ որ նրանք չէին գոռում մարդու իրաւունքների մասին, երբ յօշոտւում էին գազաններից, չէ՞ որ նրանք, ինչպէս անմռունչ գառներ, մեծ ուրախութեամբ էին գնում մորթուելու: Արդ եւ դուք, չընդունելով այդ ամենը, առանց խուճապահար վախի գնացէք հաւաստի ու դանդաղ մահուան, թէ չէ ստացւում է, որ դուք բոլորդ նահատակներ էք, բայց չէք ուզում մեռնել: «Որովհետեւ ով կամենայ իր անձը փրկել, այն կը կորցնի. եւ ով ինձ համար իր անձը կորցնի, կը գտնի այն» (Մատթ. ԺԶ 25):

Ահաւասիկ մեր Տէրը պատուիրան է տուել. «Սիրեք միմեանց, ինչպէս որ ես սիրեցի ձեզ» (Յովհ. ԺԵ 12), եւ այդ պատուիրանը մի է ու կարճ. «Որպէսզի չասեն, որ երկար է եւ այդ պատճառով չկարողացանք յիշել», - ասում է Սուրբ Գրիգոր Տաթեւացին: Հարկ է ընդգծել, որ Քրիստոսը եկաւ հենց մեր օգտի համար, որպէսզի իր պատուիրաններն օգտակար լինեն մեզ համար, քաղցր ու թեթեւ, որ չասեն. «Նրա պատուիրանները ծանր ու դժուարին են, այդ պատճառով չկարողացանք կատարել»: Արդ, եթէ չէք կարող կարդալ ու կատարել Հին Օրենքը, Մարգարէներն ու Աւետարանը, - ասում է Սուրբ Գրիգոր Տաթեւացին, - ապա կատարեք Տիրոջ պատուիրանը, որ ասում է՝ սիրեցէք միմեանց: Դրանով կը լինենք կատարողները Աստծոյ բոլոր պատուիրանների»: Դրա մասին է խօսում Սուրբ Պօղոսը Հռոմայիցիներին ուղղուած թղթի ԺԳ գլխում: Յիւրաւի, Սէրն է քրիստոնէութեան դրոշմը: Քանզի Տէրն ասում է. «Եթէ դուք միմեանց սիրեք, դրանով բոլորը պիտի իմանան, որ դուք՝ իմ աշակերտներն էք» (Յովհ. ԺԳ 35): Եւ տարիներ անց, Տիրոջ սիրեցեալ աշակերտը պիտի ասէր. «Սէրը նրանով ճանաչեցինք, որ Յիսուս իր կեանքը տուեց մեզ համար. մենք էլ պարտաւոր ենք մեր եղբայրների համար տալ մեր կեանքը: Ով այս աշխարհի բարիքներից ունենայ եւ տեսնի իր եղբօրը մի բանի կարօտ ու փակի իր սիրտը նրա առաջ, Աստծոյ սէրը ինչպէ՞ս կարող է բնակուել նրա մէջ: Որդեակներ, խօսքերով եւ լեզուով չսիրենք, այլ՝ գործով եւ ճշմարտութեամբ» (Ա Յովհ. Գ 16-18): Այսպիսով, Տէրը մեզանից զոհաբերական սէր է ցանկանում, այսինքն՝ կատարեալ ողորմածութիւն, առանց որի չի փրկուի ոչ ոք: Ողջ Աւետարանն է բազում օրինակներով ուսուցանում դա: Յիմար կոյսերը չունենալով ձեթ, այսինքն՝ ողորմութեան գործեր, դուրս մնացին հարսանիքի սրահից, եւ լսեցին Տիրոջից. «Ձեզ չեն ճանաչում»: Յիշենք աղքատ Ղազարոսի ու մեծահարուստի առակը: Իսկ Ահեղ Դատաստանին Տէրը ի՞նչ կ'ասի անողորմ հաւատացեալներին. «Անիծեալներ, գնացէք Ինձանից յաւիտենական կրակը, որ պատրաստուած է սատանայի եւ իր հրեշտակների համար. որովհետեւ քաղցած էի, եւ ինձ ուտելիք չտուիք...» (Մատթ. ԻԵ 41-42): Եւ եթէ նոյնիսկ մարդը ապրի կուսական կեանքով, լինի մեծ ճգնաւոր ու աղօթասաց, բայց չունենայ ողորմածութեան գործեր, չի փրկուի: Դա են սովորեցնում նաեւ եկեղեցու բոլոր հայրերը: Տէրն համբարծուեց Չիթենեաց լեռից, որ նշանակում է՝ ողորմածութիւն (Չիթենեաց լեռան անուանումը յունարէնում նշանակում է ողորմած), դրանով Նա ցոյց տուեց, որ ողորմածութիւնն է դէպի Երկինք տանող ճանապարհը: Նաեւ Տէրն է մեզ զգուշացնում, երբ ասում է, որ չենք կարող միաժամանակ ծառայել Աստծուն եւ մամոնային: Իսկ ո՞վ է ծառայում մամոնային. նա՞ ով անողորմ է եւ սէր չունի: Արդ. «Սրանով են տարբերւում միմեանցից նա՞ ով անողորմ է եւ սէր չունի: Ամէն ոք, ով արդարութիւն չի գործնում, Աստծուց չէ. նոյնպէս նա՞ ով չի սիրում իր եղբօրը» (Ա Յովհ. Գ 10): Եւ ծում, Աստծուց չէ. նոյնպէս նա՞ ով չի սիրում իր եղբօրը» (Ա Յովհ. Գ 10): Եւ քանի որ. «սատանան նման է կապիկի, քանզի Աստծոյ գործերը տեսնելիս, քանի որ. «սատանան նման է կապիկի, քանզի Աստծոյ գործերը տեսնելիս, ինքն էլ է փորձում նոյնը անել », - ասում է Սուրբ Գրիգոր Տաթեւացին, - ապա եւ

զարմանալի չէ, որ նեռը իրեն Քրիստոս կը ներկայացնի, եւ նրա հետեւորդները կը լինեն. «Մարդիկ, որ ունեն աստուածապաշտութեան կերպարանք, սակայն ուրացել են նրա զօրութիւնը» (Բ Տիմ. Գ 5):

Արդ, նա, որ չունի սեր եւ ողորմածութիւն, մնում է անգեղջ մեղքերի մէջ, այսինքն սատանայի կամ նեռի որդի է, որոնք արդէն շատ են աշխարհում (տես Ա Յովի. Բ 18-19, Գործք. Ի 30):

«Բայց ո՞վ է նեռը, մի՞թէ ինքը՝ սատանան: Ոչ,- պատասխանում է Տաթեւացին ու շարունակում,- Նա անօրէնութեան մարդն է, որ չունի ո՛չ բնական, ո՛չ գրաւոր, եւ ո՛չ աւետարանական օրէնքներ: Նա Բարի գործերի, ճշմարտութեան, սուրբ հաւատի հակառակորդն է ու կործանողը: Նա հակառակում է խաչին, եկեղեցական արարողութիւններին, սրբութիւններին, աղօթքին, պահքին եւ այլն»:

Արդ, որտեղի՞ց է գալու նեռը: Լսենք կրկին Ս. Գրիգոր Տաթեւացուն. «Նա կը յղացուի սերմից ու կը ծնուի պոռնիկից, դեռ մօր արգանդում նրա վրայ կ'իջնի չար ոգին: Նման զօրութեամբ ու ներգոծութեամբ կը ծնուի, կը սնուի ու կը հասնի երիտասարդութեան եւ այդ պատճառով էլ նա սատանայի որդի կը լինի: Կը ծնուի Բաբելոնում, կը սերի Դանի ցեղից, կը գայ Երուսաղէմ եւ կը թլփատուի, հրեաներին կ'ասի՝ ես եմ խոստացեալ քրիստոսը, իսկ հրեաները նրա համար տաճար կը կառուցեն: Նեռը լինելու է սարսափելի բղջախոհ ու կնամուլ, բայց շատերին հեշտութեամբ խաբելու համար, իրեն ներկայացնելու է իբրեւ կոյս եւ սուրբ: Լինելու է նենգ ու հպարտ, հակառակուելու է Աստծուն, մարդկանց ստիպելու է երկրպագել իր պատկերին... Սատանան նրա մէջ է ամբարելու ողջ չարիքը, մեղքի եւ կախարդութեան բոլոր տեսակները, որ խաբի բոլոր մարդկանց... Նրան զսպելու է հրեշտակը, այսինքն՝ ոչ ոք չի ճանաչի նրան մինչ այն օրը, երբ նա կը յանդգնի իրեն որպէս Աստուած ներկայացնել, այդժամ հրեշտակը կը հեռանայ նրանից, եւ բոլորը կ'իմանան, որ նա է գազանը, որ դուրս է գալիս ծովից... Եբրայերէն նրա անունը *արնավիմէ* է, որ նշանակում է՝ ուրանում եմ, յունարէն՝ *անտելիոս*՝ հակառակորդ, լատիներէն՝ *տիտան*՝ հսկայ: Եւ հարկ է իմանալ, որ նրա անունը ջնջուած է Սուրբ Գրքից, այդ պատճառով էլ նրան տարբեր անուններ են տալիս»: Ըստ Տաթեւացու՝ Տէրը նրան անուանում է պղծութիւն եւ սուտ քրիստոս, Յովհաննու Յայտնության մէջ՝ գազան, Յովհաննէսը նրան անուանում է նեռ, Պօղոսը՝ անօրէնութեան մարդ, կորստեան որդի:

Գրաբարում 600, 60, 6 թուերից իւրաքանչիւրը թարգմանում է՝ համապատասխան հայոց տառերի թուային համարժեքով. 600-Ու, 60-Կ, 6-Ձ, որ նշանակում է՝ «Ուրանամ Կամաւ ՁԱրարիչն երկնի եւ երկրի»՝ կամովին ուրանում եմ երկնքի եւ երկրի Արարչին: Ահա այս դրոշմն է նեռը դնելու մարդկանց ճակատին ու աջ ձեռքին:

Արդ, ինչպէ՞ս է նեռը խաբելու մարդկանց: Ս. Գրիգոր Տաթեւացին բերում է մի շարք օրինակներ: Դիտարկենք դրանք:

Կ'ըմբոստանայ եկեղեցու դէմ՝ ընդդիմանալով ուղղափառ վարդապետութեան քարոզչութեանը, շատերին խաբելու համար՝ իր սուտ մարգարէների, առաքելների եւ վարդապետների միջոցով կը քարոզի սուտ վարդապետու-

թիւն, ինչը եւ տեսնում ենք այսօր աղանդաւորական քարոզիչների եւ քարոզների բազմացմամբ:

Մատնանշենք միայն, որ այսօր բոլոր աղանդները միաբերան պնդում են 1000-ամեայ Թագաւորութեան մօտալուտ գալուստի մասին, եւ որ իրենք՝ Յիսուսի հետ միասին, 1000 տարի «թագաւորելու» են այս աշխարհում: Բայց Ս. Գրիգոր Տաթեւացին այլ բան է ասում. «Քրիստոսի առաջին գալուստից մինչեւ երկրորդը 1000 տարի է» (1000-ը կատարեալ թիւ է, եւ պարտադիր չէ այն հասկանալ բառացի՝ 1000 տարի): Այդպիսով հասկանալի է դառնում, թէ ում թագաւորութիւնն են նրանք քարոզում, եւ դրանով պատրաստում մարդկանց նեղի գալուստին, քանզի երբ նա գայ, բոլորը նրա մէջ կը տեսնեն իրենց «փրկչին», կ'երկրպագեն նրան՝ նրա հետ թագաւորելու համար:

Իսկ նա ընդամենը երեք ու կէս տարի կը թագաւորի երկրի վրայ, եւ նրա գահը կը լինի Երուսաղէմում: Այդ օրերին կը լինեն մեծ նեղութիւններ, որից յետոյ Իր զօրութեամբ ու փառքով կը գայ մեր Տէրը՝ նեղին նախապէս սպանելով Ձիթենեաց լերան վրայ: Հետաքրքիր է, որ այսօր բոլոր աղանդներն ընդունում են հրեաներին՝ իբրեւ ընտրեալ ժողովուրդ եւ չափազանց շահագրգիռ են Իսրայէլի բարգաւաճմամբ: Շատերը նոյնիսկ գալիս են Իսրայէլ եւ հիւանդանոցներում եւ այլ հասարակական վայրերում անվարձահատոյց աշխատում հրեաների համար, իսկ ահա հրեայ աղանդաւորները կարծում են, որ երբ Քրիստոսը երկիր կը գայ, ապա իրենք կը թագաւորեն, իսկ միւս քրիստոնեաները կը ծառայեն իրենց: Ասենք նաեւ, որ աղանդաւորները չեն ընդունում խաչը, խաչակնքումը, եկեղեցական արարողութիւններն ու աղօթքները եւ այլն, իսկ երբ նեղը գայ, կը հակառակուի խաչին, եկեղեցական արարողութիւններին, սրբութիւններին, աղօթքին, պահքին եւ այդպիսով կը խաբի նրանց:

Կը սկսի հրաշքներ գործել, տեղափոխելով լեռներն ու ծառերը, բժշկելով, ինքն իրեն մեռած ցոյց կը տայ եւ երեք օր յետոյ յարութիւն կ'առնի, եւ այդ ամէնը՝ կախարդութեամբ ու խաբէութեամբ: Ս. Գրիգոր Տաթեւացին բերում է եւս մէկ հետաքրքրական օրինակ. նեղը չար ոգու միջոցով, մարդկանց այլ լեզուներով խօսել կը տայ, ինչը եւ տեսնում ենք այսօր խարիզմատիկների (հոգեգալստականներ) միջավայրում: Յիշենք նաեւ բազում հիւանդութիւններից բժշկութիւն խոստացող էքստրասենսներին, եւ նոյն այդ խարիզմատիկներին, որոնք նոյնպէս մասսայական բժշկութիւններով գրաւում են մարդկանց: Իսկ ի՞նչ է ստացւում արդիւնքում (նկատի չունեն հոգեւոր եւ հոգեկան հետեւանքները), նրանց ձեռքն ընկած մարդկանցից շատերի ենթագիտակցութեան մէջ նստած է հրաշքի մասին սխալ պատկերացումը, որ եւ նեղին հնարաւորութիւն կը տայ իշխելու նրանց (ցաւօք, այս երեւոյթը տեսնում ենք նաեւ եկեղեցու զաւակների միջավայրում, որոնք հենց միայն հրաշքի են սպասում):

Գամծերի միջոցով հնարաւորութիւն կը տայ հարստանալ ազահներին, ընչաքաղցներին, ժլատներին եւ անողորմներին, քանզի ինքը նոյնպէս գամծ կը գտնի եւ կը հարստանայ: Իսկ փողը անսահմանափակ իշխանութիւն է, եւ այսօր մենք ականատես ենք թէ ինչպէս են շատերը հարստանում: Ազահներին Ս. Գրիգոր Տաթեւացին համեմատում է ջրգողութեամբ հիւանդի հետ, ով ինչքան էլ խմի, աւելի է ծարաւում, եւ սա է չարիքի արմատը (յիշենք Քրիստոսի մատ-

նութիւնը): Եւ բնաւ զարմանալի չէ, որ նեռի օրերին փողասէրները կ'երկրպագեն չարին եւ կ'ուրանան Քրիստոսին: Այդ պատճառով է Տէրը զգուշացնում մեզ, որ անհնար է ծառայել եւ Աստծուն եւ մամոնային, իսկ Պօղոսը ազահութիւնը նոյնացնում է կռապաշտութեանը (տես Կողոս. Գ 5): Նեռը իրեն չընդունողներին ուժով կը ստիպի երկրպագել: Իսկ այդ օրերի սրբերն աւելի զօրաւոր կը լինեն, քան նախկինները,- համարում է Ս. Գրիգոր Տաթեւացին:

Այժմ, դիտարկենք, թէ ի՞նչն է օգնելու վերջին օրերի քրիստոնեաներին.

Ա. Տէրը նախօրօք զգուշացրել է մեզ. «Սուտ քրիստոսներ եւ սուտ մարգարէներ պիտի ելնեն եւ մեծամեծ նշաններ ու զարմանալի գործեր պիտի ցոյց տան՝ Աստծոյ ընտրեալներին անգամ մոլորեցնելու աստիճան, եթէ հնար լինի: Ահա ձեզ առաջուց ասացի: Ապա եթէ ձեզ ասեն՝ ահա՛ անապատի մէջ է, չելնէք, կամ թէ՛ ահա մառանում է, չհաւատաք» (Մատթ. ԻԴ 24-26):

Բ. Առաքեալն ասում է, թէ նրանց, ովքեր հաստատում են հաւատի ու ճշմարիտ վարդապետութեան մէջ, եւ ապրում են բարեպաշտ կեանքով, նեռը չի կարող յաղթել: Կը պարտուեն նրանք, ովքեր ունեն անկատար հաւատ, տգէտ են վարդապետութեան մէջ, սիրում են հարստութիւն եւ վախկոտ են:

Գ. Կ'օգնեն Ենովքն ու Եղիան, ովքեր երկիր գալով՝ կը բացայայտեն նեռին եւ կը հաստատեն հաւատացեալների սրտերը: Ինչպէս Քրիստոսի առաջին գալուստի ժամանակ նախակարապետը Ս. Յովհաննէս Մկրտիչն էր, այնպէս էլ երկրորդի ժամանակ այս երկուսը կը լինեն վկաներ: Նեռը կը սպանի նրանց: Երեք օր յետոյ նրանք յարութիւն կ'առնեն եւ փառքով կը համբարծուեն երկինք: Իսկ երբ նեռը կը տեսնի, որ խայտառակուել է, կը բարձրանայ Ձիթենաց լեռը, որպէսզի նոյնպէս համբարծուի երկինք: Ահա այստեղ էլ Տէրը նրան կը սպանի՝ Իր բերանի շնչով: Երկնքում կը յայտնուի Մարդու Որդու նշանը, այսինքն՝ Խաչը, եւ տեսանելի կը լինի 45 օր, մինչեւ Երկրորդ Գալուստ: Այդ օրերին խաղաղութիւն ու անդորր կը լինի Եկեղեցու եւ ապաշխարութեան նպատակով Եկեղեցուց հեռացածների համար: Հրեաները դարձի կը գան, քանզի ոչինչ չի խանգարելու եւ գայթակղեցնելու մարդկանց: Իսկ նեռի ծառաները նրա կործանումից յետոյ կ'ուրախանան, կ'ուտեն ու կը խմեն, կին կ'առնեն, ինչպէս Նոյի ժամանակներում էր, քանզի կը տեսնեն խաղաղութիւնն ու անդորրը եւ կ'ասեն. « արդ խաղաղութիւն եւ անվտանգութիւն է», եւ այդ-ժամ՝ չսպասուած կը գայ նրանց կործանումը:

Դ. Այդ օրերին օգնական կը դառնայ նաեւ ժամանակը, այսինքն՝ տարին կ'անցնի ինչպէս ամիս, ամիսը՝ շաբաթ, շաբաթը՝ օր: Կը կրճատուեն նեռի օրերը, որ մեծ նեղութեան օրեր են, եւ այդ օրերը կը լինեն 1275, այսինքն՝ 3,5 տարի:

Իսկ հիմա խօսենք նեռի դրոշմի մասին: Արդէն ասել ենք, որ 600, 60, 6 թուերը թարգմանում են համապատասխան հայոց տառերի թուային համարժեքի: 600- Ու, 60- Կ, 6- Ձ եւ նշանակում են՝ «Ուրանամ Կամաւ ՁԱրարիչն երկնի եւ երկրի»: Եւ այս դրոշմը դրուելու է մարդկանց ճակատին ու աջ ձեռքին (ուշադրութիւն դարձրէք՝ ոչ թէ մաշկի տակ, այլ վրայ...):

Սուրբ Գրիգոր Տաթեւացին ասում է, որ ինչպէս արքաների հրովարտակներն առանց դրոշմի ոչինչ են, այնպէս եւ յանուն Սուրբ Երրորդութեան մկրտուածն ունի դրոշմ: Եւ Երկնային Արքայի հրովարտակն էլ է անընդունելի

եթէ չունի եւս 6 դրոշմ, այսինքն ողորմութեան 6 տեսակները, որոնց մասին էլ կ'ասի Տէրը Իր ընտրեալներին. «Եկէք, իմ Զօր օրհնեալներ, քանզի ձեր հրովարտակը բարի է եւ դրոշմուած է վեց դրոշմներով, քանզի քաղցած էի, եւ ինձ ուտելիք տուիք...», իսկ մեղաւորներին կ'ասի. «Անիծեալներ, գնացէք ինձնից, քանզի ձեր հրովարտակը դրոշմուած չէ վեց դրոշմներով, քանզի քաղցած էի, եւ ինձ ուտելիք չտուիք...»: Արդ, եթէ մարդը չունենայ այդ վեց դրոշմները (կրկին խօսում ենք ողորմութեան մասին), ապա կ'ունենայ նեղի ուրացման դրոշմը: «Քանզի, երբ նեղը գայ, կը սկսի ուրացման դրոշմ դնել մարդկանց աջ ձեռքին ու ճակատին», - ասում է Սուրբ Գրիգոր Տաթեւացին: Աջ ձեռքին՝ ընդդէմ բարի գործերի, մարդը կ'ուրանայ ողորմութեամբ բարիք գործելը, այսինքն՝ այլեւս ողորմած չի լինի, իսկ ճակատին ընդդէմ մկրտութեան, քանզի կ'ուրանայ Քրիստոսին եւ աներկիւղ կը սկսի մեղք գործել: Եւ ինչպէս քրիստոնեաները ամէն Աստծոյ օր հրաժարուում են սատանայից ու խոստովանում Սուրբ Երրորդութեանը, այնպէս էլ սրանք, ամէն անգամ որեւէ բան ձեռք բերելիս, կը հրաժարուեն Քրիստոսից եւ կ'երկրպագեն նեղի պատկերին: Ս. Գրիգոր Տաթեւացին այս հարցին նոյնպէս պատասխան ունի, ասելով թէ՝ երբ մարդը որեւէ մեղքի մէջ է, ապա իր ներսում կրած Աստծոյ պատկերը փոխւում է գազանի. «Եթէ դու ցանկասէր ես ու կնամոլ, ապա քո մէջ ոչ թէ Աստծոյ պատկերն է, այլ՝ ձիու եւ աւանակի. եթէ հպարտ ես՝ առիծի, եթէ որկրամոլ՝ խոզի, եթէ նենգ ես եւ ստախոս՝ օձի եւ աղուէսի, եթէ գող ես՝ մկան» եւ այլն: Նաեւ, ամէն մեղսասէր քրիստոնեայ, իր համար պատկեր է ստեղծում եւ երկրպագում դրան:

Հետեւութիւնը ինքներդ արեք...

Արդ, աւելի լաւ է երկիւղել Տիրոջ խօսքերից. «Անիծեալներ, գնացէք ինձնից յաւիտենական կրակը, որ պատրաստուած է սատանայի եւ իր հրեշտակների համար. որովհետեւ քաղցած էի, եւ ինձ ուտելիք չտուիք» (Մատթ. Ի Ե 41), քան վախենալ ինչ-որ «Ն» կառավարութիւնից: Պետք է երկիւղել մեղք գործելուց եւ յաւիտենական Կեանքից զրկուելուց, քան վախենալ սոցիալական քարտերը ստանալուց: Այդ բոլոր վախերն ու նախապաշարումները ընդամենը աղանդաւորական իմաստակութիւններ են:

Առաքելական ժամանակների հաւատացեալների համար նեղը ընդամենը Քրիստոսի երկրորդ Գալստեան նշաններից մէկն էր. «Այն օրը չի գալու, եթէ նախ ապստամբութիւնը չգայ, եւ չյայտնուի անօրէնութեան մարդը՝ կորստեան որդին» (Բ Թես. Բ 3): Նրանք միայն մի բան էին մտածում, ինչպէս հաճելի լինեն իրենց Փեսային (վախենում էին միայն մեղք գործելուց), քանզի լցուած էին Նրա հանդէպ սիրով: Ս. Գրիգոր Տաթեւացին ասում է. «Ինչպէս հուրն է միշտ վեր ձգտում, այդպէս էլ աստուածային սիրով լցուած սրբերի սրտերը ձգտում են վեր՝ դէպի երկինք, քանզի մշտապէս ցանկանում են դուրս գալ մարմնից եւ կանգնել Աստծոյ առաջ»: Նաեւ Ս. Պօղոսն է ասում. «Մարմնից դուրս գալը եւ Քրիստոսի հետ լինելը աւելի լաւ են համարում» (Փիլիպ. Ա 23, տես նաեւ՝ Բ Պետ. Գ 12): Այդ պատճառով էլ նրանց համար նեղի յայտնուելը միշտ էր Քրիստոսին արագօրէն միանալու, իսկ Քրիստոսի համար մեռնելը՝ ուրախութիւն: Սուրբ սէրը հոգեւոր պատերազմում մարդուն դարձնում է համարձակ եւ արի, քանզի ջերմ է, իսկ սրտի ջերմութիւնը խօսում է արիւթեան

մասին: Այդ պատճառով էլ, սրտում սուրբ սեր ունեցողը աներկիւղ է: Դա է վկայում Սուրբ Առաքեալը. «Սիրոյ մէջ երկիւղ չկայ. եւ կատարեալ սերը հեռու է վանում երկիւղը» (Ա Յովհ. Դ 18): Արդ. «Ո՞վ պիտի բաժանի մեզ Քրիստոսի սիրուց. տառապա՞նքը, թէ՞ անծկութիւնը, թէ՞ հալածանքը, թէ՞ սովը, թէ՞ մերկութիւնը, թէ՞ վտանգները, թէ՞ սուրը... Որովհետեւ վստահ եմ, թէ ո՛չ մահը, ո՛չ կեանքը, ո՛չ հրեշտակները, ո՛չ իշխանութիւնները, ո՛չ այլ բաներ, որ այժմ կան, ո՛չ բարձրութիւն, ո՛չ խորութիւն եւ ո՛չ մի ուրիշ արարած («չիպեր», թուեր, «շտրիխ կողեր», քարտեր եւ այլն. Ղ. աբղ. Դ.), չի կարող բաժանել մեզ Աստծոյ այդ սիրուց, որ կայ մեր Տէր Քրիստոս Յիսուսով» (Հռոմ. Ը 35, 38-39), քանզի Տէրն ասել է. «Քաջալերուեցէ՛ք, որովհետեւ ես յաղթեցի աշխարհին»: Եւ ընդհանրապէս, ո՞ւր է ձեր հաւատը, քանզի. «Ձեզ իշխանութիւն տուի կոխելու օծերի, կարիճների եւ թշնամու ամբողջ զօրութեան վրայ: Եւ ձեզ բոլորովին չեն վնասելու» (Ղուկ. Ժ 19):

Արդ. «Հատուցեցէ՛ք իւրաքանչիւրին իրենց պարտքերը. որին հարկ՝ հարկը, որին մաքս՝ մաքսը, որին երկիւղ՝ երկիւղը, որին պատիւ՝ պատիւը: Եւ ոչ ոքի պարտապան մի՛ մնացէք, բացի միմեանց սիրելուց, քանի որ, ով սիրում է ընկերոջը, կատարում է օրէնքը... Այս էլ իմացէ՛ք ներկայ ժամանակիս մասին, որովհետեւ հիմա ճիշտ ժամն է, որ մենք քնից զարթնենք. քանի որ փրկութիւնն այժմ մեզ աւելի մօտ է, քան երբոր մենք հաւատացինք: Գիշերն անցաւ, եւ ցերեկը մօտեցաւ. ուրեմն, դէն զցնեք խաւարի գործերը եւ հագնենք լոյսի զրահը. շարժուենք առաքինութեամբ, ինչպէս ցերեկով, ո՛չ անառակութիւններով եւ հարբեցողութեամբ, ո՛չ պոռնկութեամբ եւ պղծութեամբ, ո՛չ նախանձով եւ կռուազանութեամբ. զգեստաւորուեցէ՛ք Տէր Յիսուս Քրիստոսով եւ մարմնին խնամք մի՛ տարէք ցանկութիւնները գոհացնելու համար» (Եբր. ԺԳ 7-8, 11-14):

«Որպէս Աստծոյ ընտրեալներ, սուրբեր եւ սիրելիներ, հագէ՛ք ուրեմն, զութ, ողորմութիւն քաղցրութիւն, խոնարհութիւն, հեզութիւն, համբերատարութիւն՝ հանդուրժելով միմեանց, ներելով միմեանց, եթէ մէկը միւսի դէմ զանգատ ունի. ինչպէս Աստուած Քրիստոսով ներեց ձեզ, նոյն ձեւով արէ՛ք եւ դուք: Եւ այս բոլորի վրայ հագէ՛ք սերը, որ կապն է կատարելութեան: Եւ ձեր սրտերում թող հաստատուի Քրիստոսի խաղաղութիւնը, որին եւ կոչուեցիք մէկ մարմնով. եւ գոհութիւն մատուցեցէ՛ք» (Կող. Գ 12-15):

«Աղաչում եմ ձեզ, եղբայրներ, աչքի անցկացրէ՛ք այնպիսիներին, որ հերձաւածներ եւ գայթակղութիւններ են առաջ բերում այն վարդապետութիւնից դուրս, որը դուք սովորել էք. եւ խորշեցէ՛ք նրանցից, որովհետեւ այնպիսիները մեր Տիրոջը՝ Քրիստոսին չեն ծառայում, այլ՝ իրենց որովայնին. եւ քաղցրախօսութեամբ ու կեղծ գովասանքներով հրապուրում են անմեղների սրտերը: Եւ խաղաղութեան Աստուածը շուտով պիտի խորտակի սատանային ձեր ոտքերի տակ» (Հռոմ. ԺԶ 17-18, 20):

«Իսկ եթէ մէկն ուզում է առարկել, մենք չունենք այդպիսի սովորութիւն, ոչ էլ՝ Աստծոյ եկեղեցիները» (Ա Կորնթ. ԺԱ 16), այլ պարզապէս կ'ասենք. «Նա, ով ամբարիշտ է, թող ամբարշտութիւն անի, ով կեղտոտ է, թող կեղտոտ լինի, ով արդար է, թող արդարութիւն անի եւ ով սուրբ է, թող սուրբ լինի: Ահա գալիս եմ շուտով, եւ ինձ հետ են իմ վարձերը, որպէսզի հատուցեմ իւրաքանչիւրին՝

ըստ իր գործերի: Երանելի՜ են նրանք, որ պահում են նրա պատուիրանները: Նրանք իրաւունք ունեն ուտելու կենաց ծառից եւ մտնելու քաղաքի դռներով: Իսկ շներն ու կախարդները, մարդասպաններն ու կռապաշտները եւ բոլոր նրանք, որ սիրում են սուտը, դուրս պիտի նետուեն: Եթէ մէկը բան պակասեցնի այս գրքի մարգարէութեան խօսքերից, Աստուած պիտի պակասեցնի եւ պիտի կտրի նրա բաժինը կենաց ծառից եւ սուրբ քաղաքից՝ ինչպէս որ գրուած է այս գրքում: Ով այս մասին վկայեց, ասաց. «Ես գալիս եմ շուտով»: Ամէն: Ե՛կ, Տէ՛ր Յիսուս Քրիստոս:

Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը լինի բոլոր սրբերի վրայ: Ամէն» (Յայտն. ԻԲ 11-12, 14-15, 19-21):

Յետգրութիւն


Այսօր, հեշտ է դատապարտել ու չարախօսել հոգեւորականներին: Այո՛, մենք մեղաւոր ենք ու անարժան: Մենք դա ընդունում ենք: Բայց մենք՝ ձեզ չենք դատում (չնայած ունենք այդ իշխանութիւնը), հակառակը, փորձում ենք օգնել ձեզ, կիսել ձեր ցաւը: «Դու ո՞վ ես, որ դատում ես ուրիշի ծառային. կանգնած լինի, թէ ընկած՝ իր տիրոջ համար է. բայց նա կը կանգնի, որովհետեւ կարո՞ղ է Տէրը նրան կանգուն պահել» (Հռոմ. ԺԴ 4): «Տիրոջն է դատելու իրաւունքը, եւ ոչ թէ քոնը,- ասում է Ս. Յովհաննէս Ոսկեբերանը,- դու Տէր չես, այլ յետին ծառայ, դու՛ ոչխար ես, մի դատիր հովիւին, որպէսզի չպատժուես այն բանի համար ինչի մէջ մեղադրում ես նրան»: Այո՛, մենք հայրեր ենք կոչւում, այո՛, մենք վատն ենք, բայց դուք մի՛ եղէք Քամի նման, ով պատմեց հօր մերկութեան մասին եւ դրա համար անիծուեց: Հակառակը, ծածկէ՛ք մեր մերկութիւնը եկեղեցու թշնամիներից: Չէ՞ որ մենք չենք բացայայտում ձեր խոստովանած մեղքերը: Ս. Յովհաննէս Ոսկեբերանն ասում է. «Տէրն Ինքն է թոյլ տալիս, որ հոգեւորականները մեղքի մէջ ընկնեն, եւ դա այն բանի համար, որպէսզի ներողամիտ լինեն ձեր տկարութիւնների հանդէպ»: Ինչ կը լինէր եթէ Պետրոսը չմեղանչէր, կամ հրեշտակները լինէին քահանայ, ոչ ոք չէր փրկուի: Այո՛, հնարաւոր է, որ դուք աւելի զօրաւոր էք հաւատի մէջ, եւ աւելի հոգեւոր, քան մենք: Արդ, կրէք մեր բեռը եւ աղօթէք մեզ համար: Չէ՞ որ երբ դուք աշխատում, հանգստանում, կամ զբաղուած էք ինչ-որ գործերով, մենք աղօթում ենք ձեզ համար: Դուք չգիտէք մեր ցաւը եւ այդ պատճառով էլ դատում էք մեզ, իսկ մենք իմանալով ձեր ցաւը, կրում ենք այն խոնարհութեամբ: Վերջիվերջոյ, հոգեւորականին հասկանալու համար պէտք է հոգեւորական դառնալ, կամ էլ ունենալ մեծ սէր ու ողորմածութիւն, ինչը չունեն նեռն ու իր հետեւորդները: Խնդրում եմ, առաքելական թղթերից կարդացէք Բ Պետրոս Բ գլուխը եւ Յուդայի ուղերձը:

Տ. Ղեւոնդ արեղայ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ

ՀԱՅ ՀՈԳԵՒՈՐ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

Միւհէնտիսեան երաժշտութեան կողքին կը կատարելագործէ նաեւ տպագրական արուեստը ու առաջին անգամ ինքն է որ կը պատրաստէ հայկական ձայնանիշերու մայրերը (կադապարները): Ահա թէ ինչ կ'ըսէ այս մասին Թէոդիկ. «Տարիներ յետոյ, տպագրական արուեստին մէջ երբ կ'առաջդիմէ, շմոռնար իր երբեմնի իտէալն ալ իրագործել, յօրինելով այդ հայկական խաղերու հայր և մայր կադապարները»:⁽¹⁴⁾



ՕՐԻՆԱԿ ԹԻԻ 5

Աւելի ուշ, Արիստակէս Յովհաննէսեան և Յովհաննէս Միւհէնտիսեան, Գ. Երանեանի հետ կ'ամբողջացնեն ուժգնութեան նշանները: Տուեալ նշանները կը դրուին հնչիւններուն վրայ, իսկ ձայնամիջոցներու դադար (silence) տեւողութեան պարագային, կը դրուին հնչիւններէն առաջ կամ վերջ:

Յետագային, Արիստակէս Յովհաննէսեան, աւելի զարգացնելով Լիմոնճեանի համակարգը, կ'աւելցնէ ութնեակներու (octave) դրութիւնը կիսաձայներով, որպէս հիմք օգտագործելով թամպուր նուագարանի մատնասեղերու շարքը: Բարձր ութնեակի համար ձայնանիշին տակ ան կը դնէ կէտ, որ կը կոչուի բարձրանիշ, իսկ ցած ութնեակին համար ձայնանիշին տակ կը դնէ դծիկ, որը կը կոչուի ստորանիշ: Գալով ձայնանիշերուն, որպէսզի կիսաձայներու հետ

Ա. Եօթնեակ (Première octave)

| Չե | Թրքա-արաբ. անուն | Հայկական անուն | Կրճատում | Նմանաձայն փափանկ | Երոսյական անուն |
|----|---------------------|-------------------|-----------|---------------------|--------------------|
| ✓ | Եղեհահ | Փուշ | Փո | Տի | Ré |
| ✓ | Բէս Հիսար | Փուշ կիսվեր | Փո կիսվեր | Տէ | Ré dièse |
| ~ | Աշրան | Էկորճ | Է | Նի | Mi |
| ~ | Բէս Աճեմ | Էկորճ կիսվեր | Է կիսվեր | Նէ | Mi dièse |
| ~ | Արաք | Վերնախաղ | Վէ | Զի | Fa |
| ~ | Կելէշտ | Վերն. կիսվեր | Վէ կիսվեր | Զէ | Fa dièse |
| ~ | Բաստ | Բէնկորճ | Բէ | Բի | Sol |
| ~ | Ջերկիկէ | Բէնկորճ կիսվեր | Բէ կիսվեր | Բէ | Sol dièse |
| ~ | Տիկեհահ | Խոսրովային | Խո | Թի | La |
| ~ | Քիւրտի | Խոսրով. կիսվեր | Խո կիսվեր | Թէ | La dièse |
| ~ | Սէկեհահ | Ներքնախաղ | Նէ | Ֆի | Si |
| ~ | Բուսելիք | Ներքն. կիսվեր | Նէ կիսվեր | Ֆէ | Si dièse |
| ~ | Չարկեհահ | Պարոյկ | Պա | Լի | Do |
| ~ | Սապա | Պարոյկ կիսվեր | Պա կիսվեր | Լէ | Do dièse |

ՕՐԻՆԱԿ ԹԻՒ 6ա

| Չե | Թրքա-արաբ. անուն | Հայկական անուն | Կրճատում | Նմանաձայն փափանկ | Երոսյական անուն |
|----|---------------------|-------------------|-----------|---------------------|--------------------|
| ✓ | Նէվա | Փուշ | Փո | Տի | Ré |
| ✓ | Հիսար | Փուշ կիսվեր | Փո կիսվեր | Տէ | Ré dièse |
| ~ | Հիսեշնի | Էկորճ | Է | Նի | Mi |
| ~ | Աճեմ | Էկորճ կիսվեր | Է կիսվեր | Նէ | Mi dièse |
| ~ | Էվիճ | Վերնախաղ | Վէ | Զի | Fa |
| ~ | Մահուր | Վերն. կիսվեր | Վէ կիսվեր | Զէ | Fa dièse |
| ~ | Կերտանիէ | Բէնկորճ | Բէ | Բի | Sol |
| ~ | Շէինազ | Բէնկորճ կիս. | Բէ կիսվեր | Բէ | Sol dièse |
| ~ | Մոհայեր | Խոսրովային | Խո | Թի | La |
| ~ | Մրմալիկէ | Խոսրով. կիս. | Խո կիսվեր | Թէ | La dièse |
| ~ | Թիզ Սէկեհահ | Ներքնախաղ | Նէ | Ֆի | Si |
| ~ | Բուսելիք | Ներքն. կիս. | Նէ կիսվեր | Ֆէ | Si dièse |
| ~ | Չարկեհահ | Պարոյկ | Պա | Լի | Do |
| ~ | Սապա | Պարոյկ կիս. | Պա կիսվեր | Լէ | Do dièse |

ՕՐԻՆԱԿ ԹԻՒ 6բ

համապատասխանեցնել ու կարգայն ալ աւելի դիւրացնել, զանոնք կը փոխարինէ նմանաձայն միավանկերու:

Լիմոնճեանէ ետք, Արիստակէս Յովհաննէսեանը (1812-1878), անոր աշակերտ Համբարձում Չերչեանը (1828-1901) ու վերջինիս աշակերտ Յակոբոս Այվազեանը (1869-1918) պահպանեցին յիշեալ համակարգը, եկեղեցիներու և դպրոցներու մէջ ուսուցանելով եկեղեցական երաժշտութիւն, այդ կերպ կորուստէ փրկելով Շարակնոցներ, Տաղարաններ ու բազմաթիւ երգեր: Արիստակէս Յովհաննէսեանի աշակերտներէն Գաբրիէլ Երանեան (1827-1862), որը հմտացած էր նաեւ եւրոպական երաժշտութեան մէջ՝ 1858ին իր ուսուցիչին հետ լոյս կ'ընծայէ «Քնար Արեւելեան» ամսաթերթը որը սակայն շատ կարճատեւ կեանք կ'ունենայ: Աւելի ուշ, 1861ին, Գաբրիէլ Երանեան կրկին կը ձեռնարկէ ամսաթերթի հրատարակութեան, այս անգամ իր աշակերտ Նիկողոս Թաշճեանի (1841-1885) ընկերակցութեամբ, և կը կոչէ՝ «Քնար Հայկական»:

1860ին եկեղեցական երաժշտութեան հմուտ՝ Սիմոն Մինեճեանի հսկողութեամբ, Եղիա Տնտեսեան կը սկսի եւրոպական նօթագրութեան վերածել Գաբրիէլ Երանեանի հայկական ձայնանիշերով գրած ձայնագրութիւնները: սակայն Երանեանի վաղաժամ մահով կ'ընդհատուի այս աշխատանքը, որ չէ պահպանուած: Ե. Տնտեսեան 1864ին, եւրոպական նօթագրութեամբ կը հրատարակէ քանի մը շարականներ՝ «Բովանդակութիւն նուագաց Հայաստանեաց Ս. Եկեղեցւոյ» տետր անունով:

Էջ 14-ի վրայ կու տանք Ե. Տնտեսեանի ձայնաստիճաններու «Աղիւսակ Ձայնաստիճանաց», որ համեմատելով արեւելեան ու արեւմտեան պարբերական տատանումները:

1866ին, Ամենայն հայոց կաթողիկոս կ'ընտրուի Գէորգ Դ Կոստանդնուպոլսեցի Քէրէստէճեան (1813-1882), որ մօտէն ծանօթ էր Լիմոնճեանի ձայնագրութեան համակարգին. ան, որպէս շարականագէտ, անմիջապէս կը ձեռնարկէ եկեղեցական երաժշտութեան կարգաւորման գործին: Լիմոնճեանի համակարգը Արեւելեան Հայաստան ներմուծելու նպատակով, 1873ին Գէորգ Դ Պոլսէն կը հրաւիրէ շարականագէտներ Արիստակէս Յովհաննէսեանին, որ տարիքի բերմամբ կը հրաժարի, ապա Պալաթու Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ դպրապետ Հաճի Կարապետ Պաղտատլեանին որպէս աւանդութեանց հմուտ և Նիկողայոս Թաշճեանին որպէս ձայնագրութեան մասնագէտ: Սակայն, եղանակներու ճշդման անհասկացողութեան հարցով Պաղտատլեան Պոլիս կը վերադառնայ: Նիկողայոս Թաշճեան, օգնական ունենալով էջմիածնի միաբան Վահրամ եպսկ. Մանկունին (1846-1920) յատկապէս տպագրական աշխատանքներուն, կը յաջողի ձայնագրել Պատարագը, Ժամագիրքը և Շարակնոցը (խազերը բոլորովին անգործածելի դառնալէ ետք, մեր եկեղեցւոյ երգեցողութիւնը բանաւոր փոխանցուելով

Արեւելեան Ելեւշք - Ճօճումներուն Թիւերը

| | | | |
|-----|--------------|----------|-----|
| 192 | Րիզ չարկեահ | So | 192 |
| 184 | Րիզ բուսելիք | Սի | 180 |
| 170 | Րիզ սեկեահ | | |
| 168 | Սիւմպիլէ | Լա տիէզ | 170 |
| 160 | Մուիայեր | Լա | 160 |
| 152 | Շէինազ | Սօլ տիէզ | 152 |
| 144 | Կերտանիլէ | Սօլ | 144 |
| 138 | Մահուր | | |
| 132 | Եվիճ | Ֆա տիէզ | 136 |
| 126 | Աճէմ | Ֆա | 128 |
| 120 | Հիւսէյնի | Մի | 120 |
| 114 | Հիսար | Րէ տիէզ | 114 |
| 108 | Նեվա | Րէ | 108 |
| 102 | Հիճազ | So տիէզ | 102 |
| 96 | Չարկեահ | So | 96 |
| 92 | Բուսելիք | Սի | 90 |
| 88 | Սեկեահ | | |
| 84 | Քիրտի | Լա տիէզ | 85 |
| 80 | Տիկեահ | Լա | 80 |
| 76 | Ջերկիլէ | Սօլ տիէզ | 76 |
| 72 | Րաստ | Սօլ | 72 |
| 69 | Կեզէշտ | Ֆա տիէզ | 68 |
| 66 | Արաք | | |
| 63 | Բես աճեմ | Ֆա | 64 |
| 60 | Աշրան | Մի | 60 |
| 57 | Բես հիսար | Րէ տիէզ | 57 |
| 54 | Եկեահ | Րէ | 54 |
| 51 | Բէս հիճազ | So տիէզ | 51 |
| 48 | Բէս չարկեահ | So | 48 |

Արեւմտեան Ելեւշք - Ճօճումներուն Թիւերը

ու աղաւաղուելով յայտ եկած են տեղական տարբերակներ: Հետեւաբար Ն. Թաշճեանի գրառումը եղած է Գէորգ Դ-ի երգածէն որուն մասնակցած է նաեւ Մակար Եկմալեան): Այսպիսով, Արեւելեան Հայաստանի և Պարսկաստանի բոլոր եկեղեցիներէն ներս պարտադիր ու վաւերական կը դառնան նոյն Շարականոցն ու եղանակները, իսկ հայկական բոլոր դպրոցներուն մէջ կը սկսին ուսուցանել Հ. Լիմոնճեանի ձայնագրութեան սկզբունքը: Գէորգ Դ կաթողիկոսին ջանքերով հրատարակուած նորատիպ Շարականոցը Պոլսոյ մէջ նոյն խանդավառութիւնը չի գտներ, ինչ որ գտած էր Արեւելեան Հայաստան: Շատ մը եղանակներ ձայնագրման ընթացքին մաքրուած ըլլալով արեւելեան աղաւաղումներէ, չէին նմաներ Պոլսոյ երաժիշտներուն ու տիրացուներուն յայտնի տարբերակներուն: Այս անգամ, Պոլսոյ մէջ Եղիա Տնտեսեան, Նիկողոս Թաշճեանի ձայնագրած Շարականոցի որպէս հաւաքակորդ, հինգ հատորով կը ձայնագրէ «Պոլսական» տառատեսակը:

Հայ եկեղեցական երաժշտութիւնը իր վերելքն ապրեցաւ ԺԹ. դարու վերջաւորութենէն մինչեւ Ի. դարու սկիզբը, շնորհիւ Կոմիտաս Վարդապետի, որուն համոզումով «հայն ունի ինքնուրոյն երաժշտութիւն»⁽¹⁵⁾, և անոր հիմնած զուտ հայկական երաժշտական դպրոցին:

Կոմիտասի նպատակներէն մէկը եղած է խազերը վերծանելու հարցը. ուսումնասիրելով Լիմոնճեանի համակարգը և հմտանալով եւրոպական երաժշտութեան մէջ, ան կրցած է որոշ չափով իր նպատակին հասնիլ: Պոլսոյ պատրիարքական տեղապահ Յովհաննէս Արշարունիին յղած իր 19 Մարտ 1909-ի նամակին մէջ, Կոմիտաս վրդ. կը գրէ «գտայ մեր հին խազերի հիմնական բանալին և սկսայ կարդալ պարզ խազերով գրուածներ»⁽¹⁶⁾

1895ին, Կեսարիոյ Թեմի առաջնորդ Տրդատ Եպսկ. Պալեան (1888-1911), Ս. Դանիէլի վանքին մէջ կը գտնէ կանոնադիրք մը՝ հայ խազաբանութեան մասին: Կոմիտաս քանիցս խնդրած էր Պալեան Եպիսկոպոսէն որ յիշեալ ձեռագիրը իրեն ուղարկէ, ընդօրինակելով և կամ լուսանկարել տալով, որպէսզի կարողանայ համեմատել օտար ազգերու երաժշտական խազաբանական օրէնքներուն հետ: Սակայն Սրբազանն առաջարկած էր ձեռագիրը Կոմիտասին ծախել, 300 ռուբլիով: Կոմիտաս իր, 9 Յունուար 1909ին, Պոլսոյ Պատրիարք Մատթէոս Արքեպսկ. Իսմիրլեանին (1845-1910) յղած նամակին մէջ, կը գրէ «... Սակայն ի զարմանս ստացայ մի գիր, որով առաջարկում էր ինձ վճարել 300 ռուբլի և ձեռք բերել այդ նորագիտ ձեռագիրն՝ իբր սեփականութիւն: Ես ի վիճակի չէի մի այդպիսի ապօրէն գործ կատարելու ...»⁽¹⁷⁾

Երկար պրպտումներէ ետք, Կոմիտաս կը գտնէ որոշ խազերու բանալին: Այս մասին, 15 Մարտ 1910ին, յօդուած մը կ'ուղարկէ Պոլսոյ «Տաճար» կիսամսեայ հանդէսին՝ «Շարականի խազերի նշանակու-

թիւնը» վերնագրով, որը կը տպագրուի չորս տարի ետք 1914 թ. Մարտ 15ին: Ստորեւ կը բերենք խմբագրապետ Գարեգին իյաչատուրեանին (1880-1961) յղած Կոմիտաս վրդի յիշեալ յօդուածը՝ որոշ կրճատումներով: «Իրաւ է, ես գտել եմ հայ խազերի բանալին և նոյնիսկ կարդում եմ պարզ գրուածքները, բայց դեռ վերջակէտին չեմ հասել ... ձեռքիս տակն եղած խազերը, այն էլ անուն ունեցողները, 198 հատ են առայժմ, մի կողմ թողնենք դեռ անանուն խազերը ...: Առայժմ երկու խօսքով ամփոփեմ, թէ ինչ տարրեր ունի հայ խազաբանութիւնը:

- | | |
|-----------------------|----------------------------|
| Ա. Ձայնաստիճանի խազեր | Է. Առոգանութեան խազեր |
| Բ. Ձայներանգի խազեր | Ը. Կէտադրութեան խազեր |
| Գ. Ձարդախազեր | Թ. Ոճոական խազեր |
| Դ. Ձայնութի խազեր | ժ. Կապող և զատող խազեր |
| Ե. Ամանակի խազեր | ժԱ. Կիսանիշ խազեր, եւայլն: |
| Զ. Բանալի խազեր | |

Մի այսպիսի ուսումնասիրութիւն կատարելութեան հասցնելու համար պէտք է ներհուն լինել տիրապէս սա հիմնական ուսմունքներին ու գիտութիւններին՝ տաղաչափութեան, վանկաչափութեան, բառաչափութեան, տողաչափութեան, առոգանութեան, խազագիտութեան, լեզուին (բառերի իսկական և հին առման), իմաստասիրութեան (երկրաչափութեան, թուաբանութեան, աստղաբաշխութեան և երաժշտութեան՝ հին առմամբ), խազերի ծագման, զարգացման, անկման և արդի պատմութեան, համեմատական խազաբանութեան և այլն, և ապա կարելի է գաղտնիք երեւան հանել: ... Յոյս ունեմ, թէ մօտիկ ապագայում, առանձին հատորներով, հասարակութեան սեփականութիւն պիտի դառնայ»:⁽¹⁸⁾

Կոմիտաս վարդապետի անժամանակ ու տարաբախտ մահով Հայ Եկեղեցւոյ հոգեւոր երաժշտութիւնը մնաց դարձեալ անմեկնաբանելի: Յուսանք, որ պիտի գտնուին մասնագէտ երաժիշտներ, որոնք պիտի շարունակեն անոր սկսած գործը, հասցնելով զայն յաջող աւարտի:

Անուրանալի է Հ. Լիմոնճեանի և անոր հետեւորդներու թողած աւանդը մեր եկեղեցական երաժշտութեան պատմութեան մէջ: Անոնց չնորհիւ է որ ի սպառ կորուստէ փրկուեցաւ երգային մեր ազգային ժառանգութիւնը:

ԺԹ. դարէն սու այսօր, ունեցած ենք բազմաթիւ երաժիշտներ, որոնք իրենց յօրինումներով ու մշակումներով ոչ միայն ճոխացուցած, այլ նաեւ հարստացուցած են եկեղեցական մեր արուեստը: Արցած, արժանին պէտք է հատուցել անցեալի մեր հոգեւոր երգերու դարեւ, արժանին պէտք է հատուցել անցեալի մեր հոգեւոր երգերու յուրեալ մշակներու շառաւիղը հանդիսացող երաժիշտներու այդ փաղանքին, որոնց անունները կը բերենք ստորեւ: Աբգար Է., Ագ-

նաւորեան Զ. Արքեպսկ., Աթայեան Ռ., Աթմաճեան Բ., Ալթունեան Ռ., Այտնեան Հայր Ա., Արիստակէսեան Է., Բաբաջանեան Ա., Բարիքեան Մ. Վրդ., Գալֆաեան Գ., Գրիգորեան Ռ., Դանիէլ Երաժիշտ (Դանիէլեան Գ.), Եարտըմեան Ռ., Եկմալեան Մ., Թահմիզեան Ն., Էմմիաեան Փ., Կանաչեան Բ., Կարա-Մուրզա, Կոմիտաս Վարդապետ, Կրասիլինիցկին Լ., Ղազէլեան Մ., Ղորղանեան Ռ., Մանաս Է., Մէյխանաճեան Խ., Յակոբեան Ե., Յարութիւնեան Ալ., Չէքիջեան Յ., Չօրէքճեան Գէորգ Զ. Կաթողիկոս, Չիլինկիրեան Լ., Պազիլ Լ., Պարթեւեան Ա., Պէրպէրեան Հ., Պէրպէրեան Օ., Պիանկինի Փ., Սարգիսեան Վ., Սրապեան Հայր Ղ., Տիգրանեան Ա., Փիտէճեան Գ.:

Մոնթրէալ

ՍԱՄՈՒԷԼ ՔԵՕՇԿԷՐԵԱՆ

Ծանօթագրութիւններ. —

- (14) Թէոդիկ, Տիպ ու տառ (Կ. Պոլիս, հրատարակութիւն և տպագրութիւն Վ. և Հ. Տէր-Ներսէսեան, 1912):
- (15) Կոմիտաս, Հայն ունի ինքնուրոյն երաժշտութիւն, Յողուածներ և ուսումնասիրութիւններ (Տէս Ա. Վրդ. Օղլուզեան, Գրական ճշխարք Կոմիտաս Վրդ.ի բեղուն գրչէն, Մոնթրէալ 1994, էջ 135):
- (16) Կոմիտաս, Նամակներ, Գրականութեան և արուեստի թանգարանի հրատարակութիւն, Երեւան 2000, էջ 12:
- (17) Տէս նոյն, անդ, էջ 56:
- (18) Տէս նոյն, անդ, էջ 72-73: Տէս նաեւ «Տաճար» թիւ 10, Պոլիս 1914, էջ 311:

ԻՍԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

ՅԱԿՈԲ ՆԵՐՍՈՅԵԱՆ

«ՀԱԻԱՏՔ, ՅՈՅՍ, ՍԷՐ»

Մենք՝ մահկանացուներս, ապրելով ժամանակի եւ տարածության սահմանափակումների տակ, առ հասարակ, անխուսափելի կերպով ենթակա ենք մեր սիրոյ եւ յանձնառութիւնների կարգաւորմանը եւ դասաւորումին: Մենք սովորաբար սկսում ենք մեր անձերով, ապա լայնացնում ենք մեր մտահոգութիւնը՝ ներառնելով մեր ընտանիքը, մեր համայնքը, մեր ազգը եւ մեր մշակոյթը: Պարզապէս, դա բնական է, գուցէ այդպէս վարուելը նոյնիսկ տրամաբանական է, ինչպէս շատ մտածողներ՝ ներառեալ փիլիսոփաներ եւ իրաւական փորձագէտ Մայրթա Նուսբաումը, իր վերջերս լոյս տեսած *Մոքի Ժայթքում* գրքում մատնանշում է: Դժբախտաբար, ցաւալին այն է, որ ամէն ոք նոյն բանն է անում, այդ իսկ պատճառով միշտ բախումներ, սպանութիւններ, ահաբեկչական արարքներ եւ պատերազմներ կան անհատների, ընտանիքների, համայնքների եւ մշակոյթների մէջ եւ միջեւ: Բախումներ եւ սպանութիւններ չեն լինի, եթէ մարդիկ լռելեայն կամ այլ կերպ երկարաձգեն իրենց աստիճանաբար հատնող (բայց երբէք ամբողջովին չսպառող) հետաքրքրութիւնը ներառնելու միւս անհատին, միւս ընտանիքին, միւս համայնքին, միւս ազգին, մշակոյթին եւ վերջապէս ամբողջ աշխարհը, ոչ միայն ներկայի եւ ապագայի աշխարհը, այլ, անշուշտ, նաեւ անցեալի աշխարհը, քանի որ ստեղծումը մի աշխարհի, որտեղ խաղաղութիւն պէտք է լինի եւ բնական հարաւորութիւնների արդար բաշխում, մասամբ նշանակում է երախտագիտութեամբ հետեւել այն բոլոր մարդկանց, որոնք աճանաւորւումով աշխատեցին՝ մարդկութեանը մի փոքր մօտեցնելու համար կատարեալին: Բրիտոս եկաւ, որպէսի մեզ փրկի իւրացման կենտրոնի հակումից, սեփականացման դիտումներով մշտական պայքարի մէջ լինելով ուրիշ այդպիսի կենտրոնների հետ: Նա եկաւ, որպէսի մենք կարողանանք ապակենտրոնանալ եւ վերակենտրոնանալ Սուրբ Երրորդութեան մէջ:

Ըստ Բրիտոսի այս ուսուցման՝ որոշ փիլիսոփաներ, որոնք բացայայտ շեշտել են, որ իրենք մերժում են Բրիտոնութիւնը, այդուհանդերձ նրանք ասել են, որ մարդկային կարեւոր բարոյական պարտաւորութիւն է, անձը վարժեցնել այնպէս, որ դա նախընտրութիւնը տայ այն արժէքներին, որոնց կարելի է մասնակից եւ բաժնէկից լինել: Արեգակի գեղեցիկ մայրամուտից բաւարարութիւն ստանալը, մի պարզ օրինակ է: Մի բազմամիլիոնատէր կարող է Վան Գոգի մի կտաւ ունենալ, բայց սահմանափակ իրեն եւ իր ընկերներին միայն ժամանակ առ ժամանակ կտաւին նայել եւ հաճոյք ստանալ: Միլիոնատէր մարդիկ կարող են բաւարարութիւն ստանալ մայրամուտից, առանց այն սեփականացնելու եւ առանց բաւարարութիւն ստանալ մայրամուտից, նուազեցնելու (կամ աւելացնելու): Դա որոշ մայրամուտի վեհ գեղեցկութիւնը նուազեցնելու (կամ աւելացնելու): Դա որոշ չափով թանգարանի «բարոյական» կանոնն է: Գերազանցապէս իրագործուած ներշնչման գործերը, պէտք չէ մասնատոր մէկին պատկանեն, ճիշտ այնպէս, ինչպէս որեւէ յայտարարութիւն, որ կրում է ճշմարտութեան դրոշմը, չի կարող երկայն ժամանակ մարդկութեան միայն մի մասի իրաւատրութիւնը լինել:

Այն, որ որոշ բաներ կարելի չէ ուրիշների հետ կիսուել եւ նրանց բաժնէկից դարձնել, դա կեանքի իրականութիւնն է: Հիւսնոյ մարդը պէտք է իր բոլոր դեղահատերը վերցնի, այլապէս իր առողջութիւնը կը վատթարանայ: Բարոյական

պարտադրություն է, հասարակական պայմանություն առաջացնել և քաջալերել, որ կարգադրություններ կատարուեն, որպեսզի այդ դեղահատերի գինը չափապանց թանկ չլինեն, արտադրողին չափապանց հարստացնելու համար: Բազմաթիվ մատչելի բաներ, որոնք հնարավոր չէ ուրիշների հետ բաժանել և սակայն էական են սովորական, պարկեշտ կեանքի համար, պաշտօնն է սիրոյ և արդարութեան մի աստիճանի, որը յայտնում է մեր միասին ապրելու կառոյցները: Ուրիշների կարգին նաեւ դասական մոտածողները պնդում են, թէ ունենալ նշանակում է հոգաւոր լինել այն բանին, ինչ պատկանում է Աստծուն, քանի որ Աստուած է իրական, ուստի և ամէն ինչի միակ Տէրը: Երբ ես անդրադառնամ, որ, իրապէս, այն ինչ ես ունեմ Աստծուն է եւ դրանք ունեմ Աստծու պարգեւած շնորհների բերումով, ինչպիսիք են աշխատասիրութիւնը եւ որոշ այլ տաղանդներ, ապա պէտք է պատրաստ լինեմ, հարկ եղած դէպքում, դրանք բաժանել՝ համաձայնեցնելով Նրա կամքին, քանի որ Նա է այդ բոլորի Տէրը: Դա համապատասխանում է Սուրբ Պատարագի ընթացքում ասուածին. «Եւ պոյս ի բոյոց քեզ մատուցանեմ, ըստ ամենայնի եւ յաղագս ամենեցուն»:

Մենք փորձեցինք յստակեցնել, թէ քրիստոնէական հաւաքական կեանքը եւ արտաքին քաղաքականութիւնը, այսինքն՝ հաւաքական կեանք եւ քաղաքականութիւն, որոնք կարելի է ճշգրիտ բնութագրել իբրեւ քրիստոնէական, բայց որոնք համաշխարհային են իրենց նպատակով, միանգամայն կարելի է, նոյնիսկ ողջմիտ, բայց դրանք մարդկանց կողմից չեն կիրառուում, որովհետեւ մարդկանց պատճառաբանում կիրքերը հպարտութեան տեղ են տալիս իրենց կամ իրենց առաջնորդների կողմից ծրագրուած որեւէ նախագծի իրագործման համար: Բայց կրքերը յաճախ անձի համար ծառայող ուժեր են, մասնաւորապէս, երբ սրանք պատճառաբանում են: Սի հասարակութիւն, որի անդամները ապաշխարում են, ապա դա այնպիսի հասարակութիւն է, որը չի ապրուի/տարուի անձին ծառայող կրքերով: Ապաշխարութեամբ ձեռք բերած շահաբաժինը մահացու հակասութիւններից ապատ մի աշխարհ է՝ ներառեալ ահաբեկչութիւնը: Հակառակ տիրող կարծիքին, այդպիսի աշխարհ (ստեղծելը) հնարավոր է: Դա հնարավոր է, աշխարհի մէջ Աստծու սեփական անձի տարածումով, Յիսուս Բերիստուսի Անձի միջոցով: Իւրաքանչիւր անհատ, բացայայտօրէն ներառեալ նաեւ պետութիւնների ղեկավարները, այժմ կարող են, եթէ այդպէս ընտրեն, ստեղծել այնպիսի աշխարհ, որը ղեկավարուի սիրով իրականացում արդարապէս օրէնքներով:

Մարդկանց չապաշխարելու պատճառը, ուստի եւ կործանուելու ընտրութիւնը եւ ապաշխարութիւնից նրանց ետ պահողը, այսինքն՝ Աստծու վրայ վերակենտրոնանալուց եւ ապակենտրոնանալուց (Աստուած, որ Սէր է եւ պատրաստ է իրենց սիրոյն մահանալու, որպէսզի նրանք կարողանան Իր մէջ լինեն) - պատճառը այն է, որ մարդիկ իբրեւ մարմնական արարածներ, սահմանափակուել են ժամանակով եւ տարածութեամբ եւ ենթարկուել այսպիսի սահմանափակումներից առաջացած մոլութիւններին եւ փորձութիւններին՝ ներառեալ անտարբերութիւնը եւ ագահութիւնը: Բայց այդ սահմանափակումից ապառուելու միջոցներ կան:

Ժամանակի սահմանափակումից ապառուելու միջոցը, հեռաւոր ապագայի հոգը Աստծու ձեռքերի մէջ յանձնելն է եւ ապրել ըստ Աստծու կամքի, նոյնիսկ, երբ մենք ապրում ենք ժամանակի մէջ: Դա, այլ խօսքով, ներկան ապրելն, է այն ուրախ գիտակցութեամբ, թէ սա այն տարածութիւնն է, որտեղ գոյութիւն ունի յաւերժական Աստուածը: Կեանքը՝ ներկայի մէջ իբրեւ Աստծու ծառայ, *carpe diem*-ի («օգտուի՛ր քո օրից») Հորասէի ներբողներից վերցում փիլիսոփայական արտայայտութեան հոգեւոր հակաօրինակն է, որ Հռոմէացի բանաստեղծ Ռոբերտո

Հերիկը ուրախությամբ ներկայացնում է իբրեւ «Հաւաքիր վարդեր այնքան ժամանակ, որքան որ կարող ես»: Գաղափարն այն է, որ պէտք է մոռանալ ապագայի եւ անցեալի մասին եւ ուրախանալ ներկայ պահով: Այս մակերեսային փիլիսոփայութեան հարցը այն է, որ ներկան մնայուն չէ: Այն անցնում է շատ արագ: Անցեալ երեւում է, եւ ապագան պիտի գայ եւ յամառօրէն դրանք անտեսել, համապօր է, որ անհատին տաւ թմրեցուցիչ, թէպէտեւ աւելի քիչ վնասակար լինի: Աստուծի հոգեւոր հակառակ երեսը, այսինքն՝ ներկայի մէջ ապրելու ընտրութիւնը, որ եթէ նշանակի իմնա հնապանդուել Աստծու կամքին, դնում է անհատի ժամանակը Աստծու յախտենականութեան մէջ եւ մարդկային ներուժի նպատակադրումը իրականացումն է:

Տարածութեան սահմանափակումից ապաստելու միջոցը, աշխարհին ընդհանուր կերպով դիտելու մէջ է եւ, մասնաւորապէս, անհատին յատկացումը բաժնի վրայ, նայել իբրեւ Աստծուց փոխ տրուած մի տարածք՝ գործածելու համար անհատի կեանքի ընթացքին: Բայց իւրաքանչիւր որ նաեւ հասարակական էակ է: Հետեւաբար, իւրաքանչիւր որ պէտք է ուշադիր լինի, որ իր իշխանութեան սահմանների ներսում աշխարհը մի բնակավայր լինի իր բնակիչներին արդար կերպով բաժանուած. ուստի ուշադիր լինի, որ կարելին անի, որ համատեղ դիտեն, ինչպէս օրինակ, արուեստը, գրականութիւնը, դրաման, պարը, գիտական գիտելիքը, գեղեցիկ բնապատկերները, սպորտը, պաշտամունքը, օգտակար փորձառութիւնները դառնան նաեւ ապրանքների արդար բաշխման համար, որ մարդիկ կարիք ունեն պարկեշտ գոյութեան համար: Ինչպէս Սուրբ Պօղոսը յիշեցնում է Տիմոթէոսին. «մշակը արժանի է իր վարձին»:

Արդեօ՞ք մարդիկ քրիստոնէական ընտրութեանը երբեւէ *ամէն* կ'ասեն: Պատասխանը հետեւեալն է. այդ հարցին շատերն են ամէն ասել, շատերն ասում են եւ շատերն էլ դեռ կ'ասեն: Կարող ենք մենք իրաւամբ ակնկալել այնպիսի աշխարհի իրականացմանը, որտեղ մարդկային վանգումները եւ նրանք, ովքեր մնում են վանգումների բնապիւնը, առաջնութիւն տան հոգեւորին, քան թէ սերնդական կապերին եւ վարուեն այնպէս, ինչպէս իրականում նրանք կան, այսինքն՝ սիրող Աստծու պաւակների պէս:

Արդեօ՞ք նրանց արարքները երբեւէ մղում կը լինեն «աշխարհի պաշտպանութեան համար» եւ ոչ թէ իրենց սեփական անձի շահերից: Այդ աշխարհը կ'իրականա՞ւ:

Շունչդ մի՛ պահիր:

Բայց մինչ դու քո շունչդ ես պահում սառնասիրտ ընդունելով հանդիսաւորութեան մէջ թաքնուած մարդկային խենթութիւնը եւ յաւակնոտ արտայայտութիւնների մէջ փաթաթուած մարդկային յիմարտիւնը, թէ՛ բարձր եւ թէ՛ ցածր դասակարգերում, լսիր թոխչի մէջ եղող թռչունի պատմութիւնը, որը պատմել է մի փիլիսոփայ, ամբողջովին այլ կապակցութեամբ: Թռչունը վրդովեց, որ օդի դիմադրողականութիւնը իր թոխչքը դանդաղեցրեց՝ առանց անդրադառնալու, որ առանց օդի նա ի վիճակի չի լինելու ընդհանրապէս թռչելու: Անհատը կարող է ցանկանալ ուրախ ուրախ մարդկային կեանք աշտուել՝ ներքեւում, առանց ժամանակի եւ տարածութեան սահմանափակումների կողմից առաջացած դիմադրութեան եւ առանց դիմադրութեան հետեւողական բարոյական եւ կրօնական հասարակական կարճատեսութեան: Այդ սահմանափակումները եւ կրքերը, որոնք արմատացել են նրանց մէջ, իրօք աշխարհը վերածում են բանոթի կարգավիճակի, որտեղ բնակիչների միջեւ՝ իրար դէմ եւ իրենց պետերի եւ հակիչների դէմ գրեթէ ամէն ժամ մղուող արիւնալի ճակատամարտերը անխուսափելի են: Եւ դա հենց այդ սահմանափակումն է, որ լարում է առաջացնում, ինչպէս այն

անում է բանտից ապառուելու ջանքին, որ աշխարհը հարստացնում է արուեստի եւ գիտութեան մեծ եւ փոքր գործերով: Դա լաւ է, բայց դեռ աւելին կայ:

Նոյնիսկ արուեստի մեծագոյն գործը կամ գիտութեան ամենամեծ իրագործումը չեն կարող մահը յաղթահարել: Դրա համար, բուն հարցին է անդրադառնում եւ անհունօրէն աւելի կարեւոր է, թէ այդպիսի սահմանափակումները, որոնք շղթայում են մարդկային կեանքը եւ մարդկութեանը առաջնորդում դէպի մեղք, կապում են այն սապարէլը, որտեղ նա, ով ընտրում է այդպէս կատարել, կարող է մեղքի վիճակից իր ապառութիւնը ապահովել՝ Աստծու անարգել ներկայութեան մէջ եւ կարող է օգնել, որ իր հարեւանը նոյնը անի: Անհատը կարող է երախտագիտութեան վատահոլութեամբ այդ անել, որ Աստուած իր Միածին Որդուն մեր փոխարէն մեղանշել տայ, որը երբեք չէր մեղանշել: Այսպէսով, Աստուած հանդուրժեց աշխարհի սահմանափակումները մինչեւ մահ, որպէսպի մեզ ապառի մեղքերից, բայց ինքը սահմանափակումների կողմից չառաջնորդուեց մեղքի: Այս կերպով է, որ մենք Տիրոջ ազգու մշակները լինելու առանձնանորիւմը ունենք: Բրիտոնութիւնը մեր փրկութեան յոյսն է: Դա նաեւ աշխարհում մեր գործօն լաւատեսութեան հիմքն է, աշխարհ, որ ինքնընտանքեան, անկոյս կերպով շեղուած է իր ուղուց:

Անգլերէնից թարգմանեց՝

ՅՈՎՆԱՆ ՍԱՐԿԱԻԱԳ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ

12 Մարտ 1913

Ամենապատիւ Տէր,
Տ[էր] Յովհաննէս Արքեպիսկոպոս Արշարունի
Ազգախնամ Պատրիարք, Նախագահ Ազգ[ային] Կեդրոնական
Վարչութեան Հայոց Թուրքիոյ:

Կ. Պոլիս

Կուսակալնիս, Բեամիլ Պէյ, որ ուղղամիտ եւ բարի պաշտօնէի մը գործունէութիւնը ունեցաւ վեց ամիսներ, փոխուեցաւ Նոր Դահլիճին տնօրինութեամբը, եւ իրեն յաջորդեց Գոնիայի նախորդ՝ Ատանայի նախկին կուսակալը Մուսմէր Պէյ, որ աւելի առաջ ալ կառավարիչ էր Կեսարիոյ:

Բոլոր քրիստոնէից եւ թուրք կամ իսլամ տարրերուն լուրջ դասակարգին համար ցաւ պատճառեց Բեամիլ Պէյի հրաժարեցումը, այնպէս որ եթէ իր յաջորդին անուանումին եւ ճամբայ ելնելուն լուրը միանգամայն առնուած չլլար հոս, հաւանական է որ իր վերահաստատման համար հանրագրով ու հեռագրով ինկորպնէր ըլլային:

Նոր Դահլիճին առաջին օրերուն, երբ խուլ կասկած մը կար թէ ոչ-իթթիհատական պաշտօնէականերու փոփոխութիւն պիտի կատարուի, Փետր[ուար] 5 թուակիր եւ 1412 թուահամար պաշտօնագրիս մէջ ակնարկեցի այս մասին, յուսալով որ պէտք տեսնուած ատեն պատշաճը կը գործադրուի ամրապնդելու համար իր դիրքը. բայց, վերջապէս վաղը կը մեկնի հինը, ու քանի մը օրէն տեղս կը հասնի նորը:

Այս վերջինը, Մուսմէր Պէյ, հո՛ւս ալ անձանօթ մը չէ. քաղաքիս մէջ անցուցած է իր պատանեկութիւնը, այս նահանգին ամենէն հեռաւոր եւ վայրագ գաւառակներու մէջ գահնազամութիւն ըրած է տարիներ, ու Օսմ[անեան] Սահանաւորութեան վերահաստատումէն վերջ ալ, ինք եղաւ Իթթիհատի առաջին ղեկավարն ու կապմակերպիչն, պաշտօնս Կոր վերջին անգամ եւս գաղտնապէս վերստին կատարեց, Բեամիլ փաշայի դահլիճին օրով՝ գրեթէ յանձնօթս՝ այցելելով հոս եւ իթիլաֆի ընդարձակումէն տկարացած իր կուսակցութիւնը նորէն Կորացնելով:

Բոլոր Սեբաստացիք կը ճանչնան փնքը. արդարեւ, ուշիւ եւ կորովի անձ մըն է, բայց, տրուած ըլլալով իր թունդ իթթիհատական մը ըլլալը, տրուած ըլլալով նոյնպէս այս կուսակցութեան վերաբերմունքը հանդէպ մեզի, համոզումի մը չափ հօր նախապգացում մը ունինք ամէնքս ալ թէ, Անատոլիի հայութեան հորիզոնին վրայ փտանցի ամէնէն մութ ամպերը կուտակուած այս միջոցին մանաւանդ՝ ծանօթ տրամադրութիւններով եւ սկզբունքներով լեցուած կուսակալի մը գալուստը, երջանկութեան օրեր չէ որ պիտի բերէ մեզի:

Ուստի, կը ինկորեմ որ Պատրիարքարանդ այսուհետեւ մանաւանդ աւելի մտադիր հոգածութեամբ դիտէ Սեբաստիոյ կուսակալութեան Հայոց կեանքն ու կացութիւնը: Կը կրկնեմ. ասկէց առաջ, Անատոլիի ամէնէն հանդարտիկ նահանգն է եղած մերինը, կառավարական խառնութեանց եւ իսլամական մոլեռանդութեան տեսակէտով. այսուհետեւ ալ այդպէս պիտի շարունակուի՝ արդեօք: Կը կասկածիմ շատ ու կը կարծեմ՝ դժբախտաբար՝ թէ նոր շրջանի մը մէջ է որ պիտի սկսինք մոնէլ: Աչքի առջեւ ունեցէք միշտ Սեբաստիոյ Հայութեան ստուարաթիւ՝ կրթապէս ու նիւթապէս բաւական ծաղկեալ դրութիւնը եւ այսպիսի վիճակի մը հանդէպ «արիւնը գլուխին ցառկած»ներու չարանախանձ վերաբերութիւնը:

պատերապմի վախճանի ն մանաւանդ, երբ պարտուած բանակը վերադառնայ իր երկիրը, ու ըստ այնմ հովանաւորեցէք Ձեր հօտը, Ձեր պաւակները:

Կ'անցնիս երկրորդ եւ աւելի կարեւոր կէտի մը.

Հակառակ մեր լուրջ երկիւղներուն թէ Պալքանեան այս պատերապմին միջոցին Իթթիհատականներու կամ ընդհանուր իսլամաց կողմէ անպատճառ լուրջ փորձանք մը պիտի նկատուի Հայոց դէմ, բարեբախտաբար ցարդ ոչ մէկ արտասովոր եւ ցաւաշիթ պատահմունք չեղաւ:

Ասոր պատճառը, եթէ մէկ կողմէն Բեամիլեան Դահլիճին խիստ հսկողութիւնը կամ Եւրոպական պետութեանց հարկադրիչ ստիպումն էր, միւս կողմէն եւս պէտք է ըսել թէ՝ մերայնոց, հայ յեղափոխականաց, լուրջ եւ ծանրակաց ընթացքն էր:

Պատճառներ ունինք մտածելու որ, եթէ մերոնք, երկրին այս տագնապալից կացութեան մէջ, տարուէին ռեալ սիւալ թելադրութենէ ու նոյնիսկ թերթե շարժումի մը ջղածգոյթիւններն սկսէին, պիտի պայթէր ահաւոր վտանգ մը:

Արդէն, յետոյ հասկցանք թէ, այն քանի մը խուլ շշուկներն ալ որք լսուեցան՝ կապմակերպուած կամ կապմակերպուելիք հայկական ջարդերու մասին, կա՛մ հետեւանք էին Զէյթունի մօտերը խլրտած ապստամբութեան մը երեւակայական լուրերուն, կա՛մ դիտմամբ յերիւրուած ձեւակերպութիւններ էին, արգիլելու համար, ըստ մեզ անկարելի, այլ՝ ըստ թորք մտայնութեան յոյժ կարելի նկատուած, հայկական շարժումները:

Այո՛, ամէնքս ալ ուրախ ենք, որ մեր տաքարիւնները, խրատուած անշուշտ անցեալի տխուր դասերէն, շատ իմաստուն շարժեցան, եւ ապցին բարմարկածեան ճակատագիրը թողոյցին իր հանդարտ դրութեան մէջ: Իմաստութիւն կը համարեմ իրենց այս ընթացքը, վասնպիսի համոզումով է որ կ'ըսեմ՝ ռեալ հակառակ ընթացք կատարեալ անխոհեմութիւն պիտի ըլլար եւ պիտի ըլլայ միշտ, ցորչափ կայ եւ կը մնայ սա իրողութիւնը թէ բաւական են այս ապցին ծոցէն հոսած արիւնները, եւ թէ դիւանագիտական զգոյշ խոհականութեան շնորհիւ միայն, պէտք է աշխատիլ լուծում տալու այդ հարցին:

Ցորչափ կայ մեր այս ապգային ցրտածութիւնը, ցորչափ կայ մեր անպէն ու անպաշտպան կացութիւնը, ցորչափ կայ տակաւին արիւնը չհորցած ջարդերուն սարսափն ու արհաւիրքն, ցորչափ կայ մեր ժողովուրդին հացակարօտ չքաւորութիւնը, միւս կողմէ ցորչափ իսլամք իրենց առոնին կեանքին մէջ իսկ այնքան առատ պէնք եւ ռապմամբերք ունին, ցորչափ իրենց կրօնական մոլեռանդութիւնը, պատերապմի այս յուսահատեցնող կորուստներէն վերջը մանաւանդ, այնքան կատաղի կ'ընէ պիւրէնք, ռեալ շարժում եւ խլրտում մերայնոց կողմէն ամենակարճ ժամանակի մէջ կրնայ սմբողջովին սպանդանոցի փոխել բոլոր հայաբնակ գաւառները, եւ այս՝ նորէն անօգուտ կերպով:

Ասո՛ր համար է որ կ'ըսեմ թէ շատ խոհականութեամբ շարժեցան մեր յեղափոխականները, անշուշտ ուղղակի կամ անուղղակի ապդեցութեամբը Ապգ[ային] իշխանութեանց եւ կամ իրենց հեռաւտես եւ լուրջ ընթացքին շնորհիւ, եւ անկեղծօրէն կը փափաքինք վստահ ըլլալու որ այսուհետ եւս պիտի չշեղին նոյն շաւղէն:

Եւրոպական վերհսկողութեան տակ իրապէս բարեկարգուած Թուրքիոյ մէջէն մենք պիտի կրնանք, շնորհիւ մեր պատմական ու գործնական ընդունակութիւններուն, պահել ու պատուով շարունակել մեր ապգային ինքնութիւնը եւ յառաջդիմութիւնը: Պէտք է աշխատիլ այս կերպով միայն: Ռեալ հակառակ շարժում կրնայ վերադառնալ, եւ այս անգամ անվերականգնելի կերպով, վտանգել Ապգը:

Երրորդ կէտ մը.

Պատերապմական թշնամությանց լրման վաղորդայնին, ի՞նչ պիտի ըլլայ գաւառի հայութեան ապահովութեան հարցը: Այգ[ային] Պատրիարքարանդ ի՞նչ կը խորհի այս մասին, կամ ի՞նչ լուրջ միջոցներ ձեռք առնուած են արդեօք այս նկատմամբ:

Վառահ ենք թէ կը հոգար այս մասին, բայց վերջապէս մեր ալ պարտականութիւնն է ըսել եւ խնդրել մեր ընթացիկ պետքերուն համեմատ:

Պոլիս ապահով է անշուշտ, շնորհիւ իր կացութեան եւ մանաւանդ Երուսական պրահաւորներուն, բայց հոս մեր կացութիւնը դառն եւ խիստ անապահով է եւ պիտի ըլլայ, պատերապմն դարձող պիւնտրներու անցքին առէն մանաւանդ, երբ զան պարտեալները, Րումէլի մէջ իբր թէ քրիստոնէից կողմէ կառարուած ջարդերուն տարածայնութիւններն ալ բերելով միասին, մոլեգնութեամբ՝ քրիստոնէից դէմ: Երբ -- ինչպէս հասարակաց պագումը կը կարծէ ընդհանուր կերպով -- Պոլսոյ մէջ ծայր տան քաղաքային ներքին ընդհարումներ, ի՞նչ պիտի ըլլայ գաւառի հայութեան կեանքը:

Մեր միջոցներն ոչինչ են: Ակնկառոյց կը նայինք Այգ[ային] Պատրիարքարանի. փութացէք Սրբապան, կարգադրութիւն մը խորհիլ այս մասին, որպէսզի, ռեւէ ձեռով պառոշաճ դառուած դիմումին, կառավարութիւնը վճռական տնօրինութիւններ ընէ, ապահովելու համար երկրին ու Սահմանադրութեան համար շատ իսկ տառապած եւ Օսմ[անեան] երկրին ստոյգ յառաջդիմութեանը համար անկեղծօրէն Զեր ժողորդեան կեանքը:

Խորին յարգանաց հաւատարմ.
[Սո.] Թորգոմ Եպս Սեբաստիոյ

25 Ապրիլ 1913

Ամենապատիւ Տէր,

Տ[էր] Յովհաննէս Ս[րբապան] Արքեպիսկ[ոպոս] Արշարունի,
Այգախնամ Պատրիարք Հայոց Թուրքիոյ,

Կ. Պոլիս

Այլ փութամ պատասխանել Ձեր Բ[արձրաշնորհ] Սրբապնութեան 8 թուակիր գրութեան, զոր ընդունեցի երեք օր առաջ:

1. Վիճակիս եւ շրջակայից մէջ, կառավարութեան հայեացքը դէպի հայերս՝ համանման է ամենուրեք ընդհանուր հայութեան հանդէպ ցոյց տրուած ոգիին, ըստ ինքեան անկարելորդ եւ երկրորդական խնդիրներու մէջ գոհացում տալու, բայց լեական հայերը անաւագելու եւ իրենց ազգային, կրթական եւ ընկերական դիրքը տկարացնելու թաքուն, բայց հաստատուն քաղաքականութիւն մը:

Վարչական, դատական, պիւնտրական եւ առեւտրական գործերու մէջ կը հետապնդուի միշտ այս ուղղութիւնը, աւելի կամ նուազ քաղցր եւ ճարպիկ հնարամտութիւններով:

Պաշտանեան պատերապմն ի վեր, երբ «հայկական հարց»ը դիւանագիտական ու մանաւանդ լրագրական այժմէութիւն ստացաւ, թէ՛ կառավարական եւ թէ՛ ժողովրդական շրջանակներուն մէջ՝ թուրք մտայնութիւնը աւելի կասկածալից դիրք մը առաւ հայոց նկատմամբ, իսկ Երպիկայի պայթումն ի վեր ներքին տրամադրութիւններն աւելի մթազնեցան, թէւ սիրաշահական քաղաքականութեան ձեւը չփոխուեցաւ տակաւին, եւ եթէ ցաւալի պատահարներ ծայր չտուին ցարդ, պատճառը՝ մասամբ կառավարութեան զսպիչ

զգուշանորոթիւնն է, մասամբ թուրք ժողովուրդին տառամանոտ վերաբերումը դէպի կառավարութիւնն եւ իթթիհատը, եւ մեծագոյն մասամբ՝ Պաքստանէան ձախողումին ապդած ընդհանուր սարսափն ու յառաջ բերած արտաբեկութիւնը:

Թուրք գործիչներ, տեսնելով միւսլիման տարրերէն իւրաքանչիւրին մէջ առանձնապէս եւ իրարու նկատմամբ ընդհանրապէս զոյացած թոյլ եւ անվստահ յարաբերութիւնները, վերջերս շահ զաղտնի կերպով՝ սկսած են գործել նոր ուղղութեամբ մը: Մեր նոր կուսակալին տեղս հասնելէն քիչ վերջը, հոս ուղղութեամբ մը: Երբ իբր թէ իսլամ ցեղերը համախմբել Ղուրանին շուրջը եւ իրենց կրօնին բարոյական ուժովը վերականգնել ժողովուրդին ինկած կեանքը:

Այս՝ իրենց տուած մեկնութիւնն է: Իսկապէս, սակայն, կ'երեւի թէ այդ միութեան նպատակն է Իթթիհատեան եւ Իթելաֆեան վեճերով անհամերաշխած շրջանակներն ու դասակարգերը ձուլել նոր կաղապարի մը մէջ, շինելու համար գործիք մը՝ հաւու պօրութիւն մը, որուն կիրարկութեան ժամանակը, ձեռն ու պարագաները, անշուշտ պատեհութիւններ չ'ըլլան պիտի որոշեն:

Մեր հորիզոնին վրայ անպի նոր կտոր մըն է այս միութիւնը, որ չենք գիտեր՝ ի՞նչ կարկուտ պիտի իջեցնէ օր մը մեր շուարածի գլխուն... Պիտի չուզէինք այս մասին այսքան յոռետես ըլլալ, եթէ չիստէինք ընկերութեան կազմն ու գոյութիւնը չափապանց զաղտնի պահելու մեծ ճիգը:

Կառավարութեան եւ թուրք ժողովուրդին դէպի Հայերս ունեցած կասկածոտ հայեացքին վերջին ու նորագոյն ապացոյցն եղաւ լրտեսական այն հսկողութիւնը, որ ի գործ դրուեցաւ քանի մը օր առաջ, տեղս այցելող ռուս թղթակցի մը (Օլկինսքի) շուրջը: Այս վերջինը, հալաքնակ չորս նահանգները, Վան, Բիթլիս, Տիարպէթի եւ Խարբէրդ իբր հինգ ամիսներէ ի վեր շրջելով, հոս եկաւ անցեալ շաբթուն մէջ, մնաց քանի մը օր միայն, տեղեկութիւններ, վիճակագրական նօթեր հաւաքեց թէ՛ կառավարութենէ եւ թէ՛ քրիստոնէայ շրջանակներէ: Շահ զեշ կերպով ներկայացուց Տիարպէթիի եւ Սղերդի շրջակայից մէջ քուրտ-հայ յարաբերութեանց երկխոյզալիօրէն ձգտուած վիճակը, խիստ դիտողութիւններ ըրաւ կուսակալին՝ կառավարութեան անհոգ ընթացին մասին, խաղաղ ինքնապաշտպանութեան թելադրութիւններ ըրաւ Բրիտանիայ տարրերուն: Ըրած եւ ընդունած այցելութիւնները մանրաքնին կերպով լրտեսուեցան աշխարհի յայտնապէս, որ ինք՝ ռուսը պարտաւորուեցաւ այս մոտ քիստ բողոքներ ընել կառավարչին մօտ: Ար հաւատուն թէ, թղթակցի անունին տակ՝ փնտրական մըն էր այս անձը, անդամ սպայակոյտի, որ մեկնեցաւ դէպի Երպնկա, Կարնոյ գիծով անցնելու համար դէպի Ռուսիա:

Ահա՛ կուսակցութեան վերաբերմունքը դէպի մեզ. հայեացքները՝ մոլթ եւ կասկածոտ, զգացումները՝ յոռի այլ թաքուն:

2. Գրկրպաշները ստուար թիւ մը կը ներկայացնեն Սերասոիոյ նահանգին մանաւանդ Կեդրոնականի սանճաքին մէջ: Միայն քաղաքին մէջ, իբր 3000 տուն կը հաշուուին անոնք, իսկ շրջակայ վայրերուն մէջ շատ տեղեր նոյնիսկ մեծամասնութիւն կը ձեռնացնեն: Այս նկատմամբ ատելի հիմնական մանրամասնութիւններ պիտի հաղորդեմ Պատրիարքարանիդ, Էրք, ի մօտոյ, աւարտուի վիճակագրական մէկ աշխատութիւնս, որուն ձեռնարկած եմ նախորդ ամիսէն ի վեր:

Իրենց քաղաքական ձգտումներուն գալով, հարկ է ըսել թէ իրապէս հակառակ են անոնք թուրք պետականութեան գաղափարին, աշխարհի մեծ ատելութիւն մը կը սնուցանեն իսլամութեան եւ թուրք կառավարութեան եւ ժողովուրդին հանդէպ: Բայց չեմ կարծեր որ իրենց այս տրամադրութիւնները կապնակերպեալ գործնականացումով մը արտայայտելու համար ի վիճակի ըլլան:

ո՛ւեւէ կերպով: Կառավարութիւնն ու իսկամ ժողովուրդն ալ գիտէն թէ գրպլլպաշներ ինչ պգացումներ կը տաճեն իրենց նկատմամբ, բայց գիտէն նոյն ատեն թէ երկիրի լուրջ վտանգ մը չի կրնար ապատուիլ անոնցմէ, չափապանց հալածուած՝, անարգուած եւ այս պատճառաւ՝ խորամանկ ու յաճախ շա՛տ նենգամիտ դարձած համայնք մը են նկատուած ընդհանրապէս: Այսուհանդերձ, ծեծուած երկաթէ պողպատեայ դիմացկունութիւն մը ունին ապրելու եւ տոկալու, եւ, շա՛տ նպատաւոր պատեհութեանց միջոցին, հփօր ձեռք մը կրնայ օգտագործել փրկենք:

Հայերուս հանդէպ իրենց մշակած պգացումներուն կարելի չէ վստահիլ պժմ, ցորչափ տկար կը տեսնեն Կմեպ, չեն կրնար ապահովուիլ մեպմով եւ հետեւաբար նաեւ չեն կրնար ապահովել Կմեպ՝ հանդէպ իրենց: Զօրաւորի՛ն միայն յարելու քաղաքականութիւնը, որ ամէնէն մեծ ու քաղաքակրթուած ապգելուն մօտ իսկ աշխարհավարական առաքելութիւն մըն է եղած դժբախտաբար, իր ամէնէն Կրուելի ձեռովը կ'արտայայտուի ասոնց մէջ: Իսլամներէն հեռացած երեւելու եւ անոնցմէ հալածուած ըլլալնուն համար է որ ինքիքինքնին մօտ կը ցուցնեն մեպի: 95-96 ջարդերուն միջոցին, գրեթէ ամէն տեղ, բացի քանի մը ցանցառ բացառութիւններէ, միշտ հակահայ ընթացք մը ունեցած են, Կօրաւոր միջամտութեամբ մասնակցելով ջարդերուն եւ մերայիները հալածելու եւ տկարացնելու համար չինայելով ինչ որ կարելի էր ընել իրենց ձեռքով:

Ա՛յս է գրպլլպաշերու վերաբերութեամբ կարմուած ընդհանուր գաղափարն ու կարծիքը:

3. Մերայնոց քաղաքական ըմբռնումներուն գալով, նախ պէտք է ըսեմ թէ դժբախտաբար «քաղաքական հասկացողութիւն» ըստաճը Կօրաւոր մտածում մը չէ հոս, բացի թերեւս Շ[ապին]-Գարահիսարի սանճագէն, որ մեր նահանգին կը պատկանի: Մերատոիոյ կեղրոնական գաւառին մէջ, մանաւանդ, քաղաքական միտքն ու փնտորական ըմբռնումը եւ տկար կը տեսնեմ ինչպէս թուրքերուն, նոյնպէս մերայնոց մէջ: Մեր կուսակցութիւնները այս մասին մեծ արդիւնք մը չեն կրցած ունենալ: Հատերէ եւ երգերէն դուրս՝ շատ աննշան չափով մը միայն կայ բուն քաղաքական ոգեւորութիւն: Թէ՛ յեղափոխական կուսակցութիւնները եւ թէ՛ ժողովուրդը կը մտածեն առ հասարակ թէ իսաղաղ բարգաւաճումի միջոցաւ միայն կրնանք պահել ապգային ինքնութիւննախ, չկորսնցնելով ունեցածնախ եւ տնտեսական ու կրթական միջոցներով աւելցնելով Կայն հետպիտեմ:

Համամիտ են ամէնքն ալ՝ թէ կեանք չէ այն որ կ'ապրինք: Ապատութեան եւ երջանկութեան երապներով միայն գոհանալն ալ ուղիղ չէ, բայց, կը թուին նոյն ատեն տրամախորիէլ թէ, եթէ, մեր այս անկապմ ու անբաւական վիճակին մէջ ալ, անխորհուրդ շարժումով մը ունեցածնախ ալ փոանգէնք, պատասխանատու չեն նք մնար Ապագային առջեւ, որուն տէրը Աստուածն ու ժամանակն են միայն:

Մերայնեայ յեղափոխականք, նոյնպէս, հանդարտ քաղաքականութեան կողմնակից կ'երեւին, այնպէս որ վերը յիշածս Ռուս թղթակիցը նոյնիսկ շատ լատ տպաւորութիւն չէր ձգած իրենց փրայ, որ ըսեր էր թէ «Ամենայն Հայոց Հայրապետին եւ Պօղոս փաշայի դիմումները չեն կրնար գործնական արդիւնք մը ունենալ Հայ դատի համար, Կի ապգ[ային] դատ պաշտպանելու կերպը այդ չէ, եւայլն, եւայլն»:

Իրենցմէ ստացած ու քաղած իմ տպաւորութիւններս այսպէս են, եւ երանի՛ թէ իսբում չլլամ:

Այս վերջերս միայն, Երվակայի պայթումներէն եւ ներքին գաւառներու ու Կիլիկիոյ մէջ երեւցած անապահովութեան լուրերէն եւ շարժումներու նախապաշարումներէն վերջ, սկսան աւելի շեշտել ինքնապաշտպանութեան

անհրաժեշտության վրայ, թեև, միջոցներու չգոյութեան պատճառով, դժբախտաբար շատ տկար եւ ապարդիւն կերպով:

Ժողովուրդը, ընդհանուր առմամբ, պաղած կ'երեւի յեղափոխական կուսակցութիւններէն, որովհետեւ անհամերաշխ են իրարու հետ, եւ որովհետեւ միջամտելով առաջնորդարանական գործերու, նախկին քիչ շատ կանոնադրողութիւնն ալ խանգարած ըլլալու կասկածը կամ կարծիքը տուած են ամէնուն. այս պատճառաւ, ինչ թելադրութիւն կամ կոչ որ կը կատարուի իրենց կողմէ, ջերմ ընդունելութեան չէ՛ որ կ'արժանանայ:

Մեր Յեղափոխականները, եթէ Առաջնորդական Ազգային իշխանութիւններէն գաղտնիօրէն կամ անջատաբար ծրագիրներ կամ մտածութիւններ ունին գործելակերպի մասին՝ չեն գիտեր, բայց չեն ալ կարծեր որ այդքան միակողմանի նային ազգի կեանքի հարցին վրայ: Ինչ որ լսած են իրենցմէ եւ կռահած, ա՛յն է որ յանդուգն քայլերու կողմը չեն:

4. Իմ անձնական տեսութիւններս ալ կ'ուզեք իմանալ ազգին ճակատագրին հետ կապ ունեցող խնդրոց մասին: Ա՛յս, Սրբապան Հայր, սրտիս ու իղձիս ամէնէն փափուկ թելին է որ կը վարնէք այդ բառերով . . .

Առաջնորդ մը, որուն աչքին առջեւն են տակաւին ժողովուրդին տառապանքը եւ հոսած այնքան արիւններու եւ դեռ չչորցած ճապարհներուն գոլորշիները, որ կը ճանչնայ նոյն առեն իր ազգին պատմական իրաւունքները, ապրելու եւ տեսելու իղձին արդարութիւնը եւ սուրբ վրէժխնդրութեան մը վստահութիւնը, կրօնի պաշտօնեայ մը, իբր որպիսի ոք են եւ ես, ի՞նչ կրնայ խօսիլ այս մասին:

Կը պզամ ամէն ինչ ու կը խորհիմ շատ, բայց դժուար է ինծի՝ դասաւորուած որոշ կանոնադրութեամբ արտայայտուիլ այս մասին:

Ես սա՛ միայն գիտեմ թէ լեցուած է չափը մեր կրած տանջանքներուն. պէտք է ապրի՛նք իբր մարդ եւ իբր Ազգ, վերժ այն անարգութեամբ խեղճ ու անտանելի վիճակէն, որուն շա՛տ տոկացինք: Բայց այսպիսի արդիւնքի մը տանող միջոցներու ընտրութեան առջեւ կը վարանիմ ու կը տատանուիմ:

Ընթուստանա՛լ եւ պահանջե՛լ... բայց ի՞նչպէս. աչքերնուս առջեւ է Չեռնակորայի վիճակը, որ անհամեմատ աւելի նպաստաւոր պայմաններու մէջ կը գտնուէր քան զմեզ:

Համակերպի՛լ ստրկօրէն, բայց ալ չենք կրնար . . .

Կրթական եւ տնտեսական բարգաւաճումով պօրանա՛լ խաղաղութեան մէջ, բայց պէտք է վառահ ըլլալ թէ իսկամ մոռցնութիւնը ա՛լ այսուհետեւ՝ մանաւանդ պիտի չթողու երբեք որ խոճալի մը ձգտող քրիստոնեայ իր հպատակներս ներքնապէս պօրանանք ա՛յդ կերպով:

Նեառուի՛նք մեր հիւսիսային ինքնակոչ պաշտպանին գիրկը, բայց ի՞նչ յոյսով եւ ի՞նչ վստահութեամբ . . .

Գուցէ մեզ համար լաւագոյն խոհականութիւնը պիտի ըլլար կամ նուազագոյն չարիքը, մեր ազգային առանձնաշնորհումները պահելով, Եւրոպական վերահսկողութեան տակ, ապրել նորէն իբրեւ մաս մը Օսմ[անեան] Կաարութեան, թեւ ա՛յս ալ ունի իր ոչ սակաւ անպատեհութիւնները:

Լաւ կ'ըլլար որ Ազգային Պատրիարքարանդ, իբր վերին պատասխանատու կապնակերպութիւն, Թուրքիոյ Հայոցս ազգային կեանքին, ամէն կողմ շրջանցելէ եւ ամէն խորութիւն չափելէ յետոյ, որոշէ եւ ընէ կարելորդ, միշտ եւ միայն ի շինութիւն եւ ի միախառնութիւն ազգին:

Խորին Յարգանքներով եմ Ձերդ Ամեն[ապատիւ] Սրբապետութեան.

Աղօթակից՝ [Ստ.] Թորգոմ Եպս. Սեբաստիոյ

25 Յունիս 1913

Ամենապատիւ Տէր,

Տ[էր] Յովհաննէս Ս[րբապան] Արքեպիս[կոպոս] Արշարունի
Ապգախնամ Պատրիարք Հայոց Թուրքիոյ,

Կ. Պոլիս

Հայկական նահանգներու բարենորոգման հարցը վերջին անգամ դիւանագիտական սեղանի վրայ ելած օրէն ի վեր, ամբողջ Սեբաստիայ ժողովուրդին սրտի մէջ ծնաւ ինդութեան յոյս մը թէ՛ պատմական դարերէ ի վեր իր մէջ ստոյգ հայութիւն մը եւ հայկական իրական կեանք պարունակող այս գաւառն ալ, զոր հին ժամանակաց պատմութիւնն եւ վերջնոց քաղաքականութիւնը իրաւամբ ճանչցած են մասն Հայաստանի, «Փոքր Հայք» անուան տակ, մասնակից պիտի լինի բարենորոգչական այդ լուրջ ու մեծ ձեռնարկին տալ կոչուած երջանկութեանը:

Այդ յոյսով կ'օրօրուէինք ամէնքս մինչեւ վերջին օրերս: Մեր նահանգին կացութիւնը ամէն կերպով, իրապէս եւ իրաւապէս արժանի ու արժանաւոր տեսնելով այն երջանկութեան, զոր՝ օգնութեամբն Աստուծոյ՝ հեռաւոտ խնամութեամբ Օսմ[անեան] բանիմաց կառավարութեան եւ շնորհիւ Եւրոպական մարդասիրութեան պէտք է վայելէն անշուշտ Հայաստանեայց միւս հինգ նահանգներու համաբախտ եւ համարին մեր բոլոր եղբայրները:

Եւ Ապգ[ային] Պատրիարքարանի կողմէ, ինչպէս բռնապետական ժամանակներու միջոցին ցուցուած հոգածութիւնը մեր նահանգին մասին, նոյնպէս նաեւ ապատութեան հրատարակութեանէն առիթն ու մանաւանդ բարենորոգչական կեանքի շարժումներէն ի վեր՝ Փոքր Հայքի նկատմամբ երեւցուցած վերաբերմունքը ատելի՝ եւս փորացուցած էին մեր մէջ այդ յոյսը, մօտաւոր ու թանկագին բարօրութեան մը երջանիկ յոյսը . . .

Բայց այս վերջին թղթաբերով ստացուած լրագրական տեղեկութիւններէ հոգեկան ցնցումներով իմացանք սհա թէ Սեբաստիոյ նահանգը դուրս կը մնայ Եւրոպական հովանաւորութեան տակ բարենորոգուելիք հայկական նահանգախումբին երկրամասէն . . .

Թէեւ չէինք կրնար հաւատ ընծայել այդպիսի լուրի մը առուգութեանը, վստահ լինելով Ապգ[ային] Պատրիարքարանիդ հայրական եւ շրջահայեաց ուշադրութեանը վրայ, բայց լոկայոյսի լուրի մը հրատարակումն իսկ ա՛յնքան արդարացի փողովում մը յառաջ բերաւ ամբողջ մերայնոց ժողովրդական եւ ժողովական շրջանակներու մէջ, որ պարտականութիւն համարեցի գրովս ներկայացնել Ձեր հայ հօտին կարեւոր մէկ մասն կապմոջ իմ ժողովուրդիս յովմունքն ու ցար:

Կը գրեմ ներկայս, Սրբապան Հայր, ո՛չ թէ հարցնելու համար թէ սոո՞յց է, թէ ոչ այդ լուրը, կը գրեմ միայն պզտցնելու համար անգամ մը եւս Ձեր Բարձր Սրբապնութեան եւ Կեդրոնիդ Պատկ[առելի] Վարչութեան, թէ հարկ անհրաժեշտ է ամէն ջանք թափել, Սեբաստիոյ նահանգը դուրս չթողլու համար հայկական նահանգներու բարենորոգուելիք գօտիէն:

Այս ժողովուրդին նախահայրերը՝ իրենց ապգային գոյութիւնը չփճացնելու համար էր որ թագաւորական ու հայրապետական աթոռներով, ավնուական ու շինական, եկեղեցական ու փնտորական, ժա (11) դարուն եկան հոս, Ալիսի ափերուն վրայ փոխաւորնել ապգային ինքնութեան տերեւաթափ եւ ճիւղակոտոր

ծառը, որ, կարճ ժամանակի մեջ, հետպիտեւեալ ուռճացաւ եւ զօրացաւ այստեղ, նոյն այն հողին վրայ, ուր հայոց նախնիները, նոյնիսկ յառաջ քան վիճելն Հայաստանի Հայաստան, որոշմամբ ու տպաւորած էին ամէն տեղ հայ կեանքի անուն եւ կնիք, պատմութիւն եւ յիշատակ:

Այս ժողովուրդին նախահայրերն էին որ, Սեբաստիոյ նահանգին կեդրոնին ու սահմանաձայրերուն մէջ ամփոփեցին Արծրունեաց, Կարնուց եւ Անիի վերջին գահակալներուն արցունքն ու աճիւնները, եւ տաքցուցին Ռուբինեանց առիւծներէն վերապարթող կեանքի առաջին թխտումները:

Այս ժողովուրդին նախնիներն էին որ, իրենց հայ անունին եւ հայերամբ քաղնաթութեան համար, Թիմուրի բարբարոսական քնայքին Կոն զացին, բիւրաւոր մատաղ կեանքերու ոռնակոխուած մարմինները ծածկելով «սեւ հողերու» տակ:

Այս ժողովուրդի հայրերն ու մայրերն էին, որ հայութեան տուին Աբբայ Մսիթարի, Դպիր Աբգարի, Կաթողիկոս Միքայէլի նման մեծ ու հոյակապ գործիչներ, որոնք հայկական ինկած կեանքը վերակենդանացնելու համար, քաղաքական ու քաղաքակրթական ամէնէն լուրջ ծրագրերն յղացան ու իրագործեցին:

Այդ նախնիքներու սերունդ այս ժողովուրդն էր վերջապէս, որ Համիտեան շրջանի գէշ օրերուն լիուլի խմեց հայկական թշուառութեան ամբողջ բաժակը, յեղափոխական ըմբոստացումներով ծառացաւ բռնապետութեան դէմ եւ տաանեակներով հապարներու արիւնը խառնեց՝ իր ծոցէն՝ հայկական մարտիրոսութեան կոտորածի ճապաղիներուն մէջ:

Այսքան տառապանքներէ եւ յօշոտումներէ վերջ, իր մէջ տակաւին հայ կեանքի ուժն ու իղձը վերապրեցնող այս ժողովուրդը, որ դեռ կ'ապրի Սեբաստիոյ նահանգին մէջ, իբր 200,000 անձերու պատկառելի թիւով մը, բաղկացուցիչ տարրերուն մէջ առաջինն ըլլալով իբր տնտեսական, կրթական ու ճարտարուեստական ցեղ մը, պէ՛տք է Կրկուրի հայկական բարօրութեան հանգիստէն:

Իր բազում վանքերումն ու դպրոցներովը, իր հիւանդանոցներովը, որբանոցներովն ու որբանոցներովը, կրթասէր ու ապգանուէր հաստատութիւններովն ու ընկերակցութիւններովը հայկական կեանքը ուժաւորող այս հայութիւնը, որ՝ նմանալիշտ տանջանքներով՝ չարչարակից եղաւ հայաստանեայց միւս նահանգներու իր եղբայրներուն, պէ՛տք չէ՝ նաեւ որ հաղորդ եւ ժառանգակից ըլլան այն միսիթարութեան, Կոր իրաւամբ պիտի վայելէն անոնք:

Մի՛ թոյլ տաք, Սրբապան Հայր, որ այս պատմական ժողովուրդը յուսահատական յիմարութեան նոպաներուն ենթարկուի, որոյս նետուելովը վեցեակ հայ նահանգներու քարոտէն, որու վրայ իր արիւնովը գրուած է իր անունը, եւ շարունակեցէք անոր մասին եւս Ազգային] Պատրիարքարանիդ եւ Կեդրոնի իշխանութեանդ բովանդակ հոգածութիւնը, որու համար, յանուն ամբողջ ժողովուրդին, յայտնելով երախտագիտութիւն, եւ Ձերդ խոնարհ]

Աղօթակից.

[Սո.] Թորգոմ Եսայ. Սեբաստիոյ

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄԱԿԱՆՔ

Շր. 5 Մարտ.- Ըստ հակայ Պարբեի Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Աւետիս Արդ. Իփրանեան:

Կիր. 6 Մարտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Թեոդորոս Արդ. Զաֆարեան:

Դշ. 9 Մարտ.- Նախատօնակին ի Ս. Յակոբ Նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Եշ. 10 Մարտ.- Ա. Վարդանանց Զօրավարացն Մերոց 1036 Վկայիցն (Յիշատակ Մեռելոց Եւ Տօն Ազգային): Մայր Տանարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց եւ Բարոզեց Ժառանգաւորաց վարժարանի Տեսուչ Տ. Պարէտ Ծ. Վրդ. Երէցեան:

Պատրիարք Սրբազանը Նախագահեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսի անուան տօնին առիթի կատարուած «Հայրապետական Մաղթանք»ին:

Ուր. 11 Մարտ.- Ըստ սովորութեան, Ս. Պատարագը մատուցուեցաւ Ասորոց Ս. Մարկոս Աւետարանիչ Եկեղեցւոյ մէջ հանդիսապետը եւ Բարոզիչն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Շր. 12 Մարտ.- Կ. Պղտլոյ Ա. Ժողովոյն Հարիւր Յիսուն Հայրապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Արդ. Աբաջանեան:

- Կէսօրէ ետք, Մայր Տանարի Աւագ Խորանը, Սեղանները եւ գլխաւոր Սրբանկարները, Համբարձի շարականը երգուած ժամանակ, վարագուրուեցան, Պատրիարք Սրբազան Հօր, Դերաշնորհ եւ Հոգեշնորհ Հայրերու ձեռնով:

Կիր. 13 Մարտ.- Բուն Բարեկենդան: Փակեալ խորանի Ս. Պատարագը Մայր Տանարի Աւագ Սեղանին վրայ մատուց Տ. Ընծանուէր Արդ. Բարախանեան: «Հայր Մեր»էն առաջ Բարոզեց Տ. Պարէտ Ծ. Վրդ. Երէցեան:

Դշ. 16 Մարտ.- Սկիզբն կարգաց Մեծի Պահոց: Առաւօտեան Մայր Տանարին մէջ տեղի ունեցաւ «Արեւազալ»ի սուաջին, իսկ կէսօրէ ետք «Խաղաղական»ի սուաջին ժամերգութիւնը:

Եշ. 17 Մարտ.- Մեծ Պահոց առաջին հսկումին ի Ս. Յակոբ Նախագահեց եւ Բարոզեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Ուր. 18 Մարտ.- Նախատօնակը պաշտուեցաւ Մայրավանքի Ս. Թորոս Եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազանը:

Շր. 19 Մարտ.- Արքայն Թեոդորոսի Զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Թորոս: Ժամարարն էր Տ. Իսահակ Արդ. Մինասեան:

- Կէսօրէ ետք Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տանար, ուր պաշտուեցան ժամերգութիւնն ու Նախատօնակը մեր վերնամատրան մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութիւն: Թափօրապետն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէրեան:

Կիր. 20 Մարտ.- Քառասներգաց: Արտաւաման: Դիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազանը: Պատրիարք Սրբազան Հօր եւ Միաբանութեան երկրորդ պաշտօնական մուտքէն յետոյ ի Ս. Յարութիւն, Ս. Պատարագը մատուցուեցաւ մեր վերնամատրան մէջ: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Արդ. Յովհաննիսեան. «Հայր Մեր»էն առաջ Բարոզեց Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կատարուեցաւ Կոստանթնուպոլիս քաղաքի Քրիստոսի Ս. Դերեգմանին եւ մէկ անգամ Պատմամտելոյն շուրջ, Նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր: Թափօրականք Երզնցին Այլակերպութեան շարականներ:

Դշ. 22 Մարտ.- Մեծ Պահոց երկրորդ հսկումը կատարուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Հանդիսապետը եւ Բարոզիչն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէրեան:

Եշ. 24 Մարտ.- Իրիկտան հսկումին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Շր. 26 Մարտ.- Ս. Կիւրպի Երուսաղիմացւոյն: Ս. Պատարագ մատուցուեցաւ Մայր Տանարի աւանդատուն Ս. Կիրիլի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Կորիւն Արդ. Բաղդասարեան:

Կիր. 27 Մարտ.- Քառասներգաց: Անուանակին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Պարէտ Ծ.

Վրդ. Երեցեան: «Հայր Մեր»էն առաջ ֆարոգեց
Տ. Թէոդորոս Արդ. Զաֆարեան:

Գշ. 29 Մարտ.- Իրիկուան հսկումին ի
Ս. Հրեշտակապետաց հանդիսապետեց եւ ֆարոգեց
Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Եշ. 31 Մարտ.- Իրիկուան հսկումին ի
Ս. Յակոբ հանդիսապետեց եւ ֆարոգեց Տ. Սեւան
Եպս. Ղարիպեան:

Շր. 2 Ապրիլ.- Արքայն՝ Յովհաննու
երուսաղէմայ Հայրապետին եւ Հայրապետաց եւ
Վարդապետացն՝ Մեքաց: Ս. Պատարագը
մատուցուեցաւ ի Ս. Դիսաղիք: Ժամարարն էր
Տ. Կոմիտաս Վրդ. Շերպէթեան:

- Կէսօրէ ետք Տ. Սեւան Եպս. Ղարիպեանի
գլխաւորութեամբ Միաբանութիւնը
ինքնաշարժեքով բարձրացաւ Ջիբենեաց լեռ, ուր
Համբարձման Սրբավայրին վրայ կատարուեցաւ
ժամերգութիւն եւ նախատօնակ:

Կիր. 3 Ապրիլ.- Քառասնորդաց: Տնտեսին:
Առաւօտուն, Տ. Սեւան Եպս. Ղարիպեանի
գլխաւորութեամբ Միաբանութիւնը
ինքնաշարժեքով բարձրացաւ Ջիբենեաց լեռ, եւ
«Հրաշափառ»ով մուտք գործեց Համարձման
Սրբատեղին: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Արդ.
Զաֆարեան:

Գշ. 5 Ապրիլ.- Իրիկուան հսկումին ի Ս.
Հրեշտակապետաց հանդիսապետեց եւ ֆարոգեց
Տ. Դուսան Վրդ. Ալեանեան:

Գշ. 6 Ապրիլ.- Միջին:

Եշ. 7 Ապրիլ.- Իրիկուան հսկումին ի Ս.
Յակոբ հանդիսապետեց եւ ֆարոգեց Տ. Սամուէլ
Ծ. Վրդ. Աղոյեան:

Ուր. 8 Ապրիլ.- Իրիկունդէմին, յաջորդ
օրուան Քառասուն Մանկանց տօնին առիթով, Ս.
Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ
հսկման մասնաւոր արարողութիւն:
Հանդիսապետը եւ ֆարոգիչն էր Տ. Աւետիս Արդ.
Իփրանեան:

Ապա Տ. Պարէտ Ծ. Վրդ. Երեցեանի
գլխաւորութեամբ Սարկաւազները Քառասուն
Մանկանց նկարին առջեւ կարգաւորուած Սեղանին
դիմաց ծունկի գալով երգեցին օրուան տօնին
յատուկ շարականը:

Շր. 9 Ապրիլ.- Արքայն՝ Մանկանցն
Քառասնից Որք ի Սեբաստիա կատարեցան:

Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս.
Դիսաղիք: Ժամարարն էր Տ. Դուսան Վրդ.
Ալեանեան:

Վերաբերումը կատարուեցաւ Քառասուն
Մանկանց նկարին առջեւ շտկուած Սեղանին
վրայէն, որուն դիմացը, կաթսայի մէջ կը

պլպլային ֆառասուն գոյնգոյն կանթեղներ,
աւանդական ստոցապատ լինը խորհրդանշող:

- Կէսօրէ ետք, Լուսարարապետ Սրբազան
Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը
«Հրաշափառ»ով մուտք գործեց Սուրբ Յարութեան
Տաճար, ուր Ս. Գերեզմանի եւ Գիւտ Խաչի ալրին
ուխտերէն ետք, վերջնոյս կից՝ Ս. Գրիգոր
Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պաշտուեցան
ժամերգութիւն եւ նախատօնակ:

Ապա կատարուեցաւ Տնօրինական
Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր բալիօր
տանարէն ներս: Թափօրապետն էր Տ. Վանկի
Վրդ. Մանկասարեան:

Կիր. 10 Ապրիլ.- Քառասնորդաց:
Դաւաւորին: Գիշերային եւ Առաւօտեան
ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Գրիգոր
Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր
Լուսարարապետ Սրբազանը: Երկրորդ մուտին,
Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը,
մատուց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը
Բրիստոսի Ս. Գերեզմանին վրայ:

Օրուան սպասարկող վարդապետներն
էին Տ. Թէոդորոս Արդ. Զաֆարեան եւ Տ. Աւետիս
Արդ. Իփրանեան, իսկ բուրվառակիր
վարդապետներն էին Տ. Ղեւոնդ Արդ.
Յովհաննիսեան եւ Տ. Կորիւն Արդ.
Բաղդասարեան: Պատրիարք Սրբազան Հայրը
«Հայր Մեր»էն առաջ ֆարոգեց: Ապա նախագահեց
Սրբավայրին եւ Պատանատեղւոյն շուրջ
կատարուած եռադարձ բալիօրին, որ աւարտեցաւ
Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

Գշ. 12 Ապրիլ.- Իրիկուան հսկումին ի
Ս. Հրեշտակապետաց հանդիսապետեց եւ ֆարոգեց
Տ. Բագրատ Արդ. Պուրնէֆեան:

Եշ. 14 Ապրիլ.- Իրիկուան հսկումին ի
Ս. Յակոբ հանդիսապետեց եւ ֆարոգեց Տ. Պարէտ
Ծ. Վրդ. Երեցեան:

Ուր. 15 Ապրիլ.- Նախատօնակին ի Ս.
Յակոբ հանդիսապետեց Լուսարարապետ
Սրբազանը:

Շր. 16 Ապրիլ.- Ս. Գրիգոր Լուսաւորչին
Մուտնի Վերապն: Ս. Պատարագը մատուցուեցաւ
Մայր Տաճարի աւանդատան Ս. Լուսաւորիչ
սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Նորայր Արդ.
Դազագեան:

Կիր. 17 Ապրիլ.- Քառասնորդաց:
Դաւաւորեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ
երուսաղէմի հրէական բաժնին մէջ գտնուող Ս.
Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ժամարարն
էր Տ. Հայկազուն Արդ. Եղիայեան: «Հայ Մեր»էն
առաջ ֆարոգեց Տ. Ընծանուէր Արդ. Բարսիսանեան:

Գշ. 19 Ապրիլ.- Աւետման նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Գշ. 20 Ապրիլ.- Աւետումն Ս. Աստուածածնի: Առաւօտուն, Տ. Սեւան Եպս. Ղարիպեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր, ինքնաշարժերով իջան Գեքսեմանիի ձորը ուր «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, եւ ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Եշ. 21 Ապրիլ.- Իրիկուան հսկումին ի Ս. Յակոբ նախագահեց Տ. Պարէտ Ծ. Վրդ. երէցեան:

Շր. 23 Ապրիլ.- Յիշատակ Յարութեան Ղագարու: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

- Կէսօրէ ետք, Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան Ծաղկազարդի ժամերգութիւնը եւ նախատօնակը, մեր վերնամատրան մէջ:

Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Կիր. 24 Ապրիլ.- Ծագկազարդ: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Յարութեան մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Լուսարարապետ Սրբազան Հօր, երկրորդ մուտքէն ետք, մեր վերնամատրան մէջ կատարուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Ապա կատարուեցաւ եռադարձ մեծահանդէս թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին եւ Պատանատեղւոյն շուրջ:

Թափօրականքի ձեռնիկն ունէին ձիթեղեաց եւ արմաւինեաց ոստեր: Մեր թափօրին կը հետեւէին Ղպտոց եւ Ասորւոց թափօրները: Կատարուեցաւ «Անդաստան» հանդիսապետութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր: Վանք վերադարձին, Հայոց թաղի ոստիկանատան մուտքէն, Միաբանութիւնը եւ դպիրները «Որ գլխորհուրդ» շարականը երգելով բարձրացան Պատրիարքարան:

- Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ «Դոնրացէ՛ք»ի արարողութեան նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը, որ կը գտնուէր

Աւագ Խորանի փակեալ վարագոյրէն ներս:

Իսկ Մայր Տաճարի Աւագ Խորանին փակեալ վարագոյրին առջեւ կը գտնուէր Լուսարարապետ Սրբազան, աղոթքն ունենալով Տ. Բագրատ Արդ. Պուրնէ՛հան եւ Տ. Թէոդորոս Արդ. Զաֆարեանը: Տ. Աւետիս Արդ. Իփրանեան կարդաց վարագոյրներու բացման մասնակցողներուն անունները: Կատարուեցաւ հանգանակութիւն Ազունիէի Ազգային բուժարանին ի նպաստ:

Բշ. 25 Ապրիլ.- Զօրք տարեցած Ապրիլեան եղբռնի: Նահատակաց յիշատակին հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Աւագ Սեղանին վրայ: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան որ նաեւ խօսեցաւ Անգլերէն:

Մեր բիրաւոր նահատակներուն համար կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն, նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր:

Ապա կատարուեցաւ երկարածիգ թափօր Հ. Ե. Միութեան եւ Հ. Մ. Ը. Միութեան սկաւառաբնոյշներէ, Ս. Յակոբեանց Միաբանութեան անդամներէ եւ հայ հասարակութենէ: Բազմաթիւ պաստառներու եւ ծաղկեպսակներու շարանով, թափօրը յառաջացաւ դէպի Ս. Փրկիչ ազգային գերեզմանատունը, հանգստեան շարականներու երգեցողութեամբ: Արարայի Նահատակաց Յուշարձանին շուրջ հաւաքուած: Յուշարձանին ոտքին գետեղուած էին ազգային զանազան կազմակերպութիւններէ եկած ծաղկեպսակներ: Հ. Մ. Ը. Մ. ի անունով խօսք առաւ Տիար Սերոբ Սահակեան:

Գշ. 26 Ապրիլ.- Աւագ երեւելաբքի: Ըստ սովորութեան Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի գաւթի Ս. Յովհաննէս Աւետարանչի մատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Արդ. Աթաշանեան: Ս. Թարգմանչաց երկրդ. Վարժարանի աշակերտութիւնը ընդունեց Ս. Հաղորդութիւն: Ապա կատարուեցաւ «Ուխտաւորաց Թափօր» տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Օշական Վրդ. Կիւկիւլեան:

Աւագ Եշ. 28 Ապրիլ.- Յիշատակ Ընթրեաց: Առաւօտուն Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Կարգ Ապաշխարութեան»: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան, որ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց Մայր Տաճարի Աւագ Խորանին վրայ:

Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ «Ունկուլայ»ի սրտագրաւ կարգը, նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր:

Ներկայ էին բարձրաստիճան հիւրեր: Անկլիֆան եպիսկոպոսը վերջաւորութեան շուրջառով եւ ջարպարացի գլուխ բարձրացաւ Աւագ խորան եւ Աւետարանէն հատուած մը կարդաց Անգլեթերնով:

- Ժամ մը ետք, Տ. Պարէտ Ծ. Վրդ. երէցեանի գլխաւորութեամբ փոքր թափօր մը այցելեց Քրիստոսի գոյգ բանտերը: Ս. Հրեշտակապետաց վանուց գաւիթը, Ս. Զիթենիի ծառը եւ Ս. Փրկչի կիսաւեր մատուոյը:

- Գիշերուան ժամը 7ին Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Խաւարման կարգը»:

«Փառք ի բարձունս»էն ետք Տաճարին խորհրդատու մրութեան մէջ «Յայտնաւորք»ի Ամպիոնէն Բարոգեց Արքայի Առաջնորդ, Տ. Պարգեւ Արք. Մարտիրոսեան:

Ժամերգութեան աւարտին Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց եւ կատարեց «Խաչի Քո Քրիստոս»ի խնկարկութիւնը:

Աւագ Ուր. 29 Ապրիլ.- (Յիշատակ Խաչելութեան): Կէսօրը փչեց, Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամաստան մէջ կատարուեցաւ «Կարգ Խաչելութեան»: Հանգիստապետն էր Տ. Օշական Վրդ. Կիւկիւկեան:

- Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ հանգիստուր «Թաղման Կարգ»ը նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր: Կատարուեցաւ «Խաչի Քո Քրիստոս» խնկարկութիւնը, ձեռամբ Մեսրոպ Պատրիարք Մուրաֆեանի:

Շր. 30 Ապրիլ.- Աւագ Շաբաթ: Զրագալոյց Ս. Զատիկ: Առաւօտեան 10.20ին Ս. Յարութեան Տաճարի դուռը բացուեցաւ մեր կողմէն, բանալին առնուելով Աւագ Թարգման Տ Գուսան Վրդ. Այնանեանի ձեռքէն:

Ժամը 11ին Մեսրոպ Պատրիարք Մուրաֆեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը

մեկնեցաւ Ս. Յարութիւն, ուր յաջորդաբար կատարուեցան Լուսաւորեայի յարակից հանգիստութիւնները, սկսելով Ս. Գերեզմանի կնիումէն:

Յունաց թափօրի վերջաւորութեան, մեր լուսահանը Տ. Բագրատ Արք. Պուրնէֆեան, Յոյն Պատրիարքին հետ մտաւ Ս. Գերեզման: Լուսակիրներու կողմէ յոյսը փոխանցուեցաւ մեր վերնամաստան պատշգամին մէջ իր տեղը գրաւող Պատարիարք Սրբազան Հօր, որ լուցեալ մոմերու փունջով օրհնեց խուռներամ բազմութիւնը:

Ապա կատարուեցաւ եռադարձ թափօր: Թափօրապետն էր մեր լուսահանը Տ. Բագրատ Արք. Պուրնէֆեան: Մեր թափօրին կը հետեւէին Ղպտոց եւ Ասորոց թափօրները:

- Վանք դարձին, Դաւթի բերդին առջեւ, թափօր կազմած, մեր լուսահանը Տ. Բագրատ Արք. Պուրնէֆեան շուրջառագգեստ եւ ապակէ պահպանակի մէջ Ս. Լոյսը ի ձեռին, Պատրիարք Սրբազան Հայրը շուրջառով, խաչ եւ գաւազանով, շարականներու երգեցողութեամբ եւ զանգակահարութեամբ մտան Մայր Տաճար, ուր զիրենք դիմաւորեց Թորգոմ Սրբազան Պատրիարք Հայրը:

Մեսրոպ Պատրիարք Սրբազան Հայրը, Մայր Տաճարի դասին մէջ կարդաց Ս. Զատիկուայ Աւետարանը եւ «Պահպանիչ»ով արձակեց ժողովուրդը, աւետելով «Քրիստոս յարեաւ ի Մեռելոց»:

Ժամ մը ետք, կատարուեցաւ Զրագալոյցի արարողութիւն: Ժամարարն էր Տ. Օշական Վրդ. Կիւկիւկեան:

Ս. Պատարագի աւարտին կատարուեցաւ նախատօնակ: Նախագահութեամբ Թորգոմ Պատրիարք Սրբազան Հօր:

ՊԱՇՏՏՈՆԱԿԱՆՔ

ԵՂ. 3 Մարտ 2005.- Երուսաղեմի պատկերասրահներեն մեկուն մեջ տեղի ունեցաւ քանդակագործ Եւ Գեղարիշ Երեմ արուեստագետներու ցուցահանդէս մը, որուն կը մասնակցէր Միաբանութեան անդամներէն Ընծանուէր Արդ. Բարախանեան: Պատրիարք Սրբազան Հայրը ընկերակցութեամբ Միաբան Հայրերու Եւ Կետաբարքաւէր Կայորդիներու Գտնուեցաւ ցուցահանդէսի բացմանը: Կեդրոնի ղեկավարը Եւ ցուցահանդէսի կազմակերպիչները Պատրիարք Սրբազան Հօր ծանօթացուցին իրենց առաքելութեան Կետ Եւ շնորհակալութիւն յայտնեցին Կամագործակցութեան Կամար: Արուեստագետներու իւղաներկ կտաւներու Եւ լուսանկարներու ցուցադրութիւնը տեսեց Երեմ շարք:

ԳՂ. 29 Մարտ 2005.- Լատինաց Ս. Զատկուան տօնին առիթով շնորհաւորանքի Կամար, Պատրիարք Սրբազան Հայրը ի Գլուխ Միաբանութեան անդամներու, այցելեց Ֆրանչիսկեաններուն Եւ ապա Լատինաց Պատրիարքարան, ուր ըստ մախապէս Եղած Կամաճայնութեան Գերկայ Էին մնացեալ յարանուանութեանց Գերկայացուցիչներ:

Ապա, Ժամը 11ին Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Արիս Եպս. Շիրվանեանի Եւ Իսահակ Արդ. Մինասեանի Զատկուայ շնորհաւորութեան Կամար այցելեց Պապական Նուիրակին:

ԳՂ. 29 Մարտ 2005.- Երուսաղեմի մէջ Յոյն Ընդհանուր Հիւպատոս Տիկին Էլեանի Սուրանիի Կրաւէրով, Երուսաղեմի "Notre Dame" պանդոկին մէջ, Յունաստանի ազգային օրուան առիթով կազմակերպուած Կիրասիրութեան Գերկայ Գտնուեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Արիս Եպս. Շիրվանեանի, Գուսան Վրդ. Ալեանեանի Եւ Իսահակ Արդ. Մինասեանի:

ԵՂ. 21 Ապրիլ 2005.- Երուսաղեմի Ոստիկանապետի Կրաւէրով, Հրէից Պատէի տօնին առիթի Հին Քաղաքին Դաւթի Բերդին մէջ տեղի ունեցաւ Կիրասիրութեան արարողութիւն, որուն կը մասնակցէին Երուսաղեմի Եւ շրջակայ տարրեր Կամայնէներու Եւ յարանուանութեանց Գերկայացուցիչներ Եւ Կամայնէպետեր (մուխթար):

ԳՂ. 20 Ապրիլ 2005.- Թել Ավիվէն-Երուսաղեմ Գոր Կաստատուած Երկաթուղային Գիծի բացման առիթով, Երուսաղեմի Դաւթի Բերդին մէջ կազմակերպուած էր «Գնացիւն ընթացիւր դէպի Երուսաղեմ» խորագրով ցուցադրութեան յայտագիր մը, որուն կը մասնակցէին Երուսաղեմի Եւ շրջակայ տարրեր արուարձաններէն Ժամանած անձեր: Պատրիարք Սրբազան Հայրը ընկերակցութեամբ Իսահակ Արդ. Մինասեանի Գերկայ Գտնուեցաւ ցուցադրութեան, որուն Գերկայ Էին Իսրայէլի Փոխ-Վարչապետ Եւ Արդիւնաբերութեան Նախարար Պրմ. Էհուտ Օլմերք Եւ Երուսաղեմի Բաղապետ Ուրի Լուվիլանքի:

ԳՂ. 3 Մայիս 2005.- Հայոց Ս. Զատկական տօնակատարութեանց առիթի, Կամաճայն մախապէս Եղած կարգադրութեանց, Հայոց Պատրիարքարան շնորհաւորութեան Եկան, Լատինաց Պատրիարքը Եւ Քուստոսը իրենց Միաբանութեան անդամներով, Եւ Կաթոլիկ Եւ Բողոքական, Հապէշ, Ղպտի Եւ Ասորի Ուղղափառ Եկեղեցիներու Կողբուոր պետեր Եւ Գերկայացուցիչներ: Փոխադարձ շնորհաւորութիւններ չկայացան Հայ Առաքելական Եւ Յոյն Օրթոտոքս Եկեղեցիներու միջեւ:

Երեկոյեան, Զատկական շնորհաւորութեան Կամար Պատրիարքարան այցելեցին Իսրայէլի Կրօնից Նախարարութեան պետական Գերկայացուցիչներն ու ոստիկանները:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՃԱԿԱՏԱԳԻՐՆ ՀԱՅՈՑ

«Այս նակատագիրն ի՛նչ սեւ է, Ա՛ստուած,
Արդեօք դամբանի մրուրո՞ւմ է գծուած»:
Պետրոս Դուրեան

«Ընելու ենք ինչ որ կրնանք ազգին
համար, սեւ աստղի տակ ծնածեր ազգին
համար»:

Տիգրան Կամսարական

Հայ նահատակուած ժողովուրդի ոգեկոչումն է որ կը կատարենք ազգովին: 1915-1918 թուականները եղան ահի ու սարսափի, բռնակալութեան ու ձերբակալութեան, ափսոսի ու ջարդի տարիներ: Հայոց հոգեւոր գոյավիճակը հիմնապէս փոխուեցաւ: Խենթարիւն ու մարդախոշոշ բանտարկեալներ արձակուեցան յօշոտելու հայ հոգին: Ամենուրեք մահու հրեշտակներ կը թեւածէին ու կը հնձէին անմեղ ու մատշաղ կեանքներ: Հայոց պատմութեան էջերը արեամբ ներկուեցան: Կանգ առաւ հայոց զարկերակը: Ճահեացաւ հայ կեանքը: Պատմութիւնն հայոց արձանագրեց լոկ կոտորած, մահ ու աւեր: Արեւմտահայաստանը բոլորովին ամայացաւ: Կատարեալ մշակութասպանութիւն տեղի ունեցաւ: Եղեռնազարկ ժողովուրդի հետ կործանեցան՝ քաղաքներ, գիւղեր, աւաններ, կրթական հաստատութիւններ, դպրեւանքներ, վանքեր, եկեղեցիներ, գրադարաններ, խաչքարեր, կոթողային արժէքներ կայացնող կերտուածքներ, նարտարապետական գլուխ-գործոց շինութիւններ, ոչնչացան՝ չփնտռուած գիրքներ, հագուազիւտ մատեաններ, անկրկնելի յուշարձաններ: Հայ ստեղծագործ ու փայլուն միտքը փշրուած էր: Գիր, գրականութիւն, երաժշտութիւն

եւ մշակոյթ ստեղծելու ժամանակ չէր: Անոնց մասին մտածելն իսկ անհեթեթութիւն էր...: Իրօք որ «գրականութեան ծառը կայծակնահար ու նդակոտոր էր եղել», վասն զի գրական ներկայացուցիչներ բռնադատուած էին նաշակելու զազրելի մահը: Յիրաւի, Արեւմտահայաստանի պատմութիւնը սեւ վարագոյրով պատուած էր:

Արդ, ո՞ւր էր հայ դեկալարութիւնը, եկեղեցականութիւնը: Հայ մտաւորականութիւնը ձերբակալուելով առաջնորդուած էր բանտ՝ լոկ «հարցաքննութեան»: Անգլուխ ու անդեկալար ժողովուրդը հայոց բողոքուած էր իր դժխեմ նակատագրին ու սեւ քախտին: Զանգուածային ձերբակալութիւնները պարզ նախերգանք մըն էին պատահելիք քստմնելի իրադարձութիւններուն: Բովանդակ ազգ մը իր հոգեւոր առաջնորդներով ու աշխարհիկ իշխանութեամբ պիտի անցնէր ընդ հուր եւ ընդ ջուր: Երուանդ Օտեան ի գուր չէ գրած. «Անոնք, որ տարագրութեան այս ահարկու կեանքը ապրեցան, կրնան ըսել Եղիա մարգարէի պէս «ես այն մարդն եմ, որ Տառապանքը տեսայ»:

Որբացած հայութիւնը՝ զրկուած հայրենի հողէն ու օճախէն եւ մարդկային տարրական իրաւունքներէ,

գաղթական ու մտամոլոր, կորսնցուցած իր նախնապարհը՝ դատապարտուած էր տեղահանման ու փնացման: Ստեփան Ալաջաջեան իրաւամբ կը գրէ. «Միանգամայն պարզ էր, որ անհանգրուան, անհայրենիք մնացած մի ողջ սերունդ, հող չունենալով ոտքի տակ, ակամայ ընկնելու էր պարտուողական խելակորոյս հոգեվիճակի մէջ: Իսկ Արեւելից մինչեւ Արեւմուտք ընկած հայ որբն ու որբացած ընտանիքը միջավայրին յարմարուելու համար փութաջանօրէն պէտք է սովորէր տեղական լեզուն, ընդօրինակէր կենցաղը, հետեւէր բարքերին եւ... կորցնէր ազգային պատկանելիութիւնը: Անհրաժեշտ էր օտարերկրեայ անձնագիր: Ուժանում էր հայը, կորչում էր մի ժողովուրդի մի ամբողջ հատուած»:

Ամէնքս հաւասարապէս անմեղ զոհերն ենք առաջին ցեղասպանութեան: Հոգեկան, իմացական, նիւթական, բարոյական արժէքներու կորուստը վիթխարի էր: Հողի կորուստը անփոխարինելի է: Անվերադարձ է նաեւ հոգիի կորուստը: Ամէնքս հաւաքաբար կորսնցուցինք ողջ Արեւմտահայաստանը՝ մեր նախահայրերու պատմական երկիրը, ինչպէս նաեւ բովանդակ սերունդ մը, ապա եւ՝ մեր հարազատները, մեր օնախը, մեր արժէքները, եւ այն ամէնը ինչ հայկական էր, բնիկ, տոհմիկ, հարազատ:

Աննկարագրելի տառապանքի ու նահատակութեան շրջան մը արագօրէն կը ծաւալէր հայ կեանքէն ներս: Այսուհետեւ պիտի չըլլար դատ, դատաստան, հաշուետուութիւն, պատիժ, արդարութիւն եւ հատուցում: Ազատ պիտի արձակուէին բոլոր արիւնաբոյ աւազակներն ու դահիճները իրենց ոճրային արարքներուն համար: Ահա

թէ ինչ կը հրահանգէ Նայիմ Պէյ 1915 թուի Սեպտեմբեր 14ին՝ գաւառի իշխանութեանց. «Կին, մանուկ, հիւանդ մի նայիք, որքան ալ անգթութիւն ըլլայ. վերջացուցէ՛ք անոնց գոյութիւնը ... բոլոր ոճիրները, զորս կը կատարէ՛ք հայերուն վրայ, զերծ են պատիժէ... սպաննեցէ՛ք կեանքները ուր որ գտնէ՛ք. պատիժ չկայ»:

Թալէաթ՝ ցեղասպանութեան մեծագոյն պարագլուխը եւ գերագոյն դահնապետը, իր 3 Սեպտեմբեր 1915 հեռագրին մէջ, իրեն ստորագրած մարմիններուն կը հրամայէ անտեսել հայարցունքը եւ աղաղակը, չցուցաբերել խղճմտանք ու կարեկցութիւն, այլ կոտորել ամենայն բրտութեամբ ու սրածել վայրագութեամբ. «Կանանց եւ երեխաներու հետ վարուիլ այնպէս, ինչպէս հրամայուած է ընել տղամարդոց... կառավարութիւնը համաձայն կուսակցութեան հրամանին, որոշած է բոլորովին բնաջնջել այն բոլոր հայերը, որոնք Թուրքիոյ մէջ կը բնակին, առանց ուշադրութիւն դարձնելու կանանց, երեխաներու եւ հիւանդներու: Պէտք է, որքան ալ ողբերգական ըլլան բնաջնջման միջոցները, վերջ տալ անոնց գոյութեան, առանց ականջ կախելու խղճի զգացման... գաղտնի միջոցներով բնաջնջ ընել Արեւելեան նահանգներու ամէն մէկ հայ, զոր կը գտնէ՛ք ձեր շրջանին մէջ»:

Մէկ այլ տեղ, երբ Թալէաթ կը լսէ թէ ոմանք կը դրկուին Սուրիա եւ Երուսաղէմ, ան կը հրահանգէ հետեւեալը. «Նման ամէն մէկ համբերատարութիւն անցնելի սխալ է. այդպիսի խռովարաններու ահտրավայրը պէտք է ըլլայ ոչնչութիւն»:

Ողջ պիտի մնային միայն «այն որբերը, որոնք երբեւիցէ յիշել չեն կրնար իրենց

ծնողին ենթարկուած սոսկումները, իսկ միւսները ախորել քարաւաններու հետ»:

Թալէաթ շնական լրբութեամբ ըսած էր Վարդգէսին. «Այնպէս մը պիտի ընեմ, որ յիսուն տարուան մէջ հայ ժողովուրդը ինքզինքն չգտնէ...»: Արեւմտահայ գրագէտ՝ լուսաշիշատակ Յակոբ Սիրունի կը պատասխանէ. «Ահ, խեղճ եղեռնագործ, գլուխդ դուրս հանէ պահ մը «Ազատութեան բլուր»ի բու դամբանէդ, եւ տես... Ոչ հայ ժողովուրդը կըրցար մեռցնել, եւ ոչ ալ անոր դատը...: Հայ ժողովուրդը ոտքի է կրկին, եւ իր դատը միշտ կենդանի...»:

Այս անողոք հրամաններուն, վրայ քարաւաններու անվերջ շարք մը ճամբայ կ'ելլէր, կ'երկարէր ան ու կ'ընդգրկէր ամէնքն՝ առանց բացառութեան: Այդ տառապալից տողանցին մէջ կը լսուէին յուսակտուր ու աղեխարշ ճիչեր՝ անսուղութեան, յոգնասպառութեան, տկարութեան, ահաբեկութեան: Ամէնքն սակայն պարտաւոր էին քալել, անտրտունջ կրել իրենց անբերելի խաչը, այլապէս ժանտարմին անխնայ հարուածները կու գային յիշեցնելու որ ի վերուստ տրուած հրամանը պէտք է անյապաղ գործադրել առանց խղճահարութեան, գութի ու կարեկցանքի:

Այս ծրագրեալ կոտորածը արմատախլեց հայ ժողովուրդը իր պապենական դարաւոր հողերէն եւ բնաջնջեց գայն անխնայօրէն: Մեր դարաւոր անագորոյն ոտիւր խտրութիւն չդրաւ արուի ու էգի, մեծի ու փոքրի, մանուկի ու անծիին:

Ամէնքն հաւասարապէս արժանացուց լոյն եաթաղանին եւ հասաւ իր հրէշային նպատակին: Ճակատագիրն հայոց այնքան տխուր էր, որ կարելի չէր թղթագրել, պատմագրել: Ոչինչ կար գրուելիք բացի արիւնահեղութենէ

ու զանգուածային ոչնչացումէ: «Այս նակատագիրն ինչ սեւ է, Աստուած»: Կարելի չէր կանխել այս անպատում ողբերգութիւնը, հեռացնել փորձութեան այս դառն քաժակը ու խնայել ժողովուրդի մը անմեղ արիւնը: Կարելի չէր փոխել ընթացքը այս արագածաւալ աղէտին: Բովանդակ աշխարհը ականջալուր ու ականատես կ'ըլլար հայոց անլուր չարչարաններուն ու եղեռնին, բայց ամէնքն գոհ էին իրենց կտաւորական դիրքէն: Մութ հաւիշները եւ ստորաշահերը կը ստիպէին ամէնքն մնալ լուռ ու ձեռնածալ:

Աստորի ճանապարհը երկար էր ու անծայր: Կ'իյնային ծերեր, կիներ, մանուկներ, վատուծներ, հիւանդներ, անկարներ: Կ'իյնար հայու հոգին, կը բզկտուէր ու կը շիջէր, կը փոշոտէր ու կը փոշոտէր անոր մահուր հոգին: Ազգերու պատմութեան մէջ ոչ մէկ ազգ այսպէս անարգուած ու անպատուուած չէր, որքան մեր սուրբ ազգը: Հայոց նակատագիրը իր ամենայն դառնութեամբ կը մտրակուէր, կը հարուածուէր, բազմաչարչար հայը կը ստիպուէր թողլիքն հնադարեայ հայրենիքը իր դժիմ ճակատագրին:

Հայ ժողովուրդի վերապրելու վնասկամութիւնը անսակարկ էր սակայն: հայու յոգնած ու աննահանջ հոգին, համբուրելի հոգին, չէր կրնար ընկնուած մնալ: Ինքզինքն վերագտնելու եւ վերալիցքաւորելու բուռն պահանջէն մղուած, ջարդէն մազապուրծ աստանդական հայը, ցուպն ի ձեռին, թափառեցաւ արար աշխարհ եւ դարձաւ աշխարհաբաղաւաղի: 1918ի «Շանթ» հանդէսը այդ օրերուն լայնօրէն կ'արձագանգէր այդ ահաւոր ոնիրին եւ կ'ըսէր. «2ի կարծուի թէ շարունակ պիտի լանք այս էջերուն մէջ: Ոչ. մենք այս թերթը հայ տառապանքին նուիրելով,

նպատակ չունինք բնաւ արցունքի երաժշտութիւնը երգելու աշխարհի ականջին, որ արդէն խուլցեր է տիեզերասաստ սպանդին խողխողումի ձայներէն: Այլեւս չպիտի լայ հայր»:

Մահի սարսուռէն ու կործանումէն չի վիատիր հայու հոգին, չի յուսահատիր, չ'ընկնուիր: Երգը եւ երազը փայփայելով կաթոգին, հայր վստահ փայլերով եւ ապշեցուցիչ լաւատեսութեամբ կը փալէ դէպի արշալոյս ու դէպի պայծառ ապագայ:

Արեւմտահայ մեծ երգիծարան՝ Երուանդ Օտեան, խոցուած ու վիրաւոր սիրտով մեզի կուտայ սարսուցուցիչ վիճակագրական տեղեկութիւն հայութեան մասին. «Ողջոյն քեզ, հայ ժողովուրդ, - մեղայ, ողջոյն ձեզ, հայութեան մնացորդներ - հեռուէն, շատ հեռուներէն կու գամ: Տէր-Ջօրէն կու գամ, որուն կամուրջէն 300 հազար հայեր անցած են եւ որոնցմէ այսօր միմիայն 1500 կիներ ու որք տղաք ողջ մնացած են: Կու գամ Օսմանիէն, ուրկէ տեղատարափ անձրեւով մը 60 հազար հայեր խարազանի հարուածներու տակ իշուեցան լեռնէ-լեռ: Կու գամ Հալէպէն դէպի Տէր-Ջօր երկարող այն անիծեալ անապատներէն, ուր տասնեակ հազարաւոր հայեր, երեք տարի վրաններու տակ, կոտորուեցան տենդէն, թիֆուսէն ու թանջէն... Ողջոյն ձեզ, հայութեան խլեակներ»:

Ամայացաւ, ամլացաւ հայոց գրական անդաստանը: Ամենուրեք մեռելութիւն էր, դատարկութիւն: Անդարձ մեկնեցաւ արեւմտահայ գրողներու ընտրանին: Գրական հրապարակը տարիներով տառապեցաւ անարգասաւորութենէ: Այս առիթով Յակոբ Սիրունի կը գրէ. «Կը զգանք պարապը, որ մեր շուրջը կայ. կը զգանք անգամ մըն ալ տկարութիւնը մեր

ուժերուն, ու կարօտը անոնց, որ մեր շուրջն էին ու օր մը գացին ու էլ չդարձան: Ձկայ անգուգական Դանիէլը, որ ակօսը բացաւ չմեռնող գեղեցկութիւններուն ու նոր սերունդը ծունկի իջեցուց անոնց շփեղութեան առջեւ, հոյակապ Սիամանթօն, որ իր հոգիին մէջ նոր Հայկաշէնը կանգնած ուխտի կը կանչէր թերահաւատներն ու մանուկները, Ջարդարեանը, որ մեզի պատմեց գաղտնիքը իմաստութեանց վերջնագոյնին, այն, որ ժողովուրդները կը դարձնէ մեծ ու յաւիտենական: Ձկան Թղկատինցին ու միւսները... Յարութիւնեան Արտաշէսը,... Կիւրնեան Մելիքը,... Զօհրապը,... Երուխանը,... Բարսեղեան Գեղամը...»:

Սիամանթօյի կրտսեր եղբայրը՝ Վահան Եարնանեան, 1918ին հրաքիսային սաստկութեամբ պիտի գար արտայայտելու իր ցասումը՝

«Պիտի առնեմ վրէժդ

Աչքերովս պիտի խմեմ դահիճներուդ գլորումը մահ,

Պիտի ըմպեմ արբշտութեամբ անոնց ոռնումը հոգեւարքի..

Անարժաններ գերեզմանի, ֆանգի հողը սուրբ է եւ արդար»:

Աննախընթաց ցեղասպանութիւնը չկրցաւ շիջանել այն կրակը որ գոյութիւն ունէր հայ գրագէտին հոգիէն ներս: Յետ-եղեռնեան գրագէտ հեղինակները, բանաստեղծները, մտաւորականները, իրենց գրութեանց մէջ կ'արտայայտեն լաւատեսութիւն դէպի կեանքը, դէպի հայ «ցեղին յարութիւնը», գոյատեւումը եւ յաղթանակը: Ի գուր չէր որ Յարութիւն Պէրպէրեան 1916ին, իր «Ցեղին Յարութիւնը» աշխատութեան մէջ կը գրէր. «Ես յաղթական կ'ուզեմ ապրիլ-տկարութիւնը կ'ատեմ, հոգիս խորշելով կը խորշի տկարութենէն. քեզ նշմարտութիւն, երկրի մէջէն պիտի

փնտռեմ»:

Ապրելու պատրաստակամութիւնը ակնյայտ էր մեր գրողներուն մէջ: Մատթէոս Զարիֆեան յստակօրէն կը գրէ. «Պիտի ապրիմ: Ճիգը պիտի ըլլայ կեանքիս գերագոյն սկզբունքը: Անցեալի վրայ պիտի նայիմ իբրեւ ցուրտ դիակի մը վրայ: Նոր հիմերու վրայ պիտի տեղափոխեմ անհատականութիւնս: Պիտի ապրիմ: Փոխանակ փախչելու նակատագրիս առջեւէն, ես պիտի հալածեմ զայն, կմախֆացած անդամներովս անոր ետեւէն պիտի արշաւեմ ու պիտի պոռամ անոր երեսին. «Քեզմէ աւելի ուժով եմ, վատ»:

Յակոբ Սիրունի հոյակապ կերպով կը նկարագրէ հայուն ապագան եւ մանաւանդ լաւատեսութիւնը դէպի կեանքը. «Ամէն աղէտէ յետոյ, աւերակներուն առջեւ ան զարհուրած կեցեր է պահ մը, ապա արցունքը սրբեր ու շարունակեր է նամբան: ... Վրէժ, վրէժ լուծելու կարիք չունի հայ ժողովուրդը: Հայ ժողովուրդը իր վրէժը լուծած է: Իր բեկորները դարձեալ ոտքի են, ու ինք դարձեալ կը շէննայ հարազատ հողի վրայ, համարձակ յառած վաղուան, նամբէ մը կու գայ, ամէն ֆալափոխին արեւ ու ծաղիկ ցանելով, ցանելով, ու հպարտ կը ֆալէ վաղուան տեսիլքով ու երգով միշտ, իր երազը սրտին մէջ գրկած ամուր»:

Մեր լինելութեան խորին գաղտնիքը՝ մեր կեանքը ապրիլ կամենալու վնասականութեան մէջ է: Այդ անկոտորում կամքի պատճառով է որ տոյատեւած ենք այսօր դարեր: Թիավարած ենք ընդդէմ կեանքի ամենի կոհակներուն, պայքարած ընդդէմ բազում փորձութեանց ու տառապանաց եւ յաղթութեան դրօշ պարգած դուրս եկած աւելի փայլուն, հասուն, վնասկամ ու հաստատակամ:

Ներկայիս, արտասահմանի մէջ, ինքնութիւն պահպանելու գոյապայքարի մէջ է հայը: Մեծ ջարդէն վերապրողներէն ոմանք, արեւմտեան ափեր հասնելով, ազդուեցան համայնակով ու սարսռագոյն մշակոյթի տարրերէն ու սկսան նահանջել: Նահանջեցին ու մեղանջեցին նաեւ անոնց յաջորդող սերունդի զաւակները, որոնք իրենց աչքերը բացին ապահով ձեռքերու մէջ եւ հասակ առին ֆաղափակիր դերակրներու մէջ: Այդ ընկրման ակնարկելով մեծ գրագէտ Շահնուր կը գրէ. «Ոչ թէ որովհետեւ այժմ պատերազմ կայ ու կռիւ, ոչ թէ որովհետեւ այժմ նակատամարտ կայ ու կենսապայքար, այլ որովհետեւ կայ բան մը աւելի նակատագրական, աւելի աններող, կայ բան մը ահեղ, անդիմադրելի, որ իր անունը կ'ոռնայ բոլոր ֆառուղիներէն. նահանջն է ան: նահանջը, նահանջը հայերուն»: Այսպիսով, կը նահանջեն բարք, արմբոնում, բարոյական, սէր: Կը նահանջէ լեզուն, կը նահանջէ լեզուն, կը նահանջէ լեզուն»: Այդ նահանջը դժբախտաբար կը շարունակուի քիչ մը ամէն տեղ բոլոր մակարդակներու վրայ: Մեծ եղեռնը կու գայ յիշեցնելու մեզ որ մեր նահատակները իրենց ետին ձգած են ժառանգ մը որ անկապտելի է եւ մերն է: Մեր սրբազան պարտականութիւնն է պահել այդ սուրբ աւանդը անխախտ ու անխաթար, ջինջ ու յստակ ու ապա զայն փոխանցել յաջորդ սերունդին:

Մեր նահատակներուն արեան ձայնը այսօր եւս լսենք ցաւատանջ գալարումներուն եւ ահաւոր չարչարաններուն ընդմէջէն: Անոնք ինկան, բայց չմահացան, չկորսուեցան ի սպառ: Անոնց վսեմագոյն պատգամը մեզի հետ է այսօր՝ ձգտիլ խաղաղութեան, եղբայրութեան, արդարութեան,

ազատութեան եւ համերաշխ գործակցութեան՝ միշտ անվտանգ պահելով հայու մշտագոյութիւնը եւ անելիութիւնը, բարձր պահելով հայուն պատիւը եւ արժանապատուութիւնը:

Սրախողխող ժողովուրդի արշալոյսը կը տօնախմբենք այժմ: Լացի ու սուգի պատը ֆանդած հայ ժողովուրդը իր հայեացքը ուղղած ապագային, զայն յոյսով, կենսախնդութեամբ ու խանդավառութեամբ կը դիմաւորէ:

Այսօր, երբ համազգային տարողութեամբ ոգեկոչումը կը կատարուի մեր ապրիլեան նահատակաց, հայը կ'ուստէ վառ պահել անոնց անթառամ յիշատակը իր սիրտէն ներս: Հայեր, ի Հայաստան եւ ի սփիւռս

աշխարհի, աղօթքի եւ ուխտի կ'երթան՝ յարգելու իրենց մեռելները:

90 տարիներու մեծ անջրպետ մը կը բաժնէ զմեզ այդ ահարկու պահէն երբ ծայր առաւ մարկայնօրէն անըմբռնելի ու անբացատրելի եղեռնը: Մեր տասնեակ տարիներով մորմոհած սիրտերը կը խայտան այսօր ի տես մեր անկախացեալ երկրին, որ օրըստօրէ կը ծաղկի ու բարգաւաճի: Այսօր, աւելի քան երբեւէ, գիտակցութիւն կայ հայ նորահաս սերունդին մօտ մեծ եղեռնի նահատակաց յիշատակը անմեռ պահելու եւ անոնց աւանդած կտակը պահպանելու իբրեւ գերագոյն սրբութիւն:

Յիշատակ բխրաւոր նահատակաց մերոց օրհնութեամբ եղիցի:

ԶԵՆՈՒ ՔԶՆՅ. ՆԱԼ ՊԱՆՏԵԱՆ

ԳՏՆԵԼՈՒ ՀԱՃՈՅՔԸ

Այնքան դժուար է երբեմն նայիլ կեանքի տարբեր երեսներուն, տեսնել ու հիանալ ալ անոր գեղեցկութիւններուն, բայց չկարենալ սիրել զայն, չկարենալ հետաքրքրութիւն մը ունենալ անոր հանդէպ: Կը յիշեմ պատմութիւնը մէկու մը որ իբր աշակերտ չէ կրցած սիրել կենսաբանութեան դասը ու չէ կրցած սորվիլ զայն: Բայց քոջ մը թելադրութիւնը բաւական եղած է որ փոխուի անոր կեցուածքը այդ դասին հանդէպ, անոր տալով սորվելու անբացատրելի փափաք ու եռանդ:

Այսպէս կը պատմէր այդ աշակերտը ընկերոջ մը, որ կ'ուզէր գիտնալ թէ ինչու այնքան հետաքրքրութեամբ կը սորվէր կենսաբանութեան դասը. «Ոչ մէկ պատճառ ունէի չսիրելու կենսաբանութեան դասը: Պարզապէս

չէի կրնար սորվիլ: Կը կարդայի դասս իբր պարտականութիւն բայց միտքս բան չէր մնար - չսիրելուս համար թերեւ: Ուսուցիչս գիտէր ասիկա, ու ցաւով կը դիտէր թէ ոչ մէկ հետաքրքրութիւն ունէի այդ դասին հանդէպ: Օր մը գրաւոր ֆննութիւն ունէինք: Ու իմ մէջ փափաք մը մտած էր հետաքրքրուելու այդ դասով, իբր հետեւանք քոջս թելադրութիւններուն: Քննութիւնը յաջող անցաւ, ու ուսուցիչը կանչեց զիս ըսելու թէ միշտ այդպէս պէտք է ըլլամ, դասերս սորվիմ ու յիշեմ զանոնք: Ըսի իրեն թէ քոջս թելադրութիւնն էր որ փոխած էր իմ մէջս շատ բան: Գիտէի թէ կեանքը հետաքրքրական է: Ու կենսաբանութեան դասը կը յայտնաբերէր այդ հետաքրքրականութիւնը: Ուրախացաւ:

ուսուցիչս, ու բաժնուեցայ իրմէ ուրախութեան ու գոյումի արցունքը աչքերուս: Այդ օրէն ի վեր կը սիրեմ դասս: Ու ամէն օր նոր բան մը կը գտնեմ:

«Առաջին երեւոյթը որ ուշադրութիւնս գրաւեց այս է: Ամէն արարած, կեանք ունեցող ամէն բան, կը սիրէ կեանքը, չուզեր մեռնիլ, ու կը փորձէ միջոց մը գտնել, հեռու պահելու ինքզինքն կեանքի աննպաստ պայմաններէ: Ու այս երեւոյթը՝ նոյնիսկ ամենէն նախնական ու պարզ կեանք ունեցող արարածներու ալ պարագային: Միաբջիչներ՝ որոնք կը զգան կարծես թէ օր մը կրնան դադրիլ ապրելէ, ու միշտ իրենց կեանքը շարունակելու հեւքը կը թուին ունենալ: Այսպէս օրինակ, Ամիպը (*amoeba*) որ միաբջիչ կենդանի մըն է, պաշտպանուելու համար ցուրտին կամ սնունդի պակասին բերելիք վտանգին դէմ, կը ներփակուի կարծր պատեանի մը մէջ: Այս վիճակին մէջ կրնայ ապրիլ բաւական երկարատեան, միեւնոյն ժամանակ իրեն նմաններ ալ մէջտեղ բերելով: Ամիպին այս զգուշաւորութիւնը կ'երեւի նաեւ ուրիշ կենդանիներու կարգին, գորտին ալ մէջ: Կ'ըսուի թէ կենդանիներու ամէն վարժումներուն մոլոր ուժը բնագոյն է: Ահա այդ բնագոյն է որ գորտին «Զմեռել» կու տայ: Զմեռ ատեն գորտը նահիւնին յատակը կ'իջնայ ու հոն ցեխին մէջ կը քնանայ: Այսպէսով թէ՛ ցուրտին դէմ կը պաշտպանուի եւ թէ ալ պէտք չունենար իր սովորական սնունդին, գորտ անկարելի պիտի ըլլար իրեն համար գտնել: Ու իր սնունդը կը կազմէ իր մարմնին մէջ գտնուած նարպը: Գորտը ջուրին յատակը կը մնայ ամբողջ եղանակին որուն ընթացքին կը շնչէ մորթին միջոցաւ, եւ աչքերը, ունեցերն ու բերանը ուժով

գոց կը պահէ:

Քրոջս սա խօսքն ալ երբեմն միտքս կ'իյնար.- կեանքը նանչնալու է սիրելու համար զայն: Եւ իրաւ ալ տեսայ որ մտածելու կարողութիւն չունեցող էակներ Աստուծմէ տրուած բնագոյն ունին, ու բնականօրէն կը սիրեն կեանքը: Բայց մենք որ կրնանք մտածել, տեսնել ու տրամաբանել այդ բնագոյնի բովն ի վեր, ինչպէ՛ս կրնանք առանց մտածելու ըսել թէ չենք սիրեր կեանքը, երբ տակաւին վստահ չենք թէ նանչցած ենք զայն: Ու ես ինչպէս կարենայի չսիրել կենսաբանութեան դասը զայն սորվելէ ետք, նանչնալէ ետք:

«Սակայն ահա՛ ինչ որ քիչ մը զարմանք պատճառեց ինծի: Հակառակ ամէնուն չմեռնելու երգին, հակառակ ամէնուն կեանքին հանդէպ ունեցած սիրոյն, ամէն գոյութիւն ունեցող բան սահմանուած է մեռնելու, փտտելու: Բայց յետոյ տեսայ որ եթէ աշխարհի վրայ փտտում չըլլայ, տեղ պիտի չմնայ եկող սերունդներուն: Այս ամէնը գիտնալէ վերջ ալ նոյնիսկ, դուն ըսէ, ինչպէս դիմաւորել թեւէն զարնուած ննդուկի մը պարագան: Ինչպէս ընդունիլ բախտին անգթութիւնը ժամանակէն առաջ տժգունած կամ նգմուած ծաղիկի մը: Ու տեսնել թէ վարդ մը տակաւին կոկոն, զոհը կ'ըլլայ միջատի մը, որդի մը: Ու տակաւին ինչպէս բացատրել քանդիչ դերը այն բոլոր հիւանդութեանց մանրէներուն որոնք ամէն օր հատ մը կը խլեն կեանքի ծաղկամանէն: Ու կը խորհիմ, թէ շատ կարճատեւ ըլլալուն համար իսկ, կեանքը կը դառնայ սիրելի: Արդեօք թիթեռնիկնե՞րն ալ շատ քիչ ժամանակի մը համար մեզի հետ ըլլալուն, մեզի սիրելի կը դառնան, ու կը փնտռենք զանոնք, կը սպասենք դիտել զիրենք,

լեցուելու անոնց զմայլելի գեղեցկութեամբ:

«Ու այսպէս օրէ օր, հետաքրքրութիւնս սկսաւ աւելնալ կենսաբանութեան դասին հանդէպ: Ես կը խորհէի մինչեւ այն ատեն, թէ կենդանիները բոյսերով եւ ուրիշ կենդանիներով կը սնանին: Ու երբեք չէի կրնար երեւակայել թէ կրնան գտնուիլ բոյսեր ալ որ միջատներ կ'ուտեն: Սակայն շուտով այս երեւոյթին պատճառն ալ գտայ: Այս բոյսերը կ'ապրին այնպիսի տեղեր ուր բորակածին (nitrogen) փիչ կայ: Պատմե՞մ քեզի թէ ինչպէս միջատներով կը սնանի Սագալեզուն (Butterwort) որ միջատակեր բոյս մըն է: Այս տեսակ բոյսերուն մէջ տերեւին պաշտօնն է միջատներ որսալ, ու անոնցմէ սնունդ առնել: Տերեւներուն ծայրերը (edges) փիչ մը դէպի վեր դարձած են եւ անոնց մակերեսը կ'աչուն է, իբր հետեւանք հարկւրաւոր մանր գեղձերու արտադրութեան: Երբ միջատ մը տերեւին վրայ գայ, ասոր ծայրերը կամաց-կամաց դէպի ներս կը դառնան եւ միջատը տերեւին մէջտեղը կը բերեն: Նոյն ատեն գեղձերուն արտադրութիւնը կ'աւելնայ, եւ այսպէսով տերեւը կ'առնէ միջատէն պէտք եղած սնունդը: Սակայն հետաքրքրական է որ երբ աւագի հատիկ մը դնենք տերեւին վրայ, գեղձերուն արտադրութիւնը չաւելնար, ինչպէս կ'ըլլայ երբ կտոր մը միս կամ պանիր դնենք: Սագալեզուն երբ պէտք եղած սնունդը կ'առնէ, տերեւին ծայրերը ետ կը բացուին, ու միջատին մնացեալ մասը հովը կը տանի:

«Ու ինչպէս միջատակեր բոյսերու կերպարանքը, այնպէս նաեւ ուրիշ տարբեր ստեղծուած բաներու կերպարանքներն ալ նպատակ մը ունին իրենց ետին: Ծաղիկներ գեղեցիկ են իրենց գոյներով ու տեսքով: Այս միայն մեր

նաշակները ազնուացնելու եւ անոնց գոհացում տալու համար չէ եղած անշուշտ, այլ միջատներու ուշադրութիւնը գրաւելու, մանաւանդ մեղուինը, որպէս զի ան կարենայ ծաղիկներէն նեկտար հաւաքել եւ միշտ շինել, ու մէկ ծաղիկի փոշին ուրիշի մը տանելով անուղղակի բեղմնաւորում յառաջ բերել:

«Ուրիշ բան մըն ալ ըսած էր քոյրս.- «Կենսաբանութեան դասով կեանքի երեւոյթներու, ասոր կազմութեան ու ձեւի մասին երբ տեղեկութիւններ ունենաս հիմա իբր աշակերտ, յետոյ աւելի դիւրութեամբ կրնաս բացատրութիւն տալ ուրիշ երեւոյթներու ալ, որոնք անխուսափելիօրէն դէմդ պիտի ելլեն կեանքի մէջ:» Հիմա կը հասկնամ ինչ ըսել կ'ուզէր: Որովհետեւ հիմա գիտեմ թէ ամէն բան իր տեղը ու դերը ունի կեանքի ու բնութեան մէջ: Մէկ մասը կը բանդէ ինչ որ Աստուած կը շինէ, ինչ որ ուրիշ մաս մը կը շինէ: Ու ինչպէս մեքէ՞ մարդիկ -- կենդանիներու ամենէն զարգացած վիճակը ունեցողներ -- այնպէս ալ ամէն կենդանիներ ու բոյսեր, այսինքն կեանք ունեցող ամէն բան չի կրնար ինքնիրեն ապրիլ ու արժէք ունենալ: Որովհետեւ կեանքը իբր ամբողջ երեւոյթներու ներդաշնակութիւն մըն է: Ասոր համար չէ՞ որ կ'ըսեն.- Առանց փուշի վարդ չ'ըլլար»: Ու գիտցիր, ամէն ծաղիկ իր թաւիշով, ու թռչուն իր թռիչքով, ամէն թիթեռնիկ իր թւերուն հրապոյրով, նոյնիսկ փուշը իր տուած ցաւով, իր տեղը ունի: Կեանք ունեցող ամէն բան, ընդհանրապէս, իր աշխատանքի բաժինը կը բերէ կեանքի յաւերժացումին համար: Ու ո՛չ մէկը կրնայ լեցնել ուրիշի մը աշխատանքին պակասը: Սակայն դարձեալ բացառութիւններ կան: Ապրող էակներ՝ որոնք շատ ծոյլ են ու չեն ուզեր իրենց

աշխատանքով ապրիլ: Այս տեսակ մակարոյծներ թէ՛ բոյսերու մէջ կ'ան եւ թէ՛ կենդանիներու: Ո՛չ մէկ մակարոյծի նպատակը լաւ է, բայց իր կատարած գործը - այսինքն ուրիշներու կեանքին գինով իր կեանքը ապահովելը - մարդկութեան օգտին տեսակէտէն երբեմն լաւ արդիւնքներ ունի: Որովհետեւ այսպէսով կը պակսին մարդկութեան առողջութիւնը վտանգող կարգ մը թշնամիներ՝ ճաններ:

«Ճաննի տեսակ մըն ալ կայ որ կաղամբ սիրողներուն օգտակար կ'ըլլայ, որովհետեւ ան իր հակիթները կ'ածէ թիթեռնիկի հակիթներուն մէջ: Ու այս թիթեռնիկի տեսակ մըն է որուն թրթուռը կաղամբի տերեւներով կը սնանի: Բայց կաղամբի տերեւներուն փոխարէն, այս անգամ կը պակսին ճերմակ թւերով աղուոր թիթեռներ:

«Կը տեսնե՞ս ինչեր գտեր եմ: Ու

տակաւին ինչեր ալ պիտի գտնեմ: Որքան սորվիմ այնքան կ'աւելնայ սորվելու փափաքս, ու այնքան աւելի կը զգամ անհրաժեշտութիւնը ուղեղս լեցնելու, որպէս զի նօսրանայ տգիտութեան մութը: Հիմա ո՛չ միայն կը սիրեմ կենսաբանութեան դասը, այլ աւելի արժէք կու տամ մանաւանդ կեանքին, որովհետեւ ինծի համար այլեւս հետաքրքրական է ան ու սիրելի: Ուրախ եմ որ բոլորս թելադրութիւնը առիթ մը եղաւ որ սիրեմ ու սորվիմ այդ դասը: Որովհետեւ հիմա փոխանակ ուսուցիչս տրտմեցնելու իմ ձախողութեամբս, իրեն տուի հրեռանք իմ աշխատանքս ու ասոր արդիւնքը տեսնելու, ու գնահատելու զանոնք: Ու հիմա, լեցուն եմ առնուազն սորված ըլլալուս գոհունակութեամբ, ու «գտած ըլլալու հանոյքով:»

Ն. Ե.

ՏԵՂԵԿԱՆՔ Տ. ԿՈՐԻԻՆ ԱԲՂ. ՊԱՂԴԱՍԱՐԵԱՆԻ

ՀԱՆԳԻՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՊՕՂՈՍ II ՍՐԲԱԶԱՆ ԲԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ

Շաբաթ, 2005 թուականի Ապրիլ 2-ին, երեկոյան ժամը 9:37-ին, երկարատեւ հիւանդութիւնից յետոյ, Վատիկանի Առաքելական Պալատում, 85 ամեայ հասակում, իր մահկանացուն կնքեց Կաթոլիկ Եղեկեցու Հովուապետ Յովհաննէս-Պօղոս II Սրբապան Բահանայապետը՝ խորը սգի մատնելով աւելի քան մէկ միլիարդ կաթոլիկ հաւատացեալներին:

Երջանկայիշատակ Բահանայապետը երկար տարիներ տառապում էր “Parkinson” հիւանդութեամբ, իսկ մահուանից երկու ամիս առաջ նրա մօտ երեւան եկան շնչառական անբաւարարութիւն, որն էլ յանգեցրեց շնչափողի վիրահատութեան եւ Սրբապան Բահանայապետի առողջութեան վերջնական քայքայման:

Ապրիլի 4-ին Կլէմէնտին Սրահից Սրբապան Բահանայապետի մարմինը փոխադրուեց Սբ. Պետրոսի Տաճար: Այդ օրերին Հռոմ այցելեցին աւելի քան 4-5 միլիոն հաւատացեալներ՝ իրենց յարգանքի վերջին տուրքը մատուցելու եւ հրաժեշտ տալու համար իրենց սիրելի Բահանայապետին: Սբ. Պետրոսի Տաճարը բաց էր հաւատացեալների առջեւ առաւօտեան ժամը 5-ից մինչեւ կէսգիշեր. ժամը 2-ը:

Ուրբաթ, Ապրիլ 8-ին աշխարհը հրաժեշտ տուեց Հռոմի կաթոլիկ առաջնորդ Յովհաննէս-Պօղոս II Պապին: Յուդարկաւորութեան արարողութեանը մասնակցելու համար Հռոմ էին ժամանել աւելի քան 200 պետութիւնների ղեկավարներ: Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութիւնը նախագահում էր Հ.Հ. Վարչապետ Անդրանիկ Սարգսեանը: Հռոմ էր ժամանել նաեւ Ֆրանսիայում Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Պր. Էդուարդ Նալբանդեանը: Յուդարկաւորութեանը նախորդեց երեք ժամանոց Սբ. Պատարագ, որը մատուցեց Կարդինալների Խորհրդի նախագահ Կարդինալ Ռացինգերը: Սբ. Պատարագից յետոյ Եկեղեցու զանգակների դօղանջների եւ յուդարկաւորութեանը մասնակցող բարձրաստիճանի հաւատացեալների ծափահարութիւնների ներքեւ Սրբապան Բահանայապետի մարմինը փոխադրուեց եկեղեցի եւ ամփոփուեց եկեղեցու գեոնայարկ դամբարանում:

Յուդարկաւորութեան արարողութեանը մասնակցում էին տարբեր հաւատքի հոգեւոր առաջնորդներ, որոնց թում նաեւ Հայ Առաքելական Եկեղեցու Վեհափառ Հայրապետ. Գարեգին Բ. Սրբապնագոյն Կաթողիկոսը, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Վեհափառ Արամ Ա., Կ. Պոլսոյ Պատրիարք Ամենապատիւ Մեսրոպ Արք. Մութաֆեանը, Տ. Խաժակ Արք. Պարսամեանը, Տ. Նարեկ Եպս. Ալեմէլեանը, Տ. Գեղարդ Արք. Վահունին եւ Տ. Թաթուլ Արք. Անուշեանը:

Յովհաննէս-Պօղոս II Պապին երախտիքով կը յիշի նաեւ Հայ ժողովուրդը: Նա Հայաստան այցելած Հռոմի միակ Պապն էր եւ նրա օրով Հայ Առաքելական Եկեղեցուն վերադարձուեց Հայաստանում Բրիտոննէութիւնը տարածած առաքելի եւ Հայաստանեայց Եկեղեցու առաջին Բահանայապետ Գրիգոր Լուսաւորչի Սուրբ մատուցները: Նրա գլխաւորութեամբ Վատիկան պետութիւնը ճանաչել է Հայոց Յեղասպանութիւնը: Նրա մահուանից ընդամենը մի քանի ամիս առաջ Սբ. Պետրոսի Տաճարի արտաքին պատի խորշերից մէկում տեղադրուեց Գրիգոր Լուսաւորչի հայկական մարմարէ արձանը՝ ի նշան Կաթողիկէ եւ Հայ Եկեղեցիների բարեկամութեան:

Յովհաննէս-Պօղոս II Պապի մահուան կապակցութեամբ Կարդինալ Ռացինգերին ցաւակցական գիր է յղել նաեւ Երուսաղէմի Հայոց Պատրիարք Տ.

Թորգոմ Արք. Մանուկեանը: Սրբազան Պատրիարքը իր նամակում գրում է. «... Միանալով բազմամիլիոն կաթոլիկ հաւատացեալներին, մենք եւս աղօթում ենք Նորին Սրբութեան հոգու հանգստի համար: Աստուծոյ հաւատարիմ պատգամաբերի մարգարէական խօսքով եւ տեսիլքով, նա իր գահակալութեան տարիներին պաշտպան եւ օգնական եղաւ բոլոր կարիքաւորներին եւ նեղեալներին:

«Հայ Առաքելական Եկեղեցու հաւատացեալները, թէ՛ Հայաստանում եւ թէ՛ Սփիւռքում, իրենց սրտում վառ պիտի պահեն Սրբազան Պապի հետ կապուած բարի յիշատակները: Նրանք միշտ կը յիշեն իր աննախադէպ այցելութիւնը Սր. Էջմիածին եւ մասնակցութիւնը 1700-ամեայ տօնակատարութիւններին եւ 2000 թուականին Սուրբ Երկիր կատարած իր պատմական ուխտանգացութեան ընթացքում Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Մայր Տաճար կատարած այցելութիւնը»:

Իր պատասխան նամակում, Վատիկանի քարտուղար Բրիան Ֆարել եպիսկոպոսը գրում է. «... Ձեր ապիւն նամակը մեծ միւխթարութիւն պարգեւեց Կաթոլիկ եկեղեցու հոգեւոր սպասաւորներին եւ հաւատացեալներին եւ մեծ զնահատանքի արժանացաւ Կանելլենզո, Սողանո եւ Գասպար Կարդինալների կողմից:

«Պիտի ինդրենք, որ շարունակէք աղօթել Կաթոլիկ Եկեղեցու, յառաջիկային սպասուող պապական ընտրութիւնների, ինչպէս նաեւ բոլոր եկեղեցիների միութեան եւ համագործակցութեան համար»:

Ապրիլ 6-ին Լուսարարապետ Նորիան Արք. Մանուկեանը, հոգեւոր Հայրերի հետ, մասնակցեց Յովհաննէս-Պօղոս II Պապի մահուան առիթով Սր. Յարութեան Տաճարում կատարուած Հոգեհանգստան արարողութեանը: Իսկ Շաբաթ, Ապրիլի 9-ին Սր. Գլխադրի Մատուռում մատուցուած պատարագի աւարտին Սրբազան Բահանայապետի հոգւոյն համար Հոգեհանգստեան արարողութիւն կատարուեց Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարում: Արարողութեան հանդիսապետն էր Պատրիարք Սրբազան Հայրը:

Երանի որ ունիցի յիշատակ ի Սիոն.

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՅԻՈՅ ՆՈՐ
ՀՈՎՈՒԱՊԵՏ. ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ ԲԵՆԵԴԻԿՏ XVI ՍՐԲԱԶԱՆ
ԲԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ

Երջանկայիշատակ Յովհաննէս-Պօղոս II Պապի մահուանից տասնմէջ օր անց, Երկուշաբթի, Ապրիլ 18-ին Միադինեան Մատուռում 115 Կարդինալների մասնակցութեամբ գումարուեց աւանդական առանձնաժողով ընտրելու համար Յովհաննէս-Պօղոս II Պապի մահուան թափուր մնացած Կաթոլիկ եկեղեցու յաջորդ գահակալին: Ժողովի մասնակիցների եւ արուարին աշխարհի հետ կապը պիտի պահուէր ընտրութեան կապակցութեամբ Սուրբ Պետրոսի եկեղեցու կուրում տեղադրուած ծիսնելոյսով միայն: Ծիսնելոյսից դուրս եկած սպիտակ ծուխը պիտի աւետէր նոր պապի ընտրութիւնը, իսկ սեւ ծուխը պիտի նշանակէր, թէ ընտրութիւնը դեռ չի կայացել: Ամբողջ աշխարհի ուշադրութեան կենտրոնում յայտնուած ծիսնելոյսը Ապրիլ 18-ին սեւ ծուխ արձակեց, որը նաեւ հիասթափութիւն պատճառեց Սր. Պետրոսի հրապարակում հաւարում

բազմահապար հաւատացեալներին, որոնք սրտատրուփ սպասում էին նոր Պապի ընտրութեան ատեփսին:

Կարդինալների ժողովը շարունակուեց նաեւ յաջորդ օրը եւ երեկոյեան ծիսակոչւից դուրս եկած սպիտակ ծուխը եւ Սբ. Պետրոսի Մայր Տաճարի վանգակների ղօղանջները ատենացին նոր Պապի ընտրութիւնը, որը մեծ հոգեկան ուրախութիւն պատճառեց բազմամիլիոն կաթոլիկ հաւատացեալներին, ինչպէս նաեւ աշխարհի ողջ քրիստոնեաներին: Պետրոս Առաքեալի 265-րդ աթոռակալ էր ընտրուել կարդինալների խորհուրդի նախագահ, ապրութեամբ գերմանացի Կարդինալ Ռացինգերը: Վերջինս, հետեւելով Կաթոլիկ Եկեղեցու աւանդութեանը, իրեն իբր նոր անուն ընտրել է Բենեդիկտ անունը, հանդիսանալով Բենեդիկտ XVI-ը:

Ապա նորընտիր Պապը ներկայացաւ Սբ. Պետրոսի հրապարակում հաւաքուած բազմահապար հաւատացեալներին եւ իր խօսքը ուղղեց նրանց՝ ասելով. «Փաստը, որ Աստուած գիտի ինչպէս աշխատել եւ գործել նոյնիսկ անհամապատասխան գործիքների հետ, միախառնում է ինձ, իսկ ամէնից վեր եւս ապաւինում եմ ձեր աղօթքներին: Առաջ ընթանանք Յարուցեալ Տիրոջ ուրախութեամբ՝ վառահեղով իր անապառ եւ հաստատուն օգնութեանը...»:

Բենեդիկտոս XVI-ի գահակալութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, Ապրիլ 24-ին: Գահակալութեան արարողութեանը մասնակցում էին տարբեր երկրների եւ հաւատքի ներկայացուցիչներ, ի թիւս որոնց նաեւ Կ. Պոլսոյ Պատրիարք Տ. Մեսրոպ Արք. Մուսաֆեանը, Ներսէս Արք. Պոպապալեանը (Սբ. Էջմիածին), Նարեկ Եպս. Ալեմէլեանը (Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն) եւ Տրդատ Բին Ուլունեանը:

Բենեդիկտոս XVI-ի ընտրութեան եւ գահակալութեան առթիւ շնորհաւորանքի նամակ է յղել նաեւ Երուսաղէմի Ամեն. Պատրիարք Տ. Թորգոմ Արք. Մանուկեանը եւ յայտնել իր եւ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան, ինչպէս նաեւ հայ ժողովուրդի շնորհաւորանքն ու բարի մաղթանքները:

Ստորեւ ներկայացնում ենք Բենեդիկտոս XVI-ի ամփոփ կենսագրութիւնը.

* * *

Զոմէֆ Ռացինգերը (Բենեդիկտ XVI) ծնուել է Գերմանիայի Մարկթը-Ամ-Բն քաղաքում, 1927 թուականի Ապրիլ 16-ին:

1946-ից 1951 թթ. Մինիխի Համալսարանում հետեւել է Փիլիսոփայութեան եւ Աստուածաբանութեան դասընթացների:

1951 թ.-ի Յունիս 29-ին Ֆրէյլինգ Մայր Տաճարում ձեռնադրուել է վարդապետ:

1962-ից 1965 թթ., իբրեւ աստուածաբանութեան գլխաւոր խորհրդատու, մասնակցել է Վատիկանի Երկրորդ ժողովի չորս նստաշրջաններին:

1977-ին Պօղոս VI Պապի կողմից նշանակուել է Մինիխեն եւ Ֆրէյլինգ քաղաքների առաջնորդ:

Նոյն տարուայ Մայիսի 28-ին ձեռնադրուել է Եպիսկոպոս, իսկ Յունիսի 27-ին Պօղոս VI-ի կողմից նրան շնորհուել է կարդինալի աստիճան:

2002 թ.-ին Յովհաննէս-Պօղոս II Պապի կողմից նշանակուում է Կարդինալների Խորհրդի նախագահ:

Երեքշաբթի, 2005 թուականի Ապրիլ 19-ին ընտրուում է Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու 265-րդ Բահանայապետ, ընտրելով Բենեդիկտ անունը:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 90 ԱՄԵԱԿԻ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԶԵՌՆԱՐԿՆԵՐ

ԳԻՏԱԺՈՂՈՎ ՀՐԷԱԿԱՆ ՎԱՆ ԼԻՐ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՈՒՄ

Երիտթուրքերի կառավարության քանելորդ դարի իրականացրած անենադաժան եւ հայառեաց յանցագործութեան՝ Հայոց Ցեղասպանութիւնից անցել է 90 տարի: Օրուայ թուրք իշխանաւորները, գլխաւորութեամբ Թալէաթ, Ենվեր եւ Զէնալ փաշաների, օգտուելով Համաշխարհային առաջին պատերազմից շարունակեցին իրենց նախնիների հայաջինջ քաղաքականութիւնը եւ իրականացրեցին հայերի ոչնչացման վաղուց յղացած անմարդկային եւ աննախադէպ ծրագիրը:

90 տարի անց Թուրքիան շարունակում է իր ոճրագործ քաղաքականութեան ընթացքը՝ ժխտման եւ ուրացման քաղաքականութեամբ: Թուրքիան մերժում է հաշտուել իր անցեալի հետ եւ բարիդրացիական յարաբերութիւններ մշակել իր հարեան Հայաստանի հետ: Սակայն հայ ժողովուրդը միակամ է հայութեան եւ համայն մարդկութեան դէմ գործուած ծանրագոյն այս յանցանքը դատաւարտելու գործում: Ամէն տարի Ապրիլի 24-ին Ցեղասպանութեան միջապգային ճանաչման պահանջով, թէ՛ Հայաստանում եւ թէ՛ Սփիւռքի բոլոր գաղթօճախներում, կապնակերպում են բողոքի ցույցեր, գիտաժողովներ եւ սգահանդէսներ: Պահանջատիրութեան այդ գործընթացին գործօն կերպով մասնակցում է նաեւ Իսրայէլի փոքրաթիւ գաղութը: Ցեղասպանութեան 90-ամեակի առիթով Ապրիլեան Ոգեկոչման Սաղիմահայ Միացեալ Յանձնախումբը կապնակերպել էր «Ցեղասպանութիւն 20-րդ Դարում, 90 Տարի Հայոց Ցեղասպանութիւնից Անց» թեմայով երկօրեայ գիտաժողով, որը մեկնարկեց Հինգշաբթի, Ապրիլի 7-ին Վան Լիւր ակադեմիական հաստատութիւնում: Գիտաժողովին մասնակցում էին Ֆրանսայից, Անգլիայից եւ Գերմանիայից ժամանած հայազգի եւ օտար գիտնականներ եւ պատմաբաններ, ինչպէս նաեւ Հրեայ ցեղասպանագէտներ եւ պատմաբաններ:

Գիտաժողովի առաջին նաուաշրջանի բացումը կատարեց Հոլոքոստի եւ Ցեղասպանութեան ինստիտուտի տնօրէն, ցեղասպանագէտ Իսրայէլ Չարնին: Բացման խօսքից յետոյ ելոյթով հանդէս եկաւ Պրոֆ. Յեհուդա Բոերը «Հնարաւոր է կանխարգիլել Ցեղասպանութիւնը» թեմայով: Բանախօսը իր խօսքում շեշտեց. «Աշխարհը շարունակում է չճանաչել Հայերի Ցեղասպանութիւնը, որի պատճառով Ցեղասպանութիւնների կրկնութեան հաւանականութիւնը շատ բարձր է մնում: Եթէ աշխարհը ժամանակին ճանաչէր եւ դատաւարտէր Հայերի Ցեղասպանութիւնը, ապա տեղի չէին ունենայ Հրեաների Ողջակիպումը, Կամբուդիայի եւ Ռումանիայի ցեղասպանութիւնները, եւ այսօր, Ցեղասպանութիւն տեղի չէր ունենայ Դարֆուրում (Սուդան): Ճանաչումը կարեւոր է հետագայում ցեղասպանութեան յանցագործութիւնը կանխելու համար»: Յարգելի բանախօսը իր ելոյթը եպրափակեց հետեւեալ նախադասութեամբ. «Ցեղասպանութիւնը չճանաչելը կրկին Ցեղասպանութիւն է» եւ իբրեւ կանխարգելման առաջնակարգ եւ կարեւորագոյն պայման, առաջարկեց 20-րդ դարի առաջին՝ Հայերի Ցեղասպանութեան ճանաչումն ու դատաւարտումը:

Ապա ելոյթ ունեցաւ Գլոյ Մութաֆեանը՝ «Պատմական Հեռանկար. 90 Տարի Հայոց Ցեղասպանութիւնից Անց» թեմայով: Պր. Մութաֆեանը իր

ելոյթում հակիրճ կերպով ներկայացրեց հայոց պահանջատիրութեան պատմութիւնը եւ դրա վարձացման փուլերը:

Այնուհետեւ ելոյթ ունեցան Ռէյմոնդ Գեորգեանը եւ Հիլմեր Կայսերը, որոնց թեմաներն էին «Հայկական Յեղասպանութեան տնտեսական ասպեկտները» եւ «Միութիւն եւ Զարգացում. Միոնիստները եւ Հայկական Յեղասպանութիւնը» յաջորդաբար:

Կարենոր ելոյթով հանդէս եկաւ նաեւ Դոկտոր Արա Սարաֆեանը, որի թեման Հայոց Յեղասպանութեան վերաբերեալ Ամերիկայի Միացեալ Նահանգներում պահուող արխիւներն էին եւ Դեսպան Մորգենթաուի օրագրութիւնները եւ անձնական արխիւները:

Դոկտոր Արա Սարաֆեանը տնօրէնն է Յեղասպանութեան ուսումնասիրութիւնների Կոմիտաս հաստատութեան: Նա հիմնականում աշխատում է Հայոց Յեղասպանութեան վերաբերող օտար փաստաթղթերի եւ աղբիւրների հաւաքագրմամբ եւ հրատարակմամբ: Մէկ տարի առաջ նրա ջանքերով լոյս է տեսել Թուրքիայում Ամերիկայի Միացեալ Նահանգների դեսպան (1913-1916) Հենրի Մորկենթաուի օրագիրը, ուր մանրամասնօրէն նկարագրում է Հայերի Յեղասպանութիւնը: Տպագրուել է նաեւ Թուրքիայում Միացեալ Նահանգների դեսպան (1913-1916) Աբրահամ Ելքոսի յիշողութիւնների արձանագրութիւնները: Արա Սարաֆեանը նախընտրում է աշխատել ամերիկեան արխիւների վրայ, քանի որ, դրանք՝ ըստ Սարաֆեանի. «... գրուած են անգլերէն, եւ գրուած են այնպիսի մի երկրի դեսպանների, հիւպատոսների եւ միսիոնարների կողմից, որ մինչեւ 1917 թիւը չէր մասնակցում Համաշխարհային Ա. պատերազմին, ուստի արխիւներում արձանագրուած է միայն իրականութիւնը՝ ականատես վկաների կողմից»:

Գիտաժողովի երկրորդ նստաշրջան սկսուեց Գեորգ Հինթիլեանի բացման խօսքով: Նա իր խօսքում շեշտեց, որ շատ կարեւոր է իւրաքանչիւր միջնակարգ կրթական եւ համալսարանական հաստատութիւններում պատմութեան դասընթացներին Յեղասպանութեան նիւթի դասաւանդումը: Ապա գոհունակութիւն յայտնեց, որ Իւրայէլում Յեղասպանութեան դասաւանդման արդիւնքում աշակերտութեան եւ ուսանողութեան մեծ մասը տեղեակ է Հայոց Յեղասպանութեանը, հակառակ այն փաստի, որ մինչեւ օրս Իւրայէլը չի ճանաչել հայոց Յեղասպանութիւնը:

Բացման խօսքից յետոյ արդեցիկ ելոյթով հանդէս եկաւ պատմաբան Եաիր Օրոնը, որը խիստ կերպով քննադատեց հայերի Յեղասպանութեան կապակցութեամբ Իւրայէլի վարած մեթոման եւ ուրացման քաղաքականութիւնը: Նա քննադատեց նաեւ Իւրայէլի նախկին վարչապետ Շէմոն Փերեսին, որը Թուրքիայում յայտարարել էր, թէ Հրէական Հոլոքոստը չի կարելի համեմատել հայերի կոտորածների հետ: Նա նաեւ քննադատեց այսօրուայ իշխանութիւններին, որոնք չէին հրաւիրել Հայաստանից ներկայացուցիչներ՝ մասնակցելու Եաղ Վաշենի նոր թանգարանի բացման արարողութեանը, այն դէպքում, երբ Հայաստանի ներկայացուցիչները՝ բանախօսի խօսքերով. «... հրաւիրեալների կարգում պէտք է լինէին առաջիկը»: Նա իր ելոյթը եպրափակեց հետեւեալ նախադասութեամբ. «Ես ամաչում եմ, որ մինչեւ հիմա Իւրայէլը չի ճանաչել Հայոց Յեղասպանութիւնը»: Ի դէպ Եաիր Օրոնը հեղինակն է «Ուրացում. Իւրայէլը եւ Հայկական Յեղասպանութիւնը» վերնագրով վերջերս լոյս տեսած գրքի:

Եաիր Օրոնի բանախօսութեանը յաջորդեց Եօնա Վեիցի ելոյթը: Նա իր ելոյթում ներկայացրեց Երուսաղէմի հայութեան ծաւալած գործունէութիւնը՝ Հայոց Յեղասպանութեան ճանաչման վերաբերեալ:

Այնուհետև ելոյթ ունեցան Դոկտոր Անու Գոլդբերգը եւ Ռաբբի Դոկտոր Արիել Փիկարովը:

Նշենք, որ գիտաժողովին մասնակցում էր Երուսաղէմի Հայոց Սրբապան Պատրիարքը, ինչպէս նաեւ մեծ թուով հայ եւ օտար ուսանողներ եւ անհատներ:

ԳԻՏԱԺՈՂՈՎ ԺԱՌԱՆԳԱԽՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄՐԱՀՈՒՄ

Յեղասպանութեան 90-ամեակի առիթով Ապրիլեան Ոգեկոչման Սաղիմահայ Միացեալ Յանձնախումբի կազմակերպած «Յեղասպանութիւն 20-րդ Դարում, 90 Տարի Հայոց Յեղասպանութիւնից Անց» թեմայով գիտաժողովը շարունակուեց Ապրիլի 11-ին, Ժառանգաւորաց Վարժարանի սրահում:

Գիտաժողովը սկսուեց Գէորգ Հինթլեանի բացման խօսքով: Բացման խօսքին յաջորդեց առաջին նստաշրջանի նախագահող Ալբերտ Աղապարեանի ելոյթը: Ապա ելոյթ ունեցաւ Բերգէն Համալսարանից նորուեզիացի Դոկտոր Բնգեր Մարի Օկենհոգը, որը ներկայացրեց հայ ժողովրդի բարեկամ Բողիլ Բջորնի կենսագրութիւնը եւ Արեւմտեան Հայաստանում նրա ապրած կեանքն ու ծաւալած գործունէութիւնը, որը Բողիլ Բջորն մանրամասն գրի է առել իր օրագրում: Այնուհետև ելոյթ ունեցաւ Դոկտոր Ռէյմոնդ Գէորգեանը, որը խօսեց Հայոց Յեղասպանութեան մէջ Բեհաեղին Շաքիրի ունեցած դերի մասին: Նստաշրջանի վերջին բանախօսը Դոկտոր Գլոդ Մուռաֆեանն էր, որ ներկայացրեց Թուրքական ուրացման եւ ժառողական քաղաքականութեան որդեգրած նոր ուղիները:

Գիտաժողովի երկրորդ նստաշրջանը սկսուեց Բիրյէթ Համալսարանի Պրոֆ. Ռոգեր Հիքոքի բացման խօսքով: Այնուհետև ելոյթ ունեցաւ «Թերրա Սանթա» պարբերականի խմբագիր Հայր Փօլ Սիլվեստրը, որը ներկայացրեց Հայոց Յեղասպանութեան մասին Ֆրանչիսկան եղբայրների կողմից արուած արձանագրութիւնները: Ապա ելոյթ ունեցաւ Դոկտոր Ազապի Նասսիբեան-Էքմէքճեանը, «Բրիտանական Մարդասիրական Օժանդակութիւնը եւ Հայոց Յեղասպանութիւնը» թեմայով: Նստաշրջանի վերջին բանախօսը Մադրիդի Համալսարանի Պրոֆ. Կարմեն Լոֆէպ Ալոնսոնն էր, «Յեղասպանութեան Հիմնախնդիրը Այսօր» թեմայով:

Փոքր դադարից յետոյ գիտաժողովի երրորդ նստաշրջանը բացուեց Դոկտոր Փետրա Հէլլթի բացման խօսքով: Ապա ապրեցիկ ելոյթով հանդէս եկաւ գերմանացի Դոկտոր Հիլմար Զայպերը «Գերմանիան եւ Հայոց Յեղասպանութիւնը» թեմայով: Նա մանրամասն ներկայացրեց Հայոց Յեղասպանութեան մէջ ունեցած Գերմանիայի դերը եւ բերած մասնակցութիւնը: Իսկ Հայոց Յեղասպանութեան միջապգային ճանաչման համար, նա արդար է համարում հայ ժողովրդի պահանջը Թուրքիայի Երոմիութեան անդամակցելու պայման դարձնել Հայոց Յեղասպանութեան ճանաչումը: Նստաշրջանի վերջում ելոյթ ունեցաւ Դոկտոր Գայի Սելփարտը, ով խօսեց Թուրքիայում Գերմանիայի Հիւպատոս Վոլտեր Բուլերի կեանքի եւ վարած գործունէութեան մասին:

Գիտաժողովի վերջին նստաշրջանը սկսուեց նստաշրջանի վարող նախագահ Դոկտոր Ժորժէթ Աւագեանի խօսքերով, ով իր խօսքում նախ յիշեց Հիւլերի «Ո՞վ է հիմա յիշում հայերի ցեղասպանութիւնը» խօսքը եւ շարունակելով իր միտքը նշեց, թէ Հայոց Յեղասպանութեան հանդէպ ցուցաբերած պետութիւնների անտարբերութիւնն ու հանդուրժողութիւնը ծնեց նոր ցեղասպանութիւններ: Իսկ դրանց կանխարգելման միակ նախապայմանը

Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչումն է: Նոյն համատեքստով էլոյթ ունեցաւ նաեւ հրեայ պատմաբան Եսայի Օրոնը «Իսրայէլը եւ Հայերի Ցեղասպանութիւնը» թեմայով՝ աւելի կենտրոնականով Իսրայէլի ուրացման եւ չընդունման պատճառներին: Ապա էլոյթ ունեցաւ Եօնա Վեիցը «Յիշողութիւն եւ Հայոց Ցեղասպանութիւն» թեմայով: Գիտաժողովը աւարտուեց Հայր Նախն Աթիկի եւ Արիս Եպս. Շիրվանեանի ելոյթակիչ էլոյթներով:

Համոզուած ենք, որ այս գիտաժողովը անպայման դրական ազդեցութիւն կ'ունենայ Իսրայէլում եւ օգտակար արձագանք կը գտնի Իսրայէլում բնակւող հրեայ եւ պաղեստինցի ժողովուրդների մէջ:

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅ ՅԱԿՈԲԵԱՆՑ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԵՒ ՍԳԱՀԱՆԴԵՍ ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՍՐԱՀՈՒՄ

Այս տարի Երուսաղէմում Ցեղասպանության յիշատակության ձեռնարկները եւ սգահանդէսը մէկ օրով յետաձգուեց եւ նշուեց Ապրիլ 25-ին, քանի որ Ապրիլ 24-ին կուգադիպել էր Ծաղկապարոյի տօնը:

Երկուշաբթի, Ապրիլ 25-ին Սբ. Պատարագ մատուցուեց Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարում: Պատարագին մասնակցում էին Իսրայէլում հաւատարմագրուած օտարազգի դեսպաններ եւ հիւպատոսներ, դիւանագէտներ, տարբեր յարանաւանդութեանց հոգեւոր եւ աշխարհիկ ներկայացուցիչներ: Պատարագը մատուցեց Գերշ. Տ. Արիս Եպս. Շիրվանեանը, ով նաեւ քարոյեց հայերէն եւ անգլերէն լեզուներով: Պատարագի աւարտին, Պատրիարք Սրբապան հօր հանդիսապետութեամբ, կատարուեց Հոգեհամառեան արարողութիւն Եղեռնի մէկ ու կէս միլիոն անմեղ նահատակների հոգոյ հանգստութեան համար: Այնուհետեւ կապմուտեց սգոյ թափօր, եւ հոգեւոր հայրերի ու հարիւրաւոր մասնակիցների ուղեկցութեամբ թափօրն ուղղուեց դէպի Սբ. Փրկչի Վանքում գտնուող Արարայի յուշարձան, ուր եւս կատարուեց Հոգեհանգստեան արարողութիւն: Արարողութեան աւարտին էլոյթ ունեցաւ Պր. Սերոբ Սահակեանը, ով խօսեց ազգային գաղափարախօսութեան եւ դրանով մեր նոր սերունդներին կրթելու կարեւորութեան մասին:

Երեկոյեան Ժառանգաւորաց Վարժարանի սրահում տեղի ունեցաւ Եղեռնի կոհերին նուիրուած սգահանդէս: Ներկաները նախ մէկ լուսկ լռութեամբ յարգեցին Եղեռնի նահատակների յիշատակը, որին յաջորդեց Պատրիարք Սրբապան Հօր արողասանած աղօթքը: Ապա էլոյթ ունեցան Նոյեմի Նալպանտեանը (Հ.Օ.Մ.), Յակոբ Փանտեանը (Հ.Ե.Մ.) եւ Արամ Խաչատուրեանը (Ե.Հ.Բ.Մ.): Նրանց էլոյթներում մի ընդհանրութիւն կար եւ դա՝ կոչ էր ողջ հայութեանը՝ պայքարել Հայոց Ցեղասպանության համընդհանուր ճանաչման եւ արդար գնահատականի համար: Հասնել նրան, որ աշխարհը ընդունի Հայոց Ցեղասպանութիւնը եւ դատապարտի այն իբր ծանրագոյն յանցագործութիւն: Այնուհետեւ, փայլուն կերպով եւ տպաւորիչ կատարմամբ հանդէս եկաւ Ժառանգաւորաց Վարժարանի երգչախումբը: Ապա բանախօսեց Պրոֆ. Լեւոն Շիրինեանը: Ըստ բանախօսի՝ յանցագործութիւնը չի կարող ունենալ վաղեմութեան ժամկէտ եւ իւրաքանչիւր նման արարք պէտք է դատապարտուի, իսկ մեղաւորները պէտք է արժանանան խառագոյն պատժի: Բանախօսութիւնից յետոյ, Գերոգ Հինդիկեանը ընթերցեց Վահագն Տաւրեանի խօսքը՝ ուղղուած հայ ժողովրդին, Հայոց Ցեղասպանության 90 ամեակի

առթիւ: Իսկ յետոյ, Յարութ Պաղամեանը սամոնքեց Պարոյր Սեւակի «Դօղանց Եղեռնական» բանաստեղծութիւնը:

Սգահանդէսը աւարտուեց Պատրիարք Սրբապան Հօր փականն խօսքով եւ Հայր մերի երգեցողութեամբ ու պահպանիչով:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՅՈՒՇ-ԵՐԵԿՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՍԻ ՀՐԷԱԿԱՆ ՀԱՍԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Երուսաղէմ, Մայիսի 2-ին Երուսաղէմի Հրեական Համալսարանում տեղի ունեցաւ Հայոց Ցեղասպանութեան յուշ-երեկոյ: Յուշ-երեկոյի առաջին նիստը սկսուեց Հայագիտական Ամբիոնի տնօրէն Պրոֆ. Մայր Սթոնի բացման խօսքով, որին յաջորդեց երապելէն եւ հայերէն ընթերցումներ՝ Եպէկիէլ մարգարէի 37-րդ գլխից: Ապա ներկաները մէկ լուպէ լոռութեամբ յարգեցին զոհուածների յիշատակը, որին յաջորդեց Պատրիարք Սրբապան Հօր եւ Համալսարանի Հումանիտար առարկաների ֆակուլտետի տնօրէն Պրոֆ. Ստեան Կափլանի ողջունի խօսքերը: Այնուհետեւ երաժշտական համարով հանդէս եկան Գուսան Վրդ. Ալմանեանը, Աշոտ Սահակեանը, Նուբար Ապանեանը եւ իր ընտանիքը:

Յուշ-երեկոյի երկրորդ նիստին նախ ելոյթ ունեցան Դոկտոր Սերջոյ Լա Փոլթան եւ Պր. Յուպ Լոնֆը: Ապրիլի քանախօսութեամբ ելոյթ ունեցաւ նաեւ ցեղասպանագէտ եւ մեծ հայասէր Պրոֆ. Իսրայէլ Չարնին: Յարգելի բանախօսը իր ելոյթում խօսեց Թուրքիայի ուրացման քաղաքականութեան մասին եւ իր միտքը շարունակելով նշեց «... Մենք արդէն իրական յաղթանակի ճանապարհին ենք: Հակառակ Թուրքիայի բանեցրած ճնշումների, այսօր Թուրքիայում օրէցօր աւելանում է այն թուրք գրականագէտների եւ դիւանագէտների թիւը, որոնք ընդունում են Հայոց Ցեղասպանութեան անհերքելի իրողութիւնը: Ընդ որում, այն դէպքում, երբ նման քայլ այսօր Թուրքիայում որակւում է իբրեւ դաւաճանութիւն եւ հետապնդում՝ քրեական հետախույզութեամբ»:

Յուշ-երեկոյին մասնակցում էին ստելի քան հարիւր հայ եւ օտար ակադեմականներ, ուսանողներ եւ անհատներ: Յուշ-երեկոն դրական արձագանք ունեցաւ մասնակիցների շրջանակում: Յուշ-երեկոյին անդրադարձել է նաեւ տեղական թերթերից «The Jerusalem Post» պարբերականը:

Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐԸ ԱՍԱԵՆԱՊԱՏԻ Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐԸ. ՍՈՒՏԱՖԵԱՆԻ ԱՅՅԸ ԵՐՈՒՍԱՂԷՍ

Երուսաղէմը իբր Սուրբ Բաղաթ, քրիստոնէութեան հիմնադիր Յիսուս Բրիստոսի հրաշափառ յարութիւնից յետոյ, միշտ դէպի իրեն է գրաւել բազմաթիւ ուխտատուներ: Ուխտատուների շարքում, իրենց թուով միշտ առանձնացել են հայ ուխտատուները, որոնց հոսքը երբեք չի դադարել դարերի ընթացքում, նոյնիսկ այն ժամանակ, երբ Երուսաղէմը գրաւուած է եղել ոչ-քրիստոնէայ զաւթիչների կողմից: Այսօր եւս, թէեւ փոքր թուով, հայ ուխտատուները շարունակում են այցելել Երուսաղէմ եւ մասնակցել Ծննդեան եւ Յարութեան հոգեպարար արարողութիւններին:

Երուսաղէմում, 2005 թուականի Բրիստոսի Հրաշափառ Յարութիւնը տօնուեց Մայիսի 1-ին՝ ըստ հին տոմարի: Զատկական արարողութիւններին

մասնակցելու համար ուխտաւորաբար քաղաքս ժամանեց Կ. Պոլսոյ Պատրիարք Տ. Մեսրոպ Արք. Մուտաֆեանը, որին ուղեկցում էին Հոգ. Տ. Եղիշէ Արք. Ուշքունեանը, Հոգ. Տ. Զաքէոս Արք. Օհանեանը, Տ. Տրդատ Բին. Ուլունեանը: Պատրիարք Սրբապանի հետ Երուսաղէմ էին ժամանել նաեւ Ֆերիզիւղի Սրբոց Վարդանանց երգչախումբը եւ վեց տասնեակ ուխտաւորներ:

Աւագ Հինգշաբթի, Ապրիլ 28-ին Պատրիարք Սրբապանը եւ ուխտաւորները մասնակցեցին Ունկուայի արարողութեանը, Ուխտաւորաց Թափօրին, իսկ երեկոյեան՝ Խաւարման հսկումին:

Յաջորդ օրը երեկոյեան Սրբոց Վարդանանց երգչախումբը ելոյթ ունեցաւ Ժառանգաւորաց Վարժարանի սրահում: Նրանք փայլուն եւ արհեստավարժ կերպով կատարեցին յարութեան շարականներ եւ մեղեդիներ, ինչպէս նաեւ ժողովրդական եւ ազգային երգեր: Երգահանդէսին մասնակցում էին զոյգ Պատրիարքները, ուխտաւորները եւ սաղիմահայութիւնը: Այն աւարտուեց Երուսաղէմի Սրբապան Պատրիարքի փականն խօսքով եւ պահպանիչով:

Աւագ Շաբաթ, Մեսրոպ Պատրիարք Սրբապան Հայրը եւ ուխտաւորները Սր. Յարութեան Տաճարում մասնակցեցին Լուսաւորեայի արարողութեանը, իսկ երեկոյեան՝ Ճրագալոյցի Պատարագին, որի երգեցողութիւնը կատարեց Սրբոց Վարդանանց երգչախումբը: Երգչախումբը կատարեց նաեւ Յարութեան առաւօտեան Բրիստոսի Գերեզմանի վրայ մատուցուած Սր. Պատարագի երգեցողութիւնը:

Երկուշաբթի, Մայիս 2-ին, Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարում Պատրիարք Սրբապանը մատուցեց ուխտի Սր. Պատարագ, իսկ երեկոյեան “Christmas” հիւրանոցում տեղի ունեցաւ հրաժեշտի ընթրիք՝ Պատրիարք Սրբապան Հօր եւ երգչախումբի անդամների հետ:

Յաջորդ օրը Պատրիարք Սրբապանը եւ ուխտաւորները վերադարձան Թուրքիա:

Ի դէպ, այս տարի ուխտաւոր հոգեւորականներ էին ժամանել նաեւ Սր. Էջմիածնից: Ժամանած ուխտաւորներն էին Արցախի Թեմի Առաջնորդ Տ. Պարգեւ Արք. Մարտիրոսեանը, Տ. Օշական Վրդ. Գիւլգիւլեանը (Գերմանիա), Տ. Սահակ Արք. Շաքարեանը, Տ. Կիրէղ Արք. Վարդանեանը եւ Տ. Նորայր Արք. Միսօնեանը: Հիւր ուխտաւորները մասնակցեցին տօնական արարողութիւններին եւ իրենց կեցութեան կարճ ժամանակամիջոցում առիթ ունեցան նաեւ այցելել Երուսաղէմի տարբեր կրօնական սրբավայրեր, Բերթէհէմ, ինչպէս նաեւ՝ Մեռեալ ծով եւ Գալիլիայի շրջան, ուր ծանօթացան մշակութային եւ պատմական արժէք ներկայացնող հնութիւններին եւ հոգեպէս հաղորդուեցին քրիստոնէական սրբութիւններին:

Մայիսի 4-ին, հիւրերը իրենց ուխտը նորոգած եւ հոգեկան մեծ լիցք ստացած վերադարձան Հայաստան:

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

| | | |
|-------------------------------------------------------------|-------------------------------|---------|
| - Ս. Յարութեան Պատգամ | Գարեգին Բ. Վեհ. Կաթողիկոս | 109-111 |
| ԿՐԾՆԱԿԱՆ | | |
| - Հոգեւորական Պաշտօնի Կրկնակ Յատկաւորումները | Թ. Ե. Գ. Նուրհան Արք. | 112-113 |
| - «Որում Շատ Թողուցու՝ Շատ Սիրէ» | Մանուկեան | 114-117 |
| - Հայր Յարութեան Հաւատքին Կը պարտի իր Յաւերժութիւնը | Վարդան Ա. Քենյ. Տիւլկերեան | 117-119 |
| - Ապրիլ 24ը Ի՞նչ կը Նշանակէ Հայուն | Ալպէն Նորատունկեան | 120-126 |
| - Քու Տունիդ Հիմը Ի՞նչ է | Շահէ Ա. Քենյ. Ալթունեան | 127-128 |
| - Դաւիթ Թագաւորի Մեղքերը | Կարէն Ա. Քենյ. Կտանեան | 128-129 |
| ՇՆՈՐՀԱԽՈՐԱՆՔ | | |
| - Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսէն | | 130 |
| - Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոսէն | | 131 |
| - Կ. Պոլսոյ Հայոց Սրբազան Պատրիարքէն | | 132 |
| - Վատիկանէն՝ Սրբազան Պապին Վախճանման առիթով բղթակցութիւն | | 133-135 |
| - Ռուսաց Սրբազան Պատրիարքէն | | 136 |
| ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ | | |
| - Իմ Ծննդեան քիւր Միխայէլ Մատուսովսկի | Թրգմն. Սիլվա Կապուտիկեան | 137 |
| - Հայաստան Սերգեյ Գորոտեկցի | Թրգմն. Համօ Սահեան | 138 |
| - Ծիծեռնակաբերդ Այն Կապիւս | Թրգմն. Վահագն Դաւթեան | 139-140 |
| - Ինչպէս մարդուն են սիրահարում Վերա Զվյագենցիվա | Թրգմն. Գէորգ Էմին | 141 |
| - Մի Լայ, Հայաստան Էդուարդաս Միժելայտիս | Թրգմն. Գէորգ Էմին | 141-142 |
| - Հայաստան Թամարա Պոնոմարյովա | Թրգմն. Գէորգ Էմին | 142-143 |

ԳՐԱԿԱՆ

- | | | |
|--------------------|-----------|---------|
| - Զահրան | Նահապետ | 144-146 |
| - Մառ Մըն Ալ Ինկալ | Մեյֆոնեան | 146-148 |

ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ

- | | | |
|---------------|-----------------------------|---------|
| - Նեոի Դրոշմը | Ղեւոնդ Աբղ. Յովհաննիսեան | 149-157 |
|---------------|-----------------------------|---------|

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ

- | | | |
|---------------------------------------------------|-----------------------|---------|
| - Հայ Հոգեւոր Երաժշտութեան Պատմութեան Հետեւորդ | Սամուէլ Քեօշկէրեան | 157-164 |
|---------------------------------------------------|-----------------------|---------|

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

- | | | |
|------------------------------------------|--------------------------------------------|---------|
| - «Հաւատք, Յոյս, Սէր» Յակոբ Ներսոյեան | Անգլ. Թրգմն. Յովնան Սրկ. Բաղդասարեան | 165-168 |
|------------------------------------------|--------------------------------------------|---------|

ՊԱՏՄԱԿԱՆ

- | | | |
|---------------------------------------------|-------------------------|---------|
| - Տեղեկագիր Սերաստիոյ Առաջնորդարանի 1913 | Թորգոմ Եպս. Առաջնորդ | 169-176 |
|---------------------------------------------|-------------------------|---------|

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

177-181

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

- | | | |
|--------------------|---------------------------|---------|
| - Ճակատագիրն Հայոց | Զենոր Քհնյ. Նալպանտեան | 182-187 |
| - Գտնելու Հանոյքը | Ն.Շ. | 187-190 |

ՏԵՂԵԿԱՆՔ ԿՈՐԻԻՆ ԱԲՂ. ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆԻ

- | | |
|--------------------------------------------------------------|---------|
| - Հանգիստ Յովհաննէս-Պօղոս Բ. Պապի | 191-192 |
| - Ընտրութիւն Պենետիք XVI Պապի | 192-193 |
| - Հայոց Յեղասպանութեան 90 ամեակ Գիտաժողովներ եւ Սգահանդէս | 194-197 |
| - Երբայական Համալսարանում Յուշ-երեկոյ | 198 |
| - Կ. Պոլսոյ Մեսրոպ Պատրիարքի Այցը Երուսաղէմ | 198-199 |

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

200-201




Կիր. Մաղկազարդ, 24 Ապրիլ 05.- Մաղկազարդի բափօր Ա. Յարութեան Տաճարի մէջ:



Աւագ Բշ. 25 Ապրիլ 05.- 90 ամեակ 1915ի Հայկական ցեղասպանութեան:
Հոգեհանգիստ, Բափօր դէպի Արարայի Յուշարձան. Սգահանդէս:




Կիր. 24 Ապրիլ 05.- Դոնորացի Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ: Վարագոյր
բացողներու առումները ընթերցող Աւետիս Արղ. Իփրանեան: Աւագ Իսրայէլի
Վարագոյրին առջեւ ծնկաչոյ՝ «Բագ մեզ Տէր» երգողներ (Զախէն Աջ) Թէոդորոս Արղ.
Զախարեան, Լուսարարապետ Նուրիան Արթ. Մանուկեան, Բագրատ Արղ. Պուրնէճեան:
Վարագոյրին ետին՝ Թորգոմ Պատրիարք:



Աւագ Երեւշաբթի, 26 Ապրիլ, 05.- Ս. Յարութեան Տաճարի ըակին Ս. Յովհաննէս Աւետարանչի մատուռին մէջ Ս. Պատարագ, եւ Սրբոց Թարգմանչաց Վարժարանի աշակերտներ Ս. Հաղորդութիւն կը ստանան:




Աւագ Ուրբաթ գիշեր, 29 Ապրիլ 05.- Կ. Պոլսոյ Ֆերիֆէոյի Սրբոց Վարդանանց Դպրաց-Երգչախումբի համերգ ժառ. Վարժարանի սրահին մէջ: Ղեկավար՝ Ատրուշան Հալանեան:



Աւագ երկուշաբթի, 25 Ապրիլ, 05.- 90 ամեակ 1915ի Հայկական Յեղասպանութեան:



Կարգ Թաղման Աւագ Ուրբաթ, 29 Ապրիլ 05.- Կ. Պոլսոյ Մեսրոպ Պատրիարք
Մուրաֆեան մասնակցեցաւ Թաղման Կարգին, «Սուրբ Աստուած»ի ծնկաչոփ
երգեցողութեան, եւ «Խաչի Քո Քրիստոս» երգին երիցս խնկարկութիւն ընելով:
Թորգոմ Պատրիարք նախագահեց նախատօնակին:



Աւագ Հինգշաբթի, 28 Ապրիլ, 05.- Ռոմիուայի արարողութիւնը Սրբոց Յակոբեանց Մայր Տանարի Աւագ Խորանին վրայ, հանդիսապետ՝ Թորգոմ Պատրիարք, դասին մէջ՝ Կ. Պոլսոյ Մեսրոպ Պատրիարք Մուրաֆեան:



Աւագ Շաբաթ, 30 Ապրիլ 05.- «Լուսահանութեան» արարողութիւն: Մեղրամոմով կնկում Գերեզմանի մուտքի դրան: Լուսահան Բագրատ Արզ. Պուրնէմեան լուցուած մոմերու փունջով դուրս կու գայ Յիսուսի Գերեզմանէն, եւ ապա Ասորիներու եւ Ղպտիներու հետ եռադարձ թափօրը կը զլխաւորէ:



Աւագ Շարաբ, 30 Ապրիլ 05.- Յիսուսի Դերեզմանէն «Լուսահանութեան» արարողութիւն: Հայոց Վանքի Աւագ Թարգման Դուսան Վրդ. Ալեանեան, Միաբանութեան անդամներուն եւ ուխտաւորներուն, եւ Ս. Յարութեան Տաճարի Մահմետական երկու պահակներուն հետ, Տաճարի փակ դրան պաշտօնական բացումը կը կատարեն ժամը 9ին: Ժամը 11ին ուխտաւորաբար ներկայ Մեսրոպ Պատրիարք Մուրաֆեան (Իսթանպուլէն), Լուսարարապետ Նուրիան Սրբազանին եւ Միաբանութեան հետ մուտք կատարեցին Տաճարէն ներս:



Ջատկի Կիրակի, 1 Մայիս 05.- Առաւօտուն, Կ. Պոլսոյ Մեսրոպ Պատրիարք Մուրաֆեանի գլխաւորութեամբ Միարանութիւնը Ս. Յարութեան Տաճար մուտք գործեց, եւ Քրիստոսի Գերեզմանին վրայ Արցախի Առաջնորդ Պարգեւ Արք. Մարտիրոսեան Ս. Պատարագ մատուց, երգեցողութեամբ Սրբոց Վարդանանց դպրաց-երգչախումբի:



Աւագ Շաբաթ, 30 Ապրիլ 05.- «Լուսահանութեան» արարողութիւն: Վերադարձ Ս. Գերեզմանէն դէպի Սրբոց Յակօրեանց Մայր Տաճար, հանդիսապետութեամբ Կ. Պօլսոյ Պատրիարք Տ. Մեսրոպ Արք. Մուրաֆեանի որ Յարութեան Աւետարանի ընթերցումով կ'աւետէ «Բրիստոս յարեաւ ի մեռելոց»:



Զատիկի Երկուշաբթի, 2 Մայիս 05.- Ուխտաւորաց պատարագը մատույց Կ. Պոլսոյ Ամեն. Մեսրոպ Պատրիարք Մուրաֆեան, որ Ս. Խաչի մասունքն ի ձեռին գլխաւորեց եռադարձ քափօրը Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ:



Զատիկի Կիրակի, 1 Մայիս 05.- Յետ միջօրէի ժամը 4ին Վանքի մեծ բակին մէջ կը կատարուի «Անդաստան»ի արարողութիւն:



Ջատկի Գշ. 3 Մայիս 05.- Ջատկուան տօնին առիթով շնորհաւորանքի համար Պատրիարքարան այցելեցին Հոգեւոր Պետեր եւ Ներկայացուցիչներ Լատինաց Պատրիարքութեան, Յրանչիսկեան Միարանութեան, Կարողիկէ, Լուտերական, Անկլիկան եւ Ղպտի, Ասորի, Հապէշ Ուղղափառ եկեղեցիներու, եւ պետական ներկայացուցիչներ:



Ջառակի երկուշաբթի, 2 Մայիս 05.- Ռիտուալային պատարագ, եւ հոգեւորձ բաժնի:




Կիրակի 26 Մարտ 2000.- Երուսաղեմի Սրբոց Յակոբեանց Մայր Տանարի Դաւիթին մէջ, Յովհաննէս-Պօղոս Բ. Պապին կը փարի հայ մանուկ մը:



9 Ապրիլ 05, Վատիկանի մէջ, հանգուցեալ Յովհաննէս-Պօղոս Բ. Պապի բաղման առիթով, (Չախէն Աջ) Խաժակ Արք. Պարսամեան, Կ. Պոլսոյ Մեսրոպ Պատրիարք Մուրաֆեան, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ., Հ.Հ. Վարչապետ Անդրանիկ Մարգարեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա., Վատիկանի, Ֆրանսայի Հ.Հ. Դեսպան եղուարդ Նալպանտեան, Նարեկ Եպս. Ալեմէզեան:



Համբի Կարողիկէ եկեղեցւոյ նորընտիր Սրբազան Պապը Նորին Սրբութիւն Տ.
Պենետիք XVI:



Կիրակի 26 Մարտ 2000.- Երուսաղեմի Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Թորգոմ
Պատրիարք բարի գալուստ կը մաղթէ Յովհաննէս-Պօղոս Բ. Պապին, որուն ընկերացող
Քարտիճակներու շարքին է Երուսաղեմի Լատին Պատրիարք Ամեն. Տ. Միշէլ Սապափահ:



Յուշահանդես 1915ի Հայկական եղևոնի 90 ամեակին առիթով, Երուսաղէմի
 երրայական Համալսարանի Արեւելեան եւ Հայագիտական Բաժանմունքի նախա-
 ձեռնութեամբ (2 Մայիս 05):



1915ի Հայկական եղեռնի 90 ամեակին առիթով, համաժողովներ երուսաղեմի Վան
Լիր ակադեմիական հաստատության (7 Ապրիլ 05) եւ ժառ. Վարժարանի սրահին մեջ
(11 Ապրիլ 05):



ԵԶ. 3 Մարտ 05.- Ընծանուէր Արդ. Բարախանեանի մասնակցութիւնը իւղաներկ
նկարներով, երբք արուեստագէտներու ցուցահանդէսին, երուսաղէմի պատկերասրահներէն
մէկուն մէջ:

«Սիոն» Ամսագրի բաժանորդագրութիւն

- Սիոն ամսագրի խմբագրութիւնը կը փորձէ սրբագրել եւ ամբողջացնել ցամկը իր բաժանորդներուն:
- Եթէ կը ցամկաջ որ ձեր անունը ունենամք ցամկիմ մէջ մեր բաժանորդներում, համեցեք մերցելի կտրօմը յստակ եւ զիխագիր տառերով ամբողջացնել եւ փութով մեր մօր հասցէիմ ղրկել: P.O.Box 14235 Jerusalem, Old City, Isr.
- Նախորդ տարիներում Սիոն ամսագիրը ձրի ղրկուած է հարիւրներով հասցէներու: Նկատի առած մամաւամդ գումաւոր էջերու տպագրութեամ սղութիւնը պարտաւոր ենք ձեզմէ բաժանորդագիմ խմղրել:

Խմբագրութիւն

ՊԱՏՐԻԱՐԺՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱԴԷՄ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԻՈՆ

Անուն.- -----

Տիտղոս.- -----

Կազմակերպութիւն.- -----

Հասցէ.- -----

Համեցեք մերփակ գտնել մեր փոխգիրը-----

Իրր բաժանորդագիմ ՍԻՈՆի -----

ՊԱՐՁ կամ ՕԴԱՅԻՆ ԹՂԹԱՏԱՐՈՎ ՂՐԿԵԼՈՒ -----

Ստորագրութիւն

Բաժնեգիմ.-

Պարզ Թղթատարով

US\$108*

US\$200

Մէկ տարի

Երկու տարի

Օղալիմ Թղթատարով

US\$ 128

US\$ 240

*Կամ՝ ձեր երկրիմ համապատասխամ գումարով:



NOTICE TO SUBSCRIBERS

The Armenian Patriarchate of Jerusalem is drawing up a new updated list of subscribers to its official gazette, SION.

In order to ensure that your name is on the list, you are kindly requested to fill in the form below and send it back to us, with your remittance, as soon as possible.

Please write to our new address: POB 14235, Jerusalem, Israel.

We would like to point out that while in previous years it has been the custom to distribute the gazette virtually free of charge to hundreds of subscribers, escalating costs and, particularly, the introduction of colour printing, has imposed upon us the obligation of trying to recover part of these costs.

The Editor

"SION" SUBSCRIPTION RENEWAL FORM

| | | | | | | | | | |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------------|----------|------------------|------------------|------------------|-------------------|----------------------------------------|--|
| Name: _____ Title: _____ Organisation: _____ | Address: _____ _____ _____ | | | | | | | | |
| Please enter my/our subscription for "SION," for a period of _____ year(s). My/our check for _____ covering the cost of subscription and Surface/Airmail charges, made out to the Patriarchate, is enclosed. | | | | | | | | | |
| Signature: _____ Official seal: _____ | <table border="1" style="width: 100%; border-collapse: collapse;"> <tr> <td style="text-align: center;">RATES: Surface Mail</td> <td style="text-align: center;">Air Mail</td> </tr> <tr> <td style="text-align: center;">1 year: US\$108*</td> <td style="text-align: center;">1 year: US\$ 128</td> </tr> <tr> <td style="text-align: center;">2 years: US\$200</td> <td style="text-align: center;">2 years: US\$ 240</td> </tr> <tr> <td colspan="2" style="text-align: center;">*Or equivalent in your local currency.</td> </tr> </table> | RATES: Surface Mail | Air Mail | 1 year: US\$108* | 1 year: US\$ 128 | 2 years: US\$200 | 2 years: US\$ 240 | *Or equivalent in your local currency. | |
| RATES: Surface Mail | Air Mail | | | | | | | | |
| 1 year: US\$108* | 1 year: US\$ 128 | | | | | | | | |
| 2 years: US\$200 | 2 years: US\$ 240 | | | | | | | | |
| *Or equivalent in your local currency. | | | | | | | | | |